

ԹԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

(Անահիտ Մնացականի Մխիթարյան)

Բանաստեղծուհի, թարգմանչուհի, լրագրող:

ՀԳՄ անդամ է 2002-ից

Ծնվել է 1952 թվականի փետրվարի 9-ին, Երևան քաղաքում, գրող Մնացական Թարյանի ընտանիքում: 1959-1969 թվականներին սովորել և ավարտել է Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան N 82 միջնակարգ դպրոցը, 1969-1974 թվականներին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը, իսկ 1979-1981 թվականներին՝ ՀԿԿ Կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի համալսարանի գաղափարախոսական կադրերի ֆակուլտետի փիլիսոփայության բաժինը:

Տարիներ շարունակ զբաղվել է մանկավարժական, լրագրողական ու խմբագրական գործունեությամբ՝ միշտ և ամենուր այն զուգորդելով գրական-ստեղծագործական աշխատանքին: 1974-1976 թթ.-ին աշխատել է Հրագրանի շրջանի Սուլակ գյուղի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, 1976-1981 թվականներին՝ «Հրագրան» շրջանային թերթի խմբագրությունում՝ որպես գյուղատնտեսության բաժնի վարիչ: 1982 թվականից աշխատել է «Երեկոյան Երևան» թերթի, այնուհետև՝ «Պիոներ» (ներկայումս՝ «Աղբյուր») ամսագրի խմբագրություններում: 1985-1991 թվականներին նախ՝ որպես խմբագիր, ապա՝ որպես հատուկ աշխատանքի գծով ավագ տեսուչ, աշխատել է ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեում: 1992-2022 թվականներին աշխատել է ՀՀ կառավարության (ներկայումս՝ ՀՀ վարչապետի) աշխատակազմում՝ որպես գլխավոր մասնագետ-խմբագիր:

Նրա ստեղծագործությունները՝ գրված թե՛ մեծերի և թե՛ մանուկների համար, մշտապես տպագրվել են մամուլում, գրական տարեգրքերում, ավանանախներում, անթոլոգիաներում, հնչել՝ ռադիոյով ու հեռուստատեսությամբ: Առաջին արձակ գործը՝ «Միամիտ էշը» հեքիաթը, տպագրվել է 1964 թվականի մայիսին՝ «Պիոներ» ամսագրի 5-րդ համարում, իսկ առաջին բանաստեղծությունը՝ «Աքլորի վիշտը», հրատարակվել է «Օրհեոնակ» («Պիոներ») ամսագրի 9-րդ համարում 1964 թվականի սեպտեմբերին: Անահիտ Թարյանը հեղինակ է շուրջ երկուսուկես տասնյակ բանաստեղծական գրքերի: Կատարում է նաև գեղարվեստական թարգմանություններ: 2012 թվականին «Արձագանք» ռադիոկայանում

ձայնագրվել և թողարկվել է նրա «Իրիկնահաց» ձայնասկավառակը՝ ասմունքող Լիանա Զուրաբյանի ընթերցմամբ:

Անահիտ Թարյանը 1980 թվականից՝ նախկին ԽՍՀՄ, ապա Հայաստանի ժուռնալիստների միության, 1997-ից՝ Ռազմածովագիրների միջազգային ընկերակցության, իսկ 1999 թվականից Լեոնային Ղարաբաղի Հանրապետության գրողների միության անդամ է:

Հայաստանի գրողների միության նախագահության ամենամյա՝ 2017 թվականի Վախթանգ Անանյանի անվան մրցանակը (մանկական) շնորհվել է Անահիտ Թարյանին՝ «Գիտնական իշուկը» գրքի համար, «Ես քո զինվորն եմ, Հայաստան» գրքի համար շնորհվել է Հայաստանի գրողների միության և ՀՀ պաշտպանության նախարարության 2017 թվականի համատեղ մրցանակը (պոեզիա, 2-րդ մրցանակ), իսկ Հայաստանի գրողների միության 2022 թվականի Ծաղկաձորի ստեղծագործական տան Եղիշե Չարենցի անվան մրցանակն Անահիտ Թարյանին է շնորհվել «Մատյան սիրո» (պոեզիա) գրքի համար, և նա պարգևատրվել է համապատասխան մեդալով: Հայաստանի գրողների միության նախագահության որոշմամբ Անահիտ Թարյանը հայ գրականությանը մատուցած ծառայությունների համար 2017 թ. օգոստոսի 23-ին պարգևատրվել է «Գրական վաստակի համար» մեդալով: ՀՀ վարչապետի 2017 թ. նոյեմբերի 3-ի N 1260-Ս որոշմամբ պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով, իսկ ՀՀ վարչապետի 2013 թ. դեկտեմբերի 27-ի N1247-Ս որոշմամբ՝ ՀՀ վարչապետի շնորհակալագրով:

«Ով ով է. հայեր» կենսագրական հանրագիտարանում ընդգրկված են Մխիթարյանների ընտանիքից միաժամանակ երեքը՝ հայրը՝ գրող Մնացական Թարյանը, դուստրը՝ բանաստեղծուհի Անահիտ Թարյանը, և որդին՝ ակադեմիկոս Նվեր Մխիթարյանը:

ԵՐԿԵՐ

1. Ես, դու և աշխարհը («Յոթ անուն» ժողովածու, բանաստեղծություններ): Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, 248 էջ, տպ.՝ 3000:
2. Երկնքի տատիկը (բանաստեղծություններ): Եր., «Սովետական գրող» հրատ., 1986, 44 էջ, տպ.՝ 5000:
3. Բախտախաղ (բանաստեղծություններ): Եր., «Խորհրդային գրող» հրատ., 1989, 112 էջ, տպ.՝ 3000:
4. Գրական համալսարան (պոեզիա, արձակ և թարգմանություններ, ժողովածուում բանաստեղծություններ ունի նաև Անահիտ Թարյանը): Եր., «Երևանի պետական համալսարան» հրատ., 1981, 182 էջ, տպ.՝ 1000:

5. Ամաչկոտ շնիկը (բանաստեղծություններ): Եր., «Հայաստանի բաց համալսարան» հրատ., 1997, 40 էջ, տպ.՝ 3000:
6. Իմ լավ դպրոց (բանաստեղծություններ): Եր., «Վան Արյան» հրատ., 2001, 40 էջ, տպ.՝ 3000:
7. Հավատո հանգանակ (բանաստեղծություններ): Եր., «Միշտ ներկա» հրատ., 2003, 184 էջ, տպ.՝ 500:
8. Միրում եմ քեզ, մանկապարտեզ (բանաստեղծություններ): Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2004, 48 էջ, տպ.՝ 3000:
9. Ձոն հայոց լեզվին (բանաստեղծություններ, նվիրված է հայոց լեզվի 1600-ամյակին, ժողովածուում գործ ունի նաև Ա. Թարյանը): Եր., ՀԳՄ հրատ., 2006, 160 էջ, տպ.՝ 1500:
10. Հեքիաթ իսկական Կարուչկարի մասին (բանաստեղծություններ, չափածո հեքիաթներ): Եր., «Լուսակն» հրատ., 2007, 122 էջ, տպ.՝ 500:
11. Արդի հայ քնարերգություն, Հայաստան-Արցախ, Ա (բանաստեղծություններ, ժողովածուում գործեր ունի նաև Ա. Թարյանը): Եր., ՀԳՄ հրատ., 2008, 520 էջ, տպ.՝ 1000:
12. Մանկական երգերի ժողովածու (Լիլիթ Համբարձումյան, Կապույտ հեքիաթ, երգերի մի մասը՝ Անահիտ Թարյանի տեքստերով): Եր., «ԷդիթՊրինտ» հրատ., 2010, 80 էջ, տպ.՝ 500:
13. Դափնեպսակ Չարենցին (բանաստեղծություններ, ժողովածուում գործ ունի նաև Ա. Թարյանը): Եր., ՀԳՄ հրատ., 2011, 108 էջ, տպ.՝ 500:
14. Արևային աստղաթափ (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2012, 240 էջ, տպ.՝ 500:
15. Հրեշն ու էշը (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2012, 48 էջ, տպ.՝ 1000:
16. Ա՛յ քեզ գրավատո՛ւն (չափածո հեքիաթ): Եր., «Անտարես» հրատ., 2013, 28 էջ, տպ.՝ 2000:
17. Ձմռան երգը (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2014, 44 էջ, տպ.՝ 1500:
18. Հարյուր ճերմակ վարդ՝ սիրո և հիշատակի խոնարհումով (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2015, 120 էջ, տպ.՝ 3000:
19. Ուրախության դասագիրք (արձակ և չափածո երգիծանք, ժողովածուում գործեր ունի նաև Ա. Թարյանը): Եր., «ՎՄՎ-ՊՐԻՆՏ ՍՊԸ» հրատ., 2015, 232 էջ, տպ.՝ 300:
20. Անմիտ ծիտն ու իր ծի՛վ-ծի՛վը... (ուկրաինական գրույց): Եր., «Լուսակն» հրատ., 2016, 24 էջ, տպ.՝ 2000:

21. Ես քո զինվորն եմ, Հայաստան (բանաստեղծություններ): Եր., «Անտարես» հրատ., 2017, 84 էջ, տպ.՝ 3000:
22. «Գիտնական» իշուկը (բանաստեղծություններ): Եր., «Ծիծեռնակ» հրատ., 2017, 48 էջ, տպ.՝ 2000:
23. Թթենին (բանաստեղծություններ, չափածո փոխադրություններ): Եր., «Ծիծեռնակ» հրատ., 2019, 74 էջ, տպ.՝ 2000:
24. Ատամնահատի՛կ, ատամնահատի՛կ... (պոեմ): Եր., «Անտարես» հրատ., 2020, 40 էջ, տպ.՝ 2000:
25. Ես և հայոց այբուբենը (բանաստեղծությունների շարք): Եր., «Լուսակն» հրատ., 2020, 52 էջ, տպ.՝ 2000:
26. Սև շրջան (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2021, 128 էջ, տպ.՝ 3000:
27. Մատյան սիրո (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2022, 300 էջ, տպ.՝ 3000:
28. Киса-актриса (բանաստեղծություններ, ռուսերեն թարգմանությունը՝ Ալբերտ Նալբանդյանի): Եր., «Լուսակն» հրատ., 2022, 32 էջ, տպ.՝ 2000:
29. Ես եմ հիմա... (ժամանակակից հայ գրողները Չարենցին՝ նվիրված պոետի ծննդյան 125-ամյակին, պոեզիա, արձակ, գրականագիտություն, խոհագրություն: Ժողովածուում բանաստեղծություն ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Վան Արյան» հրատ., 2022, 208 էջ:
30. Օղապարիկ արևը (պոեզիա և արձակ, ժամանակակից հայ մանկագիրների սույն անթոլոգիայում բանաստեղծություններ ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Վան Արյան» հրատ., 2022, 160 էջ:
31. Սրտագիր (արդի հայ պոեզիա, ՀԳՄ անդամ գրողների բանաստեղծություններ: Ժողովածուում գործեր ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Արմավ» հրատ., 2022, 236 էջ:
32. Պապ ու տատի թոռները (պոեզիա և արձակ, Հայաստանի ու Արցախի հայ մանկագիրների սույն ժողովածուում բանաստեղծություններ ունի նաև Ա. Թարյանը): Եր., «Վան Արյան» հրատ., 2022, 148 էջ:
33. Детская литература. Серия "Современная литература стран СНГ" (ժամանակակից հայ մանկագիրների սույն ժողովածուում բանաստեղծություններ ունի նաև Ա. Թարյանը): Մոսկվա, ОГИ հրատ., 2022, 960 էջ, տպ.՝ 2400:
34. Ջութակահար ծղրիղը (բանաստեղծություններ): Եր., «Լուսակն» հրատ., 2023, 52 էջ, տպ.՝ 2000:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խաղաղ Դոնի բանաստեղծներ (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, 140 էջ, տպ.՝ 3000:
2. Մահթումկուլի-Ֆրագի, Հատընտիր (մի մասը թարգմանել է
3. Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, 104 էջ, տպ.՝ 3000:
4. Ալեքսանդր Պուշկին, Ընտիր երկեր («Ռուս դասականների գրադարան» մատենաշարով, մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1985, 568 էջ, տպ.՝ 50.000:
5. Սամեդ Վուրդուն, Մեր և ներշնչանք (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Սովետական գրող» հրատ., 1986, 340 էջ, տպ.՝ 5000:
6. Շոթա Նիշիանիձե, Դիմակների մնջախաղ (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Խորհրդային գրող» հրատ., 1989, 108 էջ, տպ.՝ 3000:
7. Վրաց երկինք («Համաշխարհային գրականություն պատանիների համար» մատենաշարով, մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Արևիկ» հրատ., 1990, 768 էջ, տպ.՝ 10.000:
8. Պեյո Յավորով, Ամպհովանու հետքերով (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Նաիրի» հրատ., 1992, 160 էջ, տպ.՝ 3000:
9. Պեյո Յավորով, Բանաստեղծություններ. Վիտոշայի փեշերին, արձակ էջեր. հուշեր Յավորովի մասին (մի մասը թարգմանել է Ա. Թարյանը): Եր., «Նաիրի» հրատ., 2009:
10. Եզոպոսի և Լաֆոնտենի առակները (գիրք-թատրոն՝ հիանալի տարածապատկերներով, գրեթե ամբողջությամբ՝ Ա. Թարյանի չափածո փոխադրությամբ): Եր., «Անտարես» հրատ., 2017:
11. Ում ձագուկն է, ում տնակն է (խոսող գիրք՝ կենդանիների ու թռչունների ձայներ, Ա. Թարյանի թարգմանությամբ): Եր., «Անտարես» հրատ., 2019: Մարյանա Սավկա, Ծեր Առյուծի հեքիաթը (Ա. Թարյանի թարգմանությամբ), Եր., «Անտարես» հրատ., 2022, 40 էջ, տպ.՝ 650:

ԱՆԱՀԻՏ ԹԱՐՅԱՆ

ՄՍՏՅԱՆ ՍԻՐՈ

Բանաստեղծություններ

2022

Նվիրում եմ ամուսնուս՝

ՀՐԱԶԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ պայծառ հիշատակին:

Ի հակադրություն այս դժգույն ժամանակների և մռայլ իրականության՝ մարդկանց սրտերն ու հոգիները սիրով և երջանկությամբ պարուրող, լույսով ու հավատով համակող սիրային բանաստեղծությունների այս գողտրիկ ժողովածուն, որը կրում է «Մատյան սիրո» խորագիրը, անվանի բանաստեղծուհի Անահիտ Թարյանի ստեղծագործական նոր ձեռքբերումն ու անակնկալ նվերն է իր հավատարիմ ընթերցողներին: Այս գիրքն, իրավամբ, մի յուրօրինակ և իսկական սիրո մատյան է, որում սկզբից մինչև վերջ գեղարվեստական խոսքի գունեղ ներկապնակով ներկայացվում և փառաբանվում է մարդկային մեծ ու ճշմարիտ սերը՝ իր ամենաբազմազան դրսևորումներով, հույզերի և ապրումների տարատեսակ նրբերանգներով, աստվածատուր սիրո արևաճաճանչներով, որոնք լուսավորում են մեր կյանքն ու ջերմացնում վիստ հոգիները...

ՄԻՐՈՒՄ ԵՄ

Լույսի հետ եկավ սերը.

Բե՛ր՝ սարին գրեմ՝ սիրո՛ւմ եմ...

Դարձավ իմ սրտի տերը.

Այս ծառին գրեմ՝ սիրո՛ւմ եմ...

Թևեցի արևի շուրջ.

Մեր դարին գրեմ՝ սիրո՛ւմ եմ...

Թե մեռնեմ՝ մեռնեմ սիրուց.

Իմ քարին գրեն. «Սիրո՛ւմ եմ...»:

ՍԵՐԸ

Ա՛խ, սերը... սերը կյանք է.

Այն կյանքից գրկել չի կարող,

Կյանքի պես քաղցր ու թանկ է.

Սև մահը գրկել չի կարող...

Ճշմարիտ սերն արև է.

Բարկ սրտում ցրտել չի կարող,

Թե ցրտեց՝ տերը իսն է.

Աստվա՛ծ իսկ փրկել չի կարող...

ԱՍՏՎԱ՛Ծ Է ՍԵՐԸ

Գիրքն էլ ծաղիկ է՝ վարդ է բազմաթերթ,
Ամեն մի թերթը թերթիկ է վարդի,
Խորախորհուրդ է, բույր է բյուրաշերտ,
Վարդափուշ է և դրախտի այգի...

Վարդն էլ իր հերթին բազմաթերթ գիրք է՝
Թերթ առ թերթ բացվող, ինչպես՝ էջ առ էջ...
Կյանքի խորհուրդ է, ապրելու կիրք է,
Մտքի վարսանդ է ու սրտի առէջ...

Անշուշտ, սա կյանքն է՝ ծալքերով իր բյուր.
Կենաց մատյան է ու սիրո ծաղիկ,
Իր լույս ու մութին խառնած բույր ու թույր՝
Երկրին է կապում տիեզերքը պիրկ...

Բայց ամենից շատ՝ դա սերն է, որ կա,
Խորն ու բազմաշերտ, շքեղ, լուսավոր...
Սերն աստվածային երբ էլ այցի գա,
Արև է դառնում կյանքը գիսավոր...

Սերն իմաստագույն գիրք է բյուրաթերթ
Եվ բազմաթերթիկ վարդ է քնքշաբույր,
Սերը մեծ կյանքն է՝ բազմաձալ, շերտ-շերտ,
Աստվա՛ծ է սերը, անմահության քույր...

ՄԻՆՉԵՎ ՎԱՂԸ

«... Հարբած ըլիմ մինչև էգուց»:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Մինչև վաղը մի գիշեր է բաժանում մեզ,
Մինչև վաղը մեր տների միջև նորից
Կփովի ու կհավաքվի ճանապարհը,
Կուսակրոն ժամանակն իր ձեռքով անտես
Ինձ կիրի այս նույն տեղը և այն պահը,
Երբ ժպիտդ լուսացնցուղ կողողի ինձ...
Մինչև վաղը...

Ժամանակն այս բրինձ է մի՛ փոքրի՛կ-փոքրի՛կ,
Գիշերվա սուր, առնետային
Ատամի տակ ընկած փոքրի՛կ-փոքրի՛կ բրինձ...
Է՛լ քո վախը
Ո՞ր տարագով էս ընկալեն և ո՞ր գույնով,
Տարագները երբ շատ են հին,
Եվ գույներն են անխորք, ջրիկ...
Քո այն վախը,
Որ, ներծծված սիրո թույնով,
Ծնվում է միշտ մեր բաժանման վերջին պահին
Ու գառամում մի չարչարված գիշերվա մեջ.
Չի՛ դիմանում մինչև վաղը...
Քո այն վախը,
Որ զարթնում է, սարսափահար թոչում է վեր
Մյուս օրն ինձ չտեսնելու
Հնարավոր անլուր դավից,
Մյուս օրն ինձ կորցնելուդ մրմուռ ցավից
Ու տիրատենչ,
Ընտելացված գայլուկի պես հեզ ու հլու,
Հետևում է ինձ անդադար, որպես սովեր,
Պտտվում է շուրջս անվերջ...
Մի՛ զարմացիր, որ գալիս է իմ ծիծաղը,
Երբ ամեն օր քո համբույրը հրաժեշտի
Դնում էս դու իմ շուրթերին՝
Որպես կնիք, որպես կողպեք՝
Շրթունքների համար ուրիշ,
Որպես լքված կարապի երգ...
Ավելի մեծ ժամանակ է հարկավոր ինձ,
Որ իմ սիրտը կյանքո՛վ, կյանքո՛վ մի լավ ճշտի՛
Քո համբույրը թորած ջո՛ր է, թե՞ կենսավիշ...
Դե՛, ի՞նչ կա, որ... ե՛կ բաժանվենք առանց թախիժ՝
Մինչև վաղը,
Ու թո՛ղ նորից շարունակվի մեր այս խաղը,
Ու թո՛ղ նորից շարունակվի քո այն վախը,
Որ ապրում է մինչև վաղը...

Վերջապես անցավ...
Ահա՛, մոտեցավ ժամը երեքը.
Օրվա ժամերից
Քեզ համար և ինձ՝
Միակն ու մեկը...
Այս պահին հույսով,
Ծովացող հույզով
Սպասում ես ինձ.
Միրտդ մե՛կ դողում,
Մե՛կ էլ ճովողում.
Երգում է նորից:
Մտովի արդեն
Ինձ հետ ես. մոտ եմ,
Անչափ մոտ եմ քեզ...
Գժվել է սիրտդ,
Վառվում է գիրկդ
Կարոտից հրկեզ:
Զգում ես հնք...
Զգում ես թևքս,
Որ նստեմ կողքիդ,
Թեև գիտես, որ
Խորթ եմ, անսովոր՝
Ինձ գգվող շողքիդ:
Միրո վառող ես...
Անհույս կարոտ ես
Զգլխիչ բույրիս...
Մտովի դու արդ
Ճաշակում ես վարդ
Նեկտարն համբույրիս...
Մինչդեռ այս պահին
Խելքիս մոտ սիրտն իմ
Նման է գերու.
Նա է զսպում ինձ...
Եվ հիմա քեզնից
Հեռու եմ, հեռու...
Ա՛խ, շատ կուզեի՝
Գիրկդ սուզեի
Գլուխն իմ հոգնած

Ու պատմեի քեզ
Պերճախոս ու հեզ
Աչքերով իմ թաց,
Որ ես զգացի
Քո սրտի լացի
Արցունքի համը,
Երբ սողաց, անցավ,
Թողեց վերք ու ցավ
Հանդիպման ժամը...

ՀԱՂՈՐԴԱԿԻՅ ԱՆՈԹՆԵՐ

Սպասեցի՛ր դու ինձ, սպասեցի՛ր,
Սպասեցիր երկար, կարոտակեզ...
Դու քո սիրով իմ ցավն սպանեցիր,
Իսկ ես, ա իս, այդպես էլ չհասա քեզ...

Եվ լաց լացեց իմ սիրտն անհանգրվան,
Ա իս, լաց լացեց նաև քո սիրտը մեծ.
Իմ դառն արցունքները սրտի՛դ ընկան,
Քո արցունքն էլ հոսեց ի՛մ սրտի մեջ...

ՄՈՐՄՈՔ

Ինչ-որ մեկն ասաց. «Դու ինձ շա՛տ ես պետք,
Եվ ես առանց քեզ ապրել չեմ կարող...»:
Ես միայն անփույթ ժպտացի, անցա...
Սրտիս խորանում մոմարցունք մի հետք
Թողեց այդ խոսքը՝ մոմի բոց մարող,
Ու ես այդ հետքն էլ սրբեցի անցավ:

Ինչ-որ մեկն ասաց... Բայց վաղո՛ւց էր դա.
Նժույզն օրերի փախել է հեռու,
Ես իմ մենության վանքում եմ անլույս.
Սեր-երազանքիս հավքը չգտա...
Հոգուս զանգերը ե՞րբ են լռելու.
Անսեր մեռնում են օրերն իմ անհույզ...

Եվ հիմա սրտիս մռայլ խորանում
Ես խարխափելով փնտրում եմ համառ
Այն սիրո խոսքից մոմարցունք մի հետք...
Ցավս մխում է, վերքս՝ խորանում,
Տնքում է սիրտս օրերում խավար.
«Դու ինձ շա՛տ ես պետք... դու ինձ շա՛տ ես պետք...»:

ՉԵՆ ՑՐՏԱՀԱՐՎԻ

Ձյունն այս տարի էլ եկավ ու իր տակ
Թաղեց հույսերիս դալար շիվերը.
Սիրո աղավնու տոտիկներին տաք
Կարո՛տ մնացին բախտիս քիվերը:

Բյուրեղ աչքերի պաղ բոցում կանչող
Երազանքներս դարձրեց պատիք
Եվ իր ցուրտ շնչով՝ ինձ հեռվից տանջող
Երջանկությունից թողեց մի փաթիլ...

Դե՛, ի՞նչ... ձմեռ է... և ձյունն ավազակ
Թեկուզ և իլեց կանաչ օրերս,
Բայց անկարող է խցանել ազատ
Ոգուս ճամփեքն ու կապույտ ձորերս...

Ի՞նչ փույթ, թե ձյունն իր ճերմակ սարսուռով
Կյանքիս ճյուղերին էլի կփարվի.
Կոփված հավատիս արմատները խոր
Վազի պես՝ ձյան տակ չեն ցրտահարվի...

ԻՄԿ ԻՄ ԳԱՐՈՒՆԸ...

Մի գիշերվա մեջ
Հարսնացան այգուս ծառերը բոլոր.
Աչքերով մեծ-մեծ
Նայեցի նրանց՝ տխուր ու մոլոր...

Նրանց գարունը
Այնպե՛ս շուտ եկավ ու միանգամից...

Իսկ իմն իր հունը
Փոխել է արդեն ու չի գտնում ինձ...

ԻՄ ԼԱՎ ԳԱՐՈՒՆ

Եկար կրկին երգով կանաչ,
Գարուն, աղջիկ՝ կ'իմ երազի,
Եկար շոայլ, եկար դու բաց՝
Որպես արցունք զարթնած վազի:

Եկար փափուկ, թավշեմուճակ,
Եկար ինձ մոտ այնպե՛ս զգուշ...
Բայց, դե՛, նորից ընկավ խուճապ
Իմ սրտի մեջ՝ հասուն ողկույզ:

Նորից սիրտս թռավ տեղից՝
Ոնց լուսայգը տեսած արտույտ,
Նորից գտավ ամեն տեղ ինձ
Երազանքիս հավքը կապույտ:

Ինձ բռնեցի տենչերի մեջ՝
Հույսի վերջին սահմանն անցած,
Հոգիս, ինչպես ծաղկի առէջ,
Դողաց՝ նեկտար աչքերը թաց...

Ո՛ւր է, կգա՞ երգիդ հետքով
Միրո մեղուն իմ ոսկեթև.
Միրտս սրտիդ անուշ հեքով
Տրոփում է, խայտում թեթև:

Սպասում է, լուռ երագում՝
Ծաղկած շոայլ, ճերմա՛կ-ճերմա՛կ...
Ա՛խ, սիրուց ես դու էլ նագում,
Գարո՛ւն աղջիկ, աղջի՛կ դու խակ...

Շուտով, սակայն, դու կհասնես,
Կհարսնանաս արևին շեկ.
Հավատա՛ ինձ, ինչպես ես՝ քեզ...

Հոգիս քո դեմ բաց է ու մերկ...

Հավատա՛ ինձ... իմ լա՛վ գարուն,
Հավատով եմ ապրում և կամ.
Միրում եմ քեզ ու հավատում
Քո չտված խոսքին անգամ...

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ամեն օր իմ ճանապարհին
Հանդիպում եմ քեզ,
Դու ճշտապահ միշտ նույն ժամին
Գալիս անցնում ես...

Դարձել է դա սովորական
Ինձ համար արդեն,
Իսկ լա՛վ մարդ ես և կամ որքա՞ն...
Ոչինչ չգիտեմ...

Շատ եմ վրաս ես գարմանում.
Ինչպե՞ս է, որ ես
Մի օր հանկարծ չեմ մոռանում
Ու... բարևում քեզ...

ԱՆՀԱՆԳԻՍ ՔՈՒՆ

Քրքրեցի գիշերն իմ անհանգիստ քնի
Մագիլներով սուրսայր,
Նա չիմացավ՝ ինձ մոտ գլուխը ուր դնի,
Լուռ քաշվեց մութ մի այր:

Աղոթեցի երկար արեգակին արդար
Ու ծնունդը նրա,
Որ իմ կարոտներին խաղաղեցում նա տար,
Հույս ցողեր ինձ վրա:

Ու երբ ճչար ուժգին խանձարուրում իր թաց,
Փռեր վարսերն հրկեզ,

Որպես մի նոր արև, որպես մի լուսաբաց՝
Կտեսնե՞ի ես քեզ...

ՔԱՂՅՐ ԵՐԱԶ

Մ թևով տունդ մտնեմ հուշիկ,
Նայեմ դեմքին քո անուշիկ.
Տեսնեմ՝ իտ՞ ր ես դու քուն մտել,
Հո՛, չե՛ս մըսում կամ չե՛ս շոգել...

Հետո նստեմ ես մահճիդ մոտ,
Երգեմ նանիկ, երգեմ կարոտ...
Ու երբ ծեգին դու արթնանաս,
Ողջը թվա քա դցր երագ...

ԱՆՎԵՐԱԴԱՐԶ

Այնքա՛ն զվարթ ու մտերիմ,
Ա՛ իս, մանկության թռչուններն իմ
Թռա՛ն անդարձ:

Ինչպե՛ս մնամ ես անտրտունջ.
Իմ խենթության պահերն անլուրջ
Մեռա՛ն անդարձ:

Խռովեցին թե՛ խինդ, թե՛ տաղ,
Երանության օրերն ուրախ
Կորա՛ն անդարձ:

Սիրտն իմ ընկավ սիրո հուր-ցավ,
Անհոգությունն իմ հեռացավ
Անվերադա՛րձ,
Անվերադա՛րձ...

ԲԱՅՑ ԻՆՉՊԵ՞Ս

Քնած է հիմա շուրջս ամեն ինչ,
Անքուն լուսինն է անգամ հորանջում,

Իմ եթերային երազները ջինջ
Այցելել են ինձ, քունս են տանջում:

Իրենց թևերին բերել են ինձ մոտ
Մերն իմ, որ տանն իր քնած է խաղաղ,
Խնկարկել շուրջս և՛ սեր, և՛ կարոտ,
Աչքերիս դրել երջանկության շաղ...

Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս խնդամ լիաթոք.
Վախենում եմ, թե արթնանամ քնից,
Քեզ կորցնեմ նույնիսկ երազում անհոգ
Ու դարձյալ մենա՛կ, մենա՛կ գտնեմ ինձ...

ՔՈՍԱՔ ԱՓԻ ՄԵԶ

Հուզված եմ. խոսել չեմ կարողանում,
Լուռ խույս են տալիս աչքերս քեզնից
Եվ հետո, ասես, որոնում են ինձ,
Ինքնամոռացման մշուշից հանում:

Ափերդ սրտիդ հնոցն են անշեջ,
Որոնց մեջ փոքրիկ իմ ձեռքն է դողում...
Քո սև աչքերն են հրճվանքից շողում,
Քանզի իմ սիրտն է քո տաք ափի մեջ...

ԳՈՒՑԵ...

Քեզնից եմ ես հարցնում,
Բայց դիմում եմ աշխարհին,
Թե ինչպե՞ս են հանգցնում
Ցասման պաղ բոցը,
Թե ինչպե՞ս են թաքցնում
Դառը հոգոցը,
Թե ինչպե՞ս են հազցնում
Սպիռով՝ խոցը...
Չեմ ուզում, որ իմանաս
Իմ սրտի ցավը.
Չես բուժի, նոր ցավ կտաս...

Չէ՛, սա է լավը:
Գուցե հենց սա է բարին,
Որ քեզնից եմ հարցնում,
Բայց դիմում եմ աշխարհին...

ԵՐԳԻՍ ՀԱՄԱՐ

Թաքուն տազնապ ես,
Ծիծաղ ու ծափ ես,
Շիկնանքի տապ ես
Անտանելի:
Սրտի մրմուռ ես,
Խանդի մամուռ ես,
Փորձության դուռ ես
Անբանալի:
Անմիտ կատակ ես,
Վատ եղանակ ես
Ու բութ դանակ ես
Վերքիս համար,
Բայց համ ու հոտ ես,
Անշեջ կարոտ ես,
Խունկ ու վառող ես
Երգիս համար:

ՀՐԱԺԵՇՏԻ ՔՈՒ ՄԻ ԽՈՍՔՈՎ

Հրաժեշտի քո մի խոսքով
Այրեցիր դու
Մեր հին ու նոր
Բոլոր-բոլոր
Կամուրջները,
Մեր խենթ հոգու,
Ա՛խ, հին ու նոր
Բոլոր-բոլոր
Անուրջները...
Ավերեցիր
Սրտիս բերդը
Ու գերեցիր

Մտքիս երթը,
Մեր անցյալից,
Ավա՛ղ, ոչինչ
Չթողեցիր
Քարը քարին...
Ուրացա՛ր ինձ...
Քեզ համար՝ ի՛նչ...
Ու հողեցիր
Սերն ու բարին՝
Հրաժեշտի քո մի խոսքով...
Բայց չիմացար,
Որ նույն պահին
Չդիմացար...
Հաղթեցի քեզ
Ձենքով անտես՝
Գինու պես հին
Իմ խենթ արյան անզուսպ հոսքով...

ԵՍ ՔԵԶ ԳԱԼԻՍ

Ես քեզ գալիս՝ իմ իսկ ձեռքով
Այրել եմ իմ վերադարձի
Կամուրջները փոքր ու մեծ,
Կորցրել եմ այսպես հերթով
Իմ հետդարձի բոլոր անձիր
Ճամփաները խոստումնաձեժ...

Կողպել եմ իմ բախտի դուռը
Եվ բանալին մեն ու միակ
Անվերադարձ հանձնել եմ քեզ,
Անցել եմ ես հուրն ու ջուրը՝
Ահս պահած յոթ փակի տակ,
Վառել սիրո խարույկ մի թեժ:

Քեզ եմ եկել նվիրումով,
Բազմիդ դրել իմ հավատը,
Երջանկության երազն անգամ...
Հոսում եմ արդ քո իսկ հունով,

Դարձել եմ հիմք, իսկ դու՝ պատր...

.....
Հիմա ինչպե՞ս ես հեռանամ...

ԴԱՇՏԱՅԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Դաշտայի՛ն ծաղիկներ՝
Կարմիր, կապույտ, դեղին...

Կյանքն իր թոյնն ու լեղին

Չի պարպել ձեր սրտում,

Եվ մնում եք դուք դեռ

Լուսեղ ու անտրտում,

Եվ ապրում եք այնպես

Բնական ու վայրի՛ ...

Քիչ է մնում այրի՝

Ձեր բույրերի բոցը՝

Խենթացնող ու անտես...

Խորն է սրտիս խոցը,

Դաշտայի՛ն ծաղիկներ,

Ծաղիկնե՛ր երջանիկ,

Իսկ ես՝ ծաղիկ-ծաղիկ,

Դառնացա՛ այսպես վաղ՝

Չտեսած կյանք ու սեր,

Չունեցած բույր ու տաղ...

Ծաղիկնե՛ր ժպտերես,

Նախանձում եմ ես ձեզ:

ԿԱՐՈՏԵԼ ԵՄ

Վերջին անգամ

Մենք խռոված բաժանվեցինք իրարից,

Հաստատակամ

Որոշեցինք ամեն մեկս այն օրից

Է՛լ չհիշել,

Է՛լ չխոսել

Իրար հետ

Ու մոռանալ,

Լուռ հեռանալ

Առհավետ...

Ու դու այսօր զանգ տվեցիր, ի՛մ անգին,
Գուցե մեկը զանգահարում էր մեկին,
Սակայն սիրտն իմ իր տրոփով սիրակեզ,
Զգարմանաս, ի՛մ սիրելի, մատնեց քեզ...
Իսկ դու հեռու-հեռուներից այն օտար
Զխոսեցիր, չասացիր և ոչ մի բառ...
Հասկանում եմ. ուզում էիր դու միայն
Լսել ձայնս, լսե՛լ, լսե՛լ ձայնը այն,
Որ քո սրտին շատ մոտիկ էր, սիրելի,
Խոստումներով ու հույսերով, սիրով լի...
Է՛հ, ի՞նչ ասեմ, դու ինձ էիր կարոտել,
Մինչդեռ, գիտե՞ս, որ կարոտը ինձ մոտ էլ
Եկել է հյուր,
Բայց գնալն ո՛ւր...
Ա՛խ, դու ինչպե՞ս
Զհասկացար
Ինձ այս անգամ
Ու համբացար...
Որ ես նույնպես
Ապրում եմ, կամ՝
Քեզնով միայն
Ու կարոտե՛լ,
Կարոտել եմ
Զայնի՛դ անգամ...

ԱՍԵՍ, ԴՈՒ ԶԵՍ...

Ու հիմա էլ ծաղրում ես ինձ...
Ասես, դու չես եղել, իրոք,
Պատճառն իմ՝ քեզ հավատալու,
Իմ հանգիստն ու ծիծաղն անհոգ
Անվերադարձ իմ՝ քեզ տալու:
Ասես, դու չես եղել, իրո՞ք,
Պատճառն իմ՝ քեզ, քեզ սիրելու,
Միրտս՝ քո դեմ խեղճ ու անօգ,
Ընդմիջտ իմ՝ քեզ նվիրելու:

Ասես, դու չես եղել, իրո՛ք,
Պատճառն՝ այսքան իմ խենթության,
Դառնակակի՞ծ ու անամոք,
Լիակատար իմ պարտության:
Ասես, դու չես...
Բայց ի՞նչ ասես,
Երբ հիմա էլ եկել նորից,
Առանց խղճի ու ամոթի,
Ծիծաղում ես, ծաղրում ես ինձ...
Հաղթողի պես
Լինե՛ի՛ր գեթ... մեծահոգի...

ՈՐՊԵՍ ԱՆՑԱԹՈՒՂԹ
Սիրտդ, ավա՛ դ, փակ է իմ դեմ՝
Ինչպես բերդի դուռ,
Ինքս ինչպե՛ս ինձ միջնորդեմ.
Իզո՛ւր է, իզո՛ւր...

Մուտք գործելու հնար կա՞, որ...
Պետք է գա՞նձ կամ ո՞վ խտ...
Լոկ մի բառ է ինձ հարկավոր՝
Որպես անցաթուղթ...

ԻՍԿ ԴՈՒ ԱՍՈՒՄ ԵՍ
Իմ աչքերում կան
Սիրո արցունքներ՝ դեռ չցամաքած,
Կան այնտեղ զարնան
Ժպիտներ շողուն՝ արևներ հագած...
Իսկ դու ասում ես՝ կախարդիչ ու պերճ
Ծիածաննե՛ր կան իմ աչքերի մեջ...

ԻՆՉ-ՈՐ ՏԵՂ
Դու չգիտես, որ ինչ-որ տեղ
Մեկը վաղուց քեզ է տենչում,
Քեզ դարձրել է սիրո կանթեղ,

Ե՛վ տենչում է, և՛ ամաչում:

Ես չգիտեմ. գուցե մի տեղ
Մեկն էլ վաղուց ինձ է տենչում,
Ինձ է դարձրել սիրո կանթեղ,
Ինձ է երգում, ինձ է կանչում:

Ամեն մեկս մի ինչ-որ տեղ,
Ա՛խ, իրար ենք վաղուց տենչում,
Իրար դարձրել սիրո կանթեղ...
Ափսոս ս, իրար չենք ճանաչում...

ԴՈՒ Ո՞Վ ԵՄ, ԱՍՄ՛
Դու նա՞ ես, որը մի օր պիտի գա
Ու չի եկել դեռ,
Նա՞, որն ինձ համար և՛ կա, և՛ չկա.
Պատրանք է, եթեր...

Իմ աստեղային երազանքների
Այն ասպե՞ տն ես դու,
Որ նվաճողն է իմ նազանքների,
Պնդողն՝ իմ հոգու:

Այն ամուր ձե՞ռքն ես, որը ինձ կյանքում
Կլինի հենակ,
Այն սի՞րտն ես, որն ինձ չի թողնի անքուն,
Չի թողնի մենակ:

Արդյոք, դու պա՞հն ես ինձ իմ հայտնության,
Այն հո՞ղն ես, ուր կանք...
Սկիզբն ու վե՞րջն ես այն անհայտության,
Որ կոչվում է կյանք...

Միրտն իմ միշտ հլու՝ դարձել է ըմբոստ,
Ի՞նչ կրակ է սա...
Ծափահարում է քեզ որոտընդոստ.
Դու ո՞վ ես, ասա ...

ԱՌԱՋԻՆ ՄԵՐ

Դու ինձ սիրում ես՝
Որպես մի փոքրիկ, անմեղ աղջկա,
Ու նվիրում ես
Ինձ քո սերը սուրբ, որ կյանքում չկա:

Խենթի պես ես ել,
Սիրո մե՛կ, սիրո մե՛կ սերը քո տանջող.
Ոչ ոք չի տեսել,
Թե ինչ գույն ունի կարոտը կանչող:

Քո սերը անբիծ
Ինձ համար այնքան թանկ է, անսովոր,
Որ թվում է ինձ,
Թե այն կկորցնեմ օրերից մի օր...

ԻՆՉՈ՞Ւ ԱՍԱՑԻՐ

Ես սար եմ եղել,
Բայց բարձրությունս չգիտեի.
Դու ինձ ասացիր:

Ես քար եմ եղել,
Բայց կարծրությունս չգիտեի.
Դու ինձ ասացիր:

Ես անդունդ էի,
Բայց խորությունս չգիտեի.
Դու ինձ ասացիր:

Ես մկունդ էի,
Բայց գորությունս չգիտեի.
Դու ինձ ասացիր:

Ես հզոր էի,
Բայց քեզ տիրելու չգիտեի.
Դու ինձ ասացիր:

Ես անգոր էի,
Բայց քեզ սիրելիս չգիտեի.
Դու ինձ ասացիր:

Ինչո՞ւ ասացիր...

ՈՒՐԻՇ ՈՉԻՆՉ
Ես քեզ համար
Պայծառ շող եմ,
Զուլալ ցող եմ,
Սրտի դող եմ,
Աղբյուր եմ ջինջ.
Ուրիշ ոչինչ:

Ես քեզ համար
Երկինք եմ մով,
Երազ եմ գով
Եվ խինդ եմ ծով,
Եվ անուշ նինջ.
Ուրիշ ոչինչ:

Ես քեզ համար՝
Բարի ու չար,
Հգոր-անճար,
Խենթ ու հանճար,
Հեքիմ-դահիճ.
Ուրիշ ոչինչ:

Ես քեզ համար՝
Անվախճան հերկ,
Չբուժվող վերք,
Չգրված երգ.
Ուրիշ ոչի՛նչ,
Ուրիշ ոչի՛նչ...

ԵՍ ՔԵԶ ՏՎԵՑԻ

Ես քեզ տվեցի նուրբ նազանքներիս
Շղարշն ամպահյուս,
Դու անփութորեն այն գործածեցիր
Որպես թաշկինակ:
Ես քեզ տվեցի երազանքներիս
Կածանները կույս,
Դու անգթորեն այնտեղ քշեցիր
Քո հոտն անքանակ:

Ես քեզ տվեցի զնգան ծիծաղիս
Ղողանջները թանկ,
Արցունքոտ հառաչ այն դարձրեցիր.
Խինդս զառամեց:
Ես քեզ տվեցի անթառամ ծաղկիս
Բույրը յոթներանգ.
«Ինչի՞ համար է...», - ինձ հարցրեցիր...
Մնաց, թառամեց:

Ես քեզ տվեցի հավատիս քնքուշ
Կարապն սպիտակ,
Դու մուր քսեցիր նրա պերճ կրծքին,
Դարձրեցիր սև:
Ես քեզ տվեցի համբույրիս անփուշ
Վարդն՝ անուշ ու տաք,
Դու վերցրեցիր և ուրիշ մեկին
Տարար հեփին:

Ես քեզ տվեցի լավագույն օրս,
Որ միշտ արևես,
Դու թխպոտեցիր, և վիշտը նորից
Ժպիտս տարավ:
Ես քեզ տվեցի սիրո սափորս՝
Ծարավդ մեղմես,
Դու այն փշրեցիր՝ թողնելով և ինձ
Քեզ նման ծարավ

Ես ին՝ նթ եմ, իրա՛վ...

ԱՌԱՆՑ ՔԵԶ

Առանց քե՛զ անցավ
Քեզնով հազեցած օրն իմ տանջալի...
Սիրտս է անձավ.
Այնտեղ քո սերն է թնում անձկալի...

Օրս չակերտվեց՝
Քեզանից հեռո՛ւ և քո սիրուց գո՛ւրկ...
Ու վերջակետվեց
Արցունքի լռին կաթիլով մի գույգ...

ԳԻՏԵՄ, ՍԻՐԵԼԻՄ

Գիտեմ, սիրելի՛ս, գիտեմ՝ վերստին
Քուն չի գա բնավ աչքիդ այս գիշեր.
Համախոհ դարձած կարոտը վշտին՝
Գիշերվա քողն է մեջտեղից կիսել...

Թթված մութի մեջ քո հեռուներից
Ինձ ես դու զգվում հուշի թներով.
Համբույր են կաթում աստղերը վերից
Ու սեր խոստանում պազոտ ձևերով...

Քունն ինձնից էլ է փախել այս գիշեր.
Կգուրգուրե՛ն քեզ վաղն աչքերն իմ թաց...
Իսկ մինչ այդ՝ ծորուն լուսինն են կիսել
Եվ ճաշակում են որպես մեղրահաց...

ԻՆՉ ՏԱՆՏԵՐ ԶԳԱՄ

Ի՞նչ էր երեկն իմ, ի՞նչ է այսօրը,
Ի՞նչ է լինելու և իմ ապագան...
Իսկ ո՞րն է հինը, իսկ ո՞րն է նորը.
Բախտն ինձ իր տանը կտա՞ ապաստան,
Մինչև որ շինեմ սեփական տունս՝
Այնպես, որ դաժան կյանքն ինձ չհաղթի...
Ինձ տանտեր զգամ ու գտնեմ հունս

Եվ ոչ թե լինեմ տնվո՛րը բախտի...

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԷՐ...

Պատահակա՞ն էր մեր հանդիպումը,
Երբ հենց քե՛զ տեսա հոծ բազմության մեջ,
Որ մի հայացքդ փախցրեց իմ քունը,
Եվ օրն ինձ ժպտաց գույներով իր պերճ...

Պատահակա՞ն էր մեր հանդիպումը.
Քո աչքերում բյուր կայծեր վառվեցին,
Որ մխրճվեցին հոգուս անհունը,
Եվ բացվեց նրա մարգարտյա խեցին...

Պատահակա՞ն էր մեր հանդիպումը.
Որ դեմքիդ ծաղկած ժպիտը քո ջերմ
Մեկընդմիջտ փոխեց իմ կյանքի հունը,
Բախտիս ակոսում դարձավ ծաղկասերմ...

Պատահակա՞ն էր մեր հանդիպումը.
Աչքերիդ բոցը սիրտն իմ հրդեհեց,
Սիրտս արևեց երջանկությունը,
Հենց քե՛զ սիրեցի բյուր սրտերի մեջ...

Պատահակա՞ն էր մեր հանդիպումը...

ԵՄ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՄ

Շատ մի՛ փոքրիկի հոգուս ավերը.
Հոսքը հոսք է բերում,
Շատ մի՛ թուլացրու լեզվիդ կապերը.
Խոսքը խոսք է բերում:

Շատ մի՛ քրքրիկ սրտիս վերքերը.
Վերքը վերք է բերում,
Շատ մի՛ գովերգի դու իմ երգերը.
Երգը երգ է բերում:

Հմայքիդ ուժին, սակայն, մի՛ դիմիր.
Նոր հույսեր է բերում,
Ես վախենում եմ, դու ինձ մի՛ սիրիր.
Մերը սեր է բերում...

ԲԱՅՑ ՄՈՌԱՆՈՒՄ ԵՍ

Դու իրավունք ես քեզ վերապահում
Հրամանատար լինելու ինձ մոտ,
Իբր, կյանքում ես դեռ շա՛տ-շա՛տ եմ հում
Եվ փորձառուիդ խորհրդին կարոտ...

Ուզում ես՝ լսեմ, միշտ ենթարկվեմ քեզ,
Չհակառակվեմ, երբեք չասեմ «ոչ»...
Բայց մոռանում ես, որ գերիդ չեմ ես,
Թեև սերն ես իմ, տե՛ր իմ ինքնակոչ...

ՎԱԽԿՈՏ ՉԵՍ, ԳԻՏԵՄ

Վախկոտ չես, գիտեմ.
Բայց վախենում ես ինձ հանդիպելուց,
Իսկ հանդիպելիս՝ օտար ես իմ դեմ
Եվ չես հազենում հեռուն դիտելուց...

Վախկոտ չես, գիտեմ.
Բայց վախենում ես ինձնով տարվելուց,
Մեր հին հուշերին նորից փարվելուց,
Սրտիդ կրակի նորից վառվելուց
Եվ սիրուս կողմից գերեվարվելուց...

Վախկոտ չես, գիտեմ.
Քա՛վ լիցի՛, ոչինչ չունեմ ես քո դեմ,
Իսկ թե ունեմ էլ, չգիտեմ, թե՛ ո՛ւմ...

Ա՛յ, ես վախկոտ եմ, բայց չեմ վախենում...

ԵԹԵ ՈՒԶՈՒՄ ԵՍ

Նեղանա՞լ քեզնից... ո՛չ, ինչի՞ համար...
Որ դու մեր սերը, որպես անգին գանձ,
Գաղտնի՞ ես պահում աչքերից մարդկանց...

Դու շատ լավ գիտես, որ դեռ անհամար
Խոչընդոտներ կան, դավեր՝ նոր ու հին,
Եվ փորձություններ մեր սիրո ճամփին:

Մեր մաքո՛ւր-մաքո՛ւր, անբասիր սերը
Ավելի ամուր պահի՛ր դու կյանքում,
Եթե ուզում ես չմնալ անքուն...

Եթե ուզում ես դո՛ւ լինել տերը
Իմ սիրո և իմ, ճի՛շտ հասկացիր ինձ.
Գաղտնի մի՛ պահիր սերդ լուկ ինձնից...

ՀՈԳ ՉԷ

Հոգ չէ, որ դեռ հին սերը ծխում է,
Հոգ չէ, որ այն ինձ հաճախ մղում է
Անզուսպ քայլերի...
Ինձ համար նույնիսկ այսպես էլ լավ է,
Ինձ համար հիմա այնքանն էլ բավ է,
Որ կյանքը ների
Ու անհիշաչար, քաղցր քեզ ժպտա,
Թեկուզ իր թույնն ու տատասկներն ինձ տա
Եվ այսպանի միշտ...
Երջանիկ կզգամ ինձ և դժոխքում,
Երբ իմանամ, որ ուրիշի գրկում
Ապրում ես անվիշտ...

ԵՍ ՔԵԶ ՈՒՆԵՄ

Ես քեզ ունեմ երգերիս մեջ,
Հուշերիս մեջ, կարոտներիս...
Որ մխում են, մխում անվերջ,
Շուրջդ քաշում ոսկե երիզ:

Ես քեզ ունեմ վերքերիս մեջ,
Ցավերիս մեջ, տվայտանքիս...
Եվ խենթ հոգիս սեր է անշեջ
Քեզ խնկարկում այնպե՛ս ու հանգիստ...

Ասես, քե՛զ չեն դավով անտես
Ինձնից խլել, տարել հեռու.
Ասես, քե՛զ չեն տիրել այնպես,
Որ է՛լ սիրուդ տերը չես դու...

Թող որ ուրիշն ունենա քեզ
Պագշոտ ու մեղկ իր գրկի մեջ.
Ես քեզ ունեմ բորբ ու անկեզ
Սիրո մատյան իմ սրտի մեջ:

ՄԵԾ ԼՌՈՒԹՅՈՒՆ

«*Խոսքը արծաթ է, լռությունը՝ ոսկի*»

ԺՈՂՈՎԸՐԴԱԿԱՆ

Հավատա՛մ իսկի,՝
Որ բյուր խոսքերը՝ պերճ ու սերնեթ,
Որպես արծաթի մի ձուլակտոր,
Կարող են լինել մի փշո՛ւր ոսկի՝
Դառնալու համար
Նշանի փոքրի՛կ-փոքրի՛կ մատանի...
Գրո՛ղը տանի...
Կարո՞ղ են լինել, ա՛յ, մասնիկը գեթ
Այն մեծ լռության՝ շիկնանք-ամոթի,
Հեզ-համեստության պարեգոտ հագած,
Որ ճամփով շիտակ և ոչ թե խոտոր,
Վառելով հույսի ջահերը հանգած,
Օրեր անհամար
Քայլելով առաջ՝ տանջված, անոթի,
Հեզ ասպետի պես հասնում է մի օր
Ու նստում հոգնած
Տան շեմքի քարին
«Սիրո՛ւմ եմ» բառի...

ԵՍ ԵՎ ԴՈՒ

Մենք առանձին-առանձին
Մեր տունը ունենք,
Մենք առանձին-առանձին
Մեր քունը ունենք,
Ապրում ենք ու աշխատում,
Երգում, սիրում ու ատում՝
Մենք առանձին-առանձին.
Ես ինձ համար,
Դու՝ քո:

Մենք առանձին-առանձին
Մեր վերքը ունենք,
Մենք առանձին-առանձին
Մեր երգը ունենք,
Հաճախ տխրում ենք, հուզվում,
Ստքերի ծովը սուզվում՝
Մենք առանձին-առանձին.
Ես ինձ համար,
Դու՝ քո:

Ա՛խ, միասին-միասին
Ամեն ինչ լինէր,
Եվ առանձին-առանձին
Ոչինչ չլնէր,
Երազեինք, տքնեինք,
Ապրեինք ու երգեինք,
Ա՛խ, միասին-միասին.
Դու ինձ համար,
Ես՝ քո...

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՒՅՐ

Երբ տուն եկա, արդեն ուշ էր,
Դրսում անձրև էր, մուլթ...
Գլխումս լոկ մեզ-մշուշ էր՝
Կարմիր, կանաչ, կապույտ...

Աչքերիս մեջ հուրեր կային,
Երջանկության շանթեր,
Լողում էին սֆինքսային
Ժպիտների ամպեր...

Իսկ հոգումս քառս էր խոլ՝
Խինդ ու տազնապ, հուզում...
Ճախրում էի սրտիկիս նոր
Հեքիաթների մուժում...

Հենց քիչ առաջ բույր ու թույրի
Ճոճքում՝ այգում գարնան,
Շրթունքներս սեր-համբույրի
Նեկտարի համն առան...

Երա՞զ էր դա, թե՞՞ իւենթ ցնորք,
Պատրա՞նք էր, թե՞՞ միրաժ...
Ինչքա՞ն ցուրտ էր և ինչքա՞ն շոգ՝
Աչքերի դեմ քո խաժ...

Չէ՛, ախր, դա ո՞նց կարող էր
Անիրական լինել.
Անձրևն անգամ ի՞նչ մարող էր.
Թե՛ ժ էր խարույկը մեր...

Չէ՞ որ հենց նոր վարսերիցս
Անձրևաջուրն անսուտ
Կաթեց շիկնաձ այտիս՝ որպես
Երջանկության արցունք...

ԲԱՅՑ Ի՞ՆՉ ԻՄԱՆԱՍ

Ես մի՞ թե, իրավ,
Այնքան եմ չկամ և կամ չարակամ,
Որ քեզ չեմ ասում այն միակ բառը,
Որից դու, իմ լա՛վ,
Ոտքիդ տակ հողը չես զգա անգամ,

Ու կքաղցրանա աշխարհի դառը...
Եվ դու նույն պահին կերջանկանաս...
Բայց ի՞նչ իմանաս,
Որ չեմ կորցնի ես էլ նայն պահին
Քո շուրթից, սե՛ր իմ,
Բարո վ ծնվելիք այն միակ բառով
Երջանկանալու երազանքս հին...

ԴՈՒ ՄԻ՝ ԴԺԳՈՇԻՐ

Քո չար բախտից միշտ դու մի՛ դժգոհիր
Եվ ոչ էլ հիմա ինքդ քեզ գոհիր
Վշտի աստրծուն. անցածն անցած է...
(Ա՛խ, գիտեմ՝ սրտիդ վերքը դեռ բաց է)...

Թե քեզ մատնեիր ինձ մոտ պարտության
Եվ հիվանդագին քո հպարտության
Բարձունքից մի պահ դու վար իջնեիր,
Իմ կողքին, ինձ հետ արդ կլինեիր...

ՆՈՒՅՆ ՀԱՐՑՆ ԱՆԱՄՈՔ

Մի ճարպիկ ոստյո՛ւն...
Եվ կատուն ծառի երերուն ճյուղից
Ցատկով հայտնվեց տանիքին բարձր
Ու հիմա արդեն
Քայլում է հպարտ, գոհ ու ինքնաբավ...

Եվ, ահա՛, իսկույն
Տխրության թուխպը ելավ, պատեց ինձ.
Ես այրվող սրտիս այս ծուխը թանձր
Ինչպե՞ս փարատեմ...
Ախր, վերստին շարժեց պոչն իր թավ
Ու իմ դեմ կանգնեց աչքերով հայցող
Նույն հարցն անամոք.
- Իսկ մեր սերն, անգին, մեր սերը տանջող
Դեռ երկա՞ր պիտի նստի վախվորած՝
Անորոշության ճյուղին երերուն

Ու չհանդգնի համարձակ ու բաց
Մի հզո՛ր ցատկով վիճակն իր անօգ
Փոխել մեկընդմիջտ...

Այո՛, դու ես ճիշտ.
Դու ինձնից լավ ես միշտ տեսնում հեռուն...
Բայց այնտեղ, ախր, ամուր է հիմքը
Մեր սիրո շենքի,
Եվ մեր ոտքի տակ
Միշտ էլ հաստատուն կլինի բախտի
Շնորհած հողը...
Հավատա՛, նույնիսկ սատանան ինքը
Թե դիմի զենքի՝
Չարությանը անհագ,
Մեզ մեր բարձունքում բնավ չի հաղթի
Ու չի մթագնի մեր երջանկության
Ժպիտն ու շողը...

Հասկանում եմ քեզ. դու քո ցանկության
Տերը չե՛ս բնավ...
Քո անվճռական հապաղումի մեջ
Ու վարանումիդ աչքերում անպե՛ծ
Ես վա՛խ եմ կարդում...
Հավատա՛, իմ լավ,
Ես էլ եմ տեսնում մարդկային շինծու,
Փուչ օրենքների, բարքերի փտած
Այն հսկա պատը,
Որ ծառացած է մեր մեծ սիրո դեմ
Եվ Կերբերոսի աչքերով արթուն
Գիշեր ու ցերեկ խիստ հսկո՛ւմ է մեզ...
Չգիտեմ՝ ինչո՛ւ
Դու, տառապանքիդ պատյանը մտած,
Չես ուզում տեսնել, որ պատն այդ անդեմ
Ամենաշատը
Փորձություն՝ ւն է մի, որ ահեղատես
Վիշապի նման փովել է, փակել
Մեր սիրո կենաց լուսե՛ ակունքը...
Դու վախենում ես, թե մեր սերն անկար,

Անօգ է ու խեղճ՝ ինչպես մանուկը,
Եվ, եթե փորձի անցնել պատն այդ մեծ,
Ուժը չի՝ պատի...

Ավելոյ թղ երկյուղ...

Ո՛չ, նա օրհասի ճիշով խելագար

Չի՝ ծեփվի պատին...

Իգո՛ւր ես վախի պարեգոտ հագել.

Դա քեզ չի՝ սագում...

Դու միայն սրտիդ եղիր ունկնդիր.

Նա քեզ չի խաբի.

Փորձվա՛ծ է, թրձվա՛ծ՝ տառապանքի մեջ...

Նույն տառապանքի հնոցում անշեջ

Թրծվել է նաև սիրտն իմ կարևեր,

Ու հիմա այնտեղ կրակ է և ծուխ...

Ականջդ հապա դու իմ սրտին դիր,

Տես՝ ի՛նչ է ասում...

Նրա հառաչը համբառնում է վեր

Եվ հետո գլխիս տեղում որպես ձյուն...

Ինձ պետք չէ ձյունե լուսապսակը...

Թե պսակ է պետք,

Թող պսակ դառնա ինձ սիրո թագը,

Որին չի հասնի, սակայն, ամեն ձեռք...

Գիտեմ, անգինս,

Դու էլ ես սիրո թագի հավակնորդ

Եվ գիտես գինս.

Դրա համար էլ և ոչ մի գնով

Չես ուզում կորցնել ինձ ու մեր սերը...

Եվ հիմա, սակայն, դու ինձ այդքան մոտ

Ու ինձնից այդքան հեռու ես, ավա՛ղ...

Օ՛ր, բա՛խտ իմ խռով,

Քո ձեռքը պինդ է ու ժպիտդ՝ պատ,

Դու ես իմ սիրող սրտի թևերին

Բարձել անփարատ վշտի այս բեռը

Եվ գերի հանձնել ինձ տառապանքի

Արթուն դներին...

Ես դա լա՛վ գիտեմ.

Դրա համար էլ չեմ հայցում քեզնից,
Որ փռես իմ դեմ
Քո հեքիաթային ճոխ շնորհները
Կամ բաժին հանես նեկտարից կյանքի...
Հավատա՛ դու ինձ՝
Չեմ ուզում քեզնից
Ո՛չ գութ ու բարիք և ո՛չ էլ խոստում...
Պարզապես, շա՛տ ես կույր ու անարդար,
Պարզապես, շա՛տ ես քարսիրտ ու չկամ...
Ձեռքդ սրտիդ տար
Եվ ասա՛ դու ինձ՝
Նույնիսկ այն կատվի՞ չափ էլ ես չկամ,
Որ խնայում ես ինձ քո փշրանքը...
Վկա՛ իմ կյանքը,
Ցա՛ վն է մորմոքում, մխում՝ իմ խոսքում,
Ո՛չ թե նախանձը, նախանձոտ իմ բախտ...
Քեզնից առավել՝ հարկավոր է ինձ
Մի ամենահա՛ դթ,
Հանդուգն ու խիզախ, բախտորո՛շ ոստյուն...

ԳԹԱ՛ ԻՆՁ, ՍԻՐԵԼԻ՛Ս
Գթա՛ ինձ, սիրելի՛ս, գթա՛ ինձ.
Միրո նոր ամպերը ո՞նց ցրեմ...
Դեռ երեկ ես հազիվ գտա ինձ,
Իսկ այսօր վերստի՞ն կորցնեմ...

Արդյոք, ի՞նչ իմանամ, թե իմ շուրջ
Կուտակված ամպերն այս նոր դա՛ վ չեն,
Փթթում են նոր հույսեր ու անուրջ...
Իրենց նոր քաղցրությամբ հին ցա՞ վ չեն...

Ամպերն այդ ի՞նչ են ինձ խոստանում՝
Միրո շանթ ու որո՞տ, թե՞ ժպիտ,
Թե՞ բախտի ծիածան... չեմ վանում.
Սպասի՛ր ինձ նման և դու, սի՛րտ...

Սպասի՛ր... իսկ եթե կայծակեն

Սիրո խենթ, մութ ամպերն անտարբեր,
Սիրո իմ, քեզ ես ի բա ց արձակեմ...
Գեթ հիմա կդառնա՞ս շանթարգել...

ՈՐ ԻՆՁ ՀԱՄԿԱՆԱՍ

Ձեռքս թաթախեմ ծաղկի ցողի մեջ
Ու դեմքդ շոյեմ,
Եվ դու ինձ ժպտաս:

Շուրթս թաթախեմ արև-շողի մեջ,
Շուրթդ համբուրեմ,
Ու ինձ համբույր տաս:

Սիրտդ թաթախեմ սրտիս դողի մեջ
Ու տեղը դնեմ,
Որ ինձ հասկանաս...

ՉԱՐ ԿԱՏԱԿ

Իմ կողքին էիր երկար ժամանակ,
Ինձ համար, սակայն, չկայիր, ասես...
Երբ աչքերիդ մեջ տեսա սեր-կրակ,
Հանկարծ նոր միայն նկատեցի քեզ...

Եվ նոր հասկացա, որ սիրում ես ինձ.
Սրտումդ սիրո հրդեհ է ու բոց...
Ցանկացա հեռու պահել ինձ քեզնից՝
Սիրո նետերից մնալով անխոց...

Ցանկացա հեռվից խաղալ սրտիդ հետ՝
Իմ սիրտը քո դեմ պահելով միշտ փակ,
Ցանկացա դառնալ սիրտդ խոցող նետ,
Քեզ հետ պարզապես անել չար կատակ...

Եվ սկսեցի սեթևեթանքով
Քեզ հետ սեր խաղալ, ժպիտներ շաղել,
Հոգիդ խենթացնել սիրո դյուրանքով,

Աչքով անելով՝ քո սիրտը դադել...

Խենթ քրքջացի քո սիրո վրա՝
Այն համարելով անհույս, անգալիք...
Փո՛ւյթ չէ՛ թող սիրտդ սիրուց թրթռա՝
Իմ ձեռքին արդեն դարձած խաղալիք...

Իմ խաղով, սակայն, տարվեցի այնքա՛ն,
Այնքա՛ն ես մտա իմ կեղծ դերի մեջ,
Որ գլխի չընկա, չզգացի անգամ՝
Ե՛րբ կուլ տվեցի սիրո խայծն իմ մեծ...

Ես կուլ տվեցի իմ սիրո խայծը՝
Հայտնվելով իմ լարած թակարդում.
Ինձ գտավ սիրո հրդեհի կայծը...
Եվ հիմա ես եմ գոր-գիշեր արթուն...

Այ քեզ չար կատա՛կ... այսպես էլ պատի՞ժ...
Հիմա իմ սիրտն է սիրուց նետահար...
Վառվելով սիրուց՝ խնդացի գիժ-գիժ.
Պետք չէր խաղ անել կրակի հետ չար...

ԱԿԱՄԱ

Ի՞նչ է ուզում սա,
Ի՞նչ է թոթովում.
Խեղդվում է անհույս
Հույզերի ծովում...
Իսկ ես ակամա
Լսում եմ անհույզ.
- Ինչ կուզես՝ ասա՛,
Բայց ինձ չէ՛ս թովում...

ՀԵՌՎՈՒՄ՝ ԱՅՆՏԵՂ...

Արցունքներիս անձրևի մեջ,
Շողերի մեջ ժպիտներիս
Սպասումներն իմ սիրատենչ

Բեկվել են լուռ... և, սիրելի՛ս,
Նայի՛ր, նայի՛ր... հեռվում՝ այնտեղ,
Կապել են ձիգ ու անընդմեջ
Հաղթանակի կամա՛ր շքեղ...

ԴՈՒ՝ ԱԼ ԾՍՂԻԿ

Դու ալ ծաղիկ՝ հեռվում վառվող,
Սիրտս գցած կարոտի դող՝
Բյուր սերերից շորորում ես,
Հույսերս դեռ օրորում ես...

Թվում է, թե կանչում ես ինձ,
Ո՛չ, դու միայն տանջում ես ինձ.
Ինձ պես քանի՞ սիրտ ես վառել,
Որ ալ-կարմիր գույն ես առել...

ԱՀԱ՛ ԹԵ Ի՛ՆՉ

Ահա՛ թե ի՛նչ...
Դու էլ փորձում ես ի՞նձ.
Ինչպես կաթն են փորձում՝
Եռացնելով,
Սուր-երկաթն են փորձում՝
Կեռացնելով,
Փորձում՝ ինչպես լույսը,
Ինչպես գինին, կույսը...
Բայց փորձ չունես փորձի,
Որ վերածես գործի.
Երբ չգիտես,
Որ քո փորձի հերկում
Փորձըվում ես հենց դու՝
Սե րմը ինչպես...

ՆՌԱՆ ՊԵՍ

Ամառս հասել է նռան պես,
Նռան պես լցվել է արևով,
Հուսավառ տենչերս հրակեզ

Ծաղկում են երկնի տակ ալևոր:

Իմ սերը շիկնել է նռան պես,
Նռան պես վառվում է, փողփողում.
Ի՞նչ ձեռք է քաղելու այն, տեսնես,
Ո՞ւմ է հասնելու սերն իմ, ո՞ւմ...

Օ՛, բա՛խտ իմ, մի՛ եղիր դու դաժան,
Պահի՛ր չար աչքերից ինձ անտես.
Թե մոտ գա սիրուս ձեռք անարժան՝
Իմ սիրտը կճաքի նռան պես...

Ե՞ՐԲ Է ԳԱԼՈՒԻ
Ղու ասացիր՝ կգամ,
Ժամանակը երբ գա...
Ու ես սպասեցի:
Սպասեցի երկար՝
Հավատով մի համառ,
Սպասեցի ես լուռ
Ու միայնակ,
Բյուր հույսեր մաշեցի,
Կամքս ես տաշեցի՝
Պատրաստեցի հոգնած
Իմ հավատի համար
Փրկիչ հենակ...
Ու գարուններ եկան,
Ու գարուններ անցան.
Կարոտներն իմ շոգած
Դարձան տանջող մի հուր
Ու դահիճներ դարձան...
Ժամանակներ եկան,
Ժամանակներ անցան...
Իսկ դու չեկար...
Չորանում է արդեն
Իմ հույսերի ակը...
Ժամանակն է, կարծեմ,
Իմանալու.

Գալուդ ժամանակը
Ե՞րբ է գալու...

ԱՅՍ ՃԱՄՓԱՆ

Քեզ ինձնից սա՛ է տարել՝
Այս ճամփան անխիղճ, ոլոր-մոլոր,
Իր վրա աչքս մարել,
Նազում է իմ դեմ՝ օրոր-շորոր...
Քեզ հետո ինձ մոտ բերեց
Այս ճամփան աննինջ, ոլոր-մոլոր...
Սրտիկս նրան ներեց.
Վերջապես բացվե՛ց բախտս խոլոր...

ՄԱՅՐՍ

Մայրս՝ ձեռնբաց ու բարի մի կին,
Կյանքում նեղացրած չկա ոչ մեկին...
Կհյուրընկալի՝ ով էլ մեր տուն գա,
Իրեն կնեղի, օթևան կտա,
Հյուրին՝ միշտ չորը, իսկ իրեն՝ թացը.
Ո՛վ ասես, որ չի կիսել մեր հացը...
Իր թշնամին էլ թե դուռը բացի,
Մայրս շուտափույթ սուփրան կզգի...
Միայն մի անգամ, ա՛յ ապշելու բա՛ն,
Մայրս չզգեց մեր նախշուն սուփրան...
Հետո իմացա՝ հյուրերն այդ օտար
Հարսնախոս էին եկել ինձ համար...

ՊԱՏԱՍԽԱՆԸ Ո՞Վ ՊԻՏԻ ՏՍ

Այս չճաղկած, այս չբացված,
Այս չբուրած ծաղիկների
Պատասխանը ո՞վ պիտի տա:
Այս չգրված, չհասկացված,
Կյանք չմտած տաղիկների
Պատասխանը ո՞վ պիտի տա:
Այս մանրատված, կյանքի ցրած

Ժամանակի, նաև սրա՝
Պատասխանը ո՞վ պիտի տա:
Եվ իմ չապրած, այս կորցրած,
Անսեր անցած, անսեր օրվա
Պատասխանը ո՞վ պիտի տա:

ԱՉՔՍ ՓԱԿԵՄ-ԲԱՑԵՄ

Աչքս փակեմ-բացեմ՝
Քեզ տեսնեմ իմ կողքին,
Ինձ տեսնեմ քո շողքին,
Ինձ զգամ ես լոկ կին...

Աչքս փակեմ-բացեմ՝
Բռնես դու իմ ձեռքը,
Փակվի հոգուդ վերքը,
Լսեմ սրտիդ երգը...

Աչքս փակեմ-բացեմ՝
Գտնեմ ինձ քո սրտում,
Գտնեմ ինձ քո գրկում,
Զգամ սերդ մրրկուն...

Աչքս փակեմ-բացեմ՝
Ընդմիջտ իմը լինես,
Ընդմիջտ դու ինձ սիրես,
Ընդմիջտ դու ինձ տիրես...

Աչքս փակեմ-բացեմ՝
Ես լինեմ քո վանքը,
Դու լինես իմ կյանքը,
Իմ սեր-կախարդանքը...

Աչքս փակեմ-բացեմ,
Աչքս փակեմ-բացեմ...
Լուծվի շա տ մեծ մի հարց.
Ապրեմ աչքս միշտ բաց...

ՏՐԻՈՒԵՏ - 1

Մերն անմահական, անուշ աղբյուր է.
Այն հազեցնում է ծարավը կյանքի,
Աստծո պարզև, է, օրհնանք է անգին...
Մերն անմահական, անուշ աղբյուր է:

Հրա՛շք է սերը, հեքիաթ-համբույր է,
Ճշմարիտ սերը վեմն է սխրանքի...
Մերն անմահական, անուշ աղբյուր է.
Այն հազեցնում է ծարավը կյանքի...

ՏՐԻՈՒԵՏ - 2

Հիմա երևի քնած ես մո՛ւշ-մո՛ւշ,
Շուրթերիդ՝ ժպիտ անհիմանալի,
Երազ ես տեսնում դու գարմանալի.
Հիմա երևի քնած ես մո՛ւշ-մո՛ւշ:

Քո սրտի համար գիշերով այս ուշ
Որոնում եմ ես հրաշք բանալի...
Հիմա երևի քնած ես մո՛ւշ-մո՛ւշ,
Շուրթերիդ՝ ժպիտ անհիմանալի...

ՏՐԻՈՒԵՏ - 3

Այնքա՛ն լավ ես դու ինձ միշտ հասկանում,
Թեև դու ինձնից մեծ ես տարիքով,
Ասես, հոգիս ես կարդում քո հոգով.
Այնքա՛ն լավ ես դու ինձ միշտ հասկանում:

Քո ներկայությամբ վիշտս է չքանում,
Եվ սիրտս է լցվում ինքնաբուխ երգով...
Այնքա՛ն լավ ես դու ինձ միշտ հասկանում,
Թեև դու ինձնից մեծ ես տարիքով:

ՏՐԻՈՒԵՏ - 4

Սա այն օրն է, որին սպասել եմ վաղուց,
Երազանքիս շքեղ գորգն եմ փռել ճամփին,
Հեծյալ կարոտն է իմ եղել սրտիս թամբին...
Սա այն օրն է, որին սպասել եմ վաղուց:

Առանց քեզ իմ սիրտը մուտք էր՝ ինչպես մի խուց,
Բախտի արևին էլ, չէ՛, չէր տալիս նա գին...
Սակայն օրն է, որին սպասել եմ վաղուց,
Երազանքիս շքեղ գորգն եմ փռել ճամփին...

ՏՐԻՈՒԵՏ - 5

Եվս մի քանի ժամ՝ և կբացվի լույսը,
Արփին կցուցլա կարոտներիս կայմին.
Գուցե թե խաղաղվի հույզերիս խոլ քամին...
Եվս մի քանի ժամ՝ և կբացվի լույսը:

Առագաստն է բացել իմ ճեպընթաց հույսը.
Ինձ է թովում սիրո սիրենյան երգն այն հին.
Եվս մի քանի ժամ՝ և կբացվի լույսը,
Արփին կցուցլա կարոտներիս կայմին...

ՏՐԻՈՒԵՏ – 6

Գարնան այս օրն եմ ես օրհնաբանամ,
Որ քեզ նվիրեց աշխարհին և ինձ...
Սիրտս թներ է առել ծիծառից.
Գարնան այս օրն եմ ես օրհնաբանում:

Մինչ դա ուրիշի նազերն ես տանում,
Ես, ցավս զսպած, ժպտում եմ և ի՛նչ...
Գարնան այս օրն եմ լուռ օրհնաբանում,
Որ քեզ նվիրեց աշխարհին և ինձ...

ՏՐԻՈՒԵՏ - 7

Իմ կարոտն է նվում հոգնած ու տանջահար՝
Կանգնած ծանոթ ցավի հյուրընկալ տան շեմին...

Արցունքներով բացած շավիղն է արդեն հին.
Իմ կարոտն է նվում հոգնած ու տանջահար:

Ցավի տան կիկլոպաչք լուսամուտն է խավար.
Ո՛ր էր ցավն իր տանը չլիներ այս ժամին...
Իմ կարոտն է նվում հոգնած ու տանջահար՝
Կանգնած ծանոթ ցավի հյուրընկալ տան շեմին...

ՏՐԻՈԼԵՏ - 8

Ես դուրս եկա փողոց: Դրսում ձյուն էր գալիս:
Ցուրտ էր: Մարմինս փշաքաղվեց...
Ձյունն ինձ վրա էլ անձայն մաղվեց:
Ես դուրս եկա փողոց: Դրսում ձյուն էր գալիս:

Խիղճն մինչև այսօր հանգիստ ինձ չի տալիս.
Քո լքված տեսքից սիրտս դաղվեց...
Ես դուրս եկա փողոց: Դրսում ձյուն էր գալիս:
Ցուրտ էր: Մարմինս փշաքաղվեց...

ՏՐԻՈԼԵՏ - 9

Գիտեմ՝ հիմա տառապում ես ինձնից բաժան,
Վայրկյաններն ես աղում-մաղում, դարձնում փոշի.
Սպասումի օրն այս կենվոր ե՞րբ կքոչի...
Գիտեմ՝ հիմա տառապում ես ինձնից բաժան:

Սիրո հանդեպ, ա՛խ, մենք շատ ենք խիստ ու դաժան.
Չենք թողնում, որ ի լուր մարդկանց սիրտը խոսի...
Գիտեմ՝ հիմա տառապում ես ինձնից բաժան,
Վայրկյաններն ես աղում-մաղում, դարձնում փոշի...

ՏՐԻՈԼԵՏ - 10

Վերադարձդ ես զգում եմ հեռվից հեռու,
Ինչպես գարնան գալուստը պերճ՝ արբշիռ բույրից,
Ինչպես այգի զարթոնքն ավվան՝ լույս ու թույրից.
Վերադարձդ ես զգում եմ հեռվից հեռու:

Եվ ինքս ինձ, սեր իմ, արդեն է՛լ չեմ ներում,
Որ չեմ փախչում մենակյացիս սևուզ խույրից...
Վերադարձդ ես զգում եմ հեռվից հեռու,
Ինչպես գարնան գալուստը պերճ՝ արբշիռ բույրից...

ՏՐԻՈԼԵՏ - 11

Դու ինձ մոտ նստած՝ քեզ չեմ նկատում,
Երազանքներն իմ հաղթեցին քեզ...
Միրտս հագել է պատյան անկեզ.
Դու ինձ մոտ նստած՝ քեզ չեմ նկատում:

Քեզ ոչ սիրում եմ և ոչ էլ՝ ատում,
Է՛լ չեմ խենթանում առաջվա պես.
Դու ինձ մոտ նստած՝ քեզ չեմ նկատում,
Երազանքներն իմ հաղթեցին քեզ...

ՏՐԻՈԼԵՏ - 12

Որտե՞ղ ես հիմա դու, ո՞ր տանը, ո՞ր ճամփին...
Իսկ սի՞րտդ... դու գիտե՞ս՝ վաղո՞ւց է նա ինձ մոտ՝
Դարձած խինդ, համակ սեր, դարձած երգ ու կարոտ...
Որտե՞ղ ես հիմա դու, ո՞ր տանը, ո՞ր ճամփին...

Ջահավառ ցնծում է մենության դոյակն իմ՝
Դարպասն իր լայն բացած դարձի դեմ քո ծանոթ...
Որտե՞ղ ես հիմա դու, ո՞ր տանը, ո՞ր ճամփին...
Իսկ սի՞րտդ... դու գիտե՞ս՝ վաղո՞ւց է նա ինձ մոտ...

ՏՐԻՈԼԵՏ - 13

Այսօր գալու ես դու քո հեռվից,
Միրտս թռչում է քեզ ընդառաջ,
Շուրթին ծիծաղ է, սիրո հառաչ.
Այսօր գալու ես դու քո հեռվից:

Կարոտն, ուր որ է, կսպառի ինձ՝

Թողնելով ինձնից սիրո մի կանչ.
Այսօր գալու ես դու քո հեռվից,
Սիրոս թռչում է քեզ ընդառաջ...

ՏՐԻՈԼԵՏ - 14

Հեռվում են արդեն օրերն անուշ,
Հեռվում են արդեն զգվանք ու սեր,
Իմ մեջ ծխում են պատիիր հոգսեր.
Հեռվում են արդեն օրերն անուշ:

Անցյալն է թողել հուշեր անփուշ,
Սիրտն իմ վառել է գվարթ լույսեր...
Հեռվում են արդեն օրերն անուշ,
Հեռվում են արդեն զգվանք ու սեր...

ՀՐԱՇՔ ԼԻՆԵՐ

Ձորը քուլա-քուլա մշուշով է լցվել.
Կանչիս արձագանքն է նեղ կածանում խցվել...
Ե՛րբ էր, որ նրանով իջնում էի ես ցած՝
Կգտնե՞մ մանկության արձագանքն իմ կորած...

Ո՛ւր էր՝ հրա՛շք լիներ... մանկանայի նորից.
Անհոգ մի երգ շուրթիս՝ բարձրանայի ձորից՝
Ճամփին արյունոտած թեկուզ ձեռք ու ոտքեր...
Ոչ թե սիրուց այսօր սի՛րտս արյունոտվեր...

ՄԵՐԴ՝ ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻ

Մերդ՝ կարմիր գինի...
Արդեն շատ եմ անգոր.
Ինչ լինում է՝ լինի.
Խմելո՛ւ եմ այսօր...

Մերդ՝ կարմիր գինի,
Ընթռչանում եմ կում-կում...
Սիրտս քեզնով է լի

Ու քեզնով է զարկում:

Մերդ՝ կարմիր գինի,
Տոչորում է սրտեր.
Ամեն ումպը՝ մի-մի
Փոթորիկ ու հրդեհ...

Մերդ՝ կարմիր գինի,
Շուրթից սիրտ է հոսում.
Հիմա իմ մեջ, անգի՛ն,
Մեր-գինին է խոսում...

Մերդ՝ կարմիր գինի...
Չէ՛, հագեցում չկա՛ .
Տո՛ւր ինձ էլի՛, էլի՛,
Տո՛ւր քո խենթ աղջկան...

Մերդ՝ կարմիր գինի,
Հարբեցնում է, այրում.
Իմ մեջ կյանք է նա մի,
Իմ մեջ՝ վառվող արյուն...

ԱՆՎՐԵՊ ՆԵՏ

Միայն մի լեզվով՝ սեր-լեզվով միայն
Խոսիր դու ինձ հետ.
Համոզված եղիր, որ կլինի այն
Անվրեպ մի նետ...

Տե՛ս՝ քեզ եմ տալիս սուրն իմ՝ մատնելով
Խոցելի տեղս...
Ես քեզ լա՛վ գիտեմ. չէ՛, դո՛ւ չէ... իսկ ո՞վ
Կլինի դեղս...

ԲԱՅՑ ԹԵ ԱՅՍՕՐ...

Ինչպես անջուր, լուռ չորացող բարդին ջահել
Տենչում է գեթ մի արագիլ,

Երագել են շուրթերն էլ իմ՝ դարձած ճայեր,
Շովե՛ր սիրո, մրրիկնե՛ր քիլ...

Բայց թե այսօր, երբ համբույրդ իմ շուրթերին
Բույն է դրել արդեն քանի՛ ,
Վախենում եմ, որ վարժվել եմ ես իմ դերին,
Որ համբույրդ ձա՛ գ կհանի...

ԿԱՐԾԵՍ, ԼԻՆԵՐ ՎԱՂՈՒՑ

Կարծես, լինե՛ր վաղուց, շատ տարիներ առաջ,
Մեր այն վերջին, այն ջերմ հանդիպումը այգում.
Սիրտս՝ սիրո մի ծով, այնպես մե՛ դմ էր խայտում,
Այնպես լա՛ վ էր երգում, այնպես մանրաշառա՛ չ...

Նստել էինք այգու կանաչ նստարանին.
Քո բազուկն էր ամուր գրկել մեջքս դալար,
Վարսերս էին փովել թավ ու սևագալար՝
Քո լայն կրծքին, որպես մազե վահան մի հին:

Աչքերիս մութ երկրում փնտրում էիր համառ
Սիրուս շղթայակապ բառերը՝ քեզ չասված,
Որպես մի անվերծան, մի հեթանոս աստված՝
Նեկտար էիր ըմպում շուրթերից իմ անառ...

Մեզ պես խենթացել էր գարո՛ւնն անչափահաս,
Մեր շուրջ եռում էր նա՛ ինչպես կանաչ արյուն,
Մի առվակ էր տավղում՝ դարձած համակ ավյուն,
Օտոն էր ծառին շրշում. «Օտդիկ-պագիկ մի տա՛ ս...»:

Կարծես, լինե՛ր վաղուց, շատ տարիներ առաջ,
Մեր այն վերջին, այն ջերմ հանդիպումը այգում.
Սիրտս՝ սիրո մի ծով, այնպես մե՛ դմ էր խայտում,
Այնպես լա՛ վ էր երգում, այնպես մանրաշառա՛ չ...

ԱՅՐՈՂ ԵՂԻՆՋ

Իմ չար լեզուն քո դեմ գործեց որպես սվին.

Միրտոյ արնեց ինչպէս ցավից փշրված նուռ...
Ա՛ խ, դու ինչպէ՛ ս հավատացիր իմ չար լեզվին.
Նա սովոր է լոկ քեզ տալու ցավ ու մրմուռ...

Բայց հավատա՛, որ ես ոչի՛նչ չունեմ քո դեմ.
Թող քեզ սիրող իմ խենթ սիրտը լինի վկա...
Լեզուս խայթող փուշ-եղինջ է, սիրտս՝ եղեմ.
Մեկն՝ ակնառու, մյուսը՝ անտես ու աննկատ...

Ախր, ինչպէ՛ս չընտելացար մինչև օրս՝
Եղինջ-լեզվիս խայթոցներին. հո՛, ինձ գիտե՛ս...
Նրա խայթը վահան է ինձ, վիրավո՛րս,
Ահն՝ ուրիշին, իսկ ցավի հետ դարմանը՝ քեզ...

Այո՛, լեզուս փուշ-եղինջ է, այրո՛ղ եղինջ.
Ուրիշներին վախեցնում է, որ մոտ չգան,
Որ եղեմիս սիրո լիճը մնա միշտ ջինջ՝
Լոկ քեզ համար... ների՛ր դու քո խե՛նթ աղջկան...

ԴՈՒ ՄԻ՛ ՎԱԽԵՑԻՐ

Դու մի՛ վախեցիր ծիծաղից իմ բաց,
Մարդկանց հետ ազատ ասել-խոսելուց.
Աղբյուրն էլ բաց է ու ազատաբաղձ,
Բայց զուլա լ է միշտ, ակունքն՝ անմատույց...

Հոգուս քաղցրահամ աղբյուրը հորդուն
Բխում է պոռթկան ծիծաղ-կարկաչով.
Ձայնն ինչպէ՛ս խեղդեմ ես իմ կոկորդում,
Ինչպէ՛ս ու դեմն առնեմ, որ չդառնա ծով...

Դու մի՛ վախեցիր ծիծաղից իմ բաց.
Քո սերն է նրա ակունքը վարար...
Հոգիս քեզանով այնքա՛ն է լցված,
Որ է՛լ տեղ չկա ուրիշի համար...

Սպասում ես դու ինձ... իսկ ես դեռ այստեղ եմ.
Խրվել մնացել եմ այս թղթային ճահճում...
Ամեն վայրկյանն անցնող՝ խայթող մի ասեղ է,
Որ ինձ պինդ գամում է Պրոկրուստի նոր մահճում...

Ծառս է լինում սիրող սիրտս՝ կարմիր աշխետ,
Ցավից վրնջում է խենթ ու ապերասան.
Նա լոկ քեզ է տենչում, ո՞ւր ես, սիրո ասպետ,
Քո սեր-զգվանքն է պետք՝ որպես կուռ երասան...

Դոփողովում է տեղում, ուզում՝ փախչել քեզ մոտ,
Բայց ամո՞ւր է թղթե այս անիծյալ կապը...
Մինչդեռ մտքիս հավքը՝ համակ սեր ու կարոտ,
Թևաբաց՝ վաղո՞ւց է լքել իր վանդակը...

Դու չե՞ս զգում նրա շոյանքը թևերի,
Չե՞ս լսում խենթ սրտիս վարզը քառատրոփ...
Հեռվից զգա՛ դու ինձ, հասկացիր ու ների՛ր.
Անզո՞ր եղա. իմ դեմ պա՛տն էր այս թղթակուփ...

ՆԱՏՅՈՒԲՄՈՐՏ

Ինչպես նատյուրմորտում՝
Սեղանին էին քո սիրուն դրված
Գինի, մրգեր և հաց.
Նույն կերպ էր ամեն ինչ,
Երբ դու
Սպասում էիր ինձ,
Եվ կարոտն էր հորդում
Սիրող քո աչքերից...
Բայց, դե՛, հիմա արդեն
Ուրի՛ 2, ուրի՛ 2 մեկն է եկել քո տուն
Եվ իր երես առած,
Շողում-ճոռոմ լեզվով, խոսքով անդեմ
Մարդու սի՛րտ է մորթում...
Զգում իրեն... տանտեր...
Իսկ դու... ինքդ քեզ կեր
Եվ քո, քո՛ իսկ ձեռքով ընկած կրակ,

Այդպէս փորձիր խո՛ւս տալ մեր աչքերից,
Այդպէս այրվի ր իմ թեժ հայացքի տակ
Չգտնելով, սակայն,
Արդարացման խոսքի
Թեկուզ ին՛ դճ մի ստվեր...
Ա՛յ թե մի պահ գտվեր՝
Տիրող մթնոլորտն այն՝
Փայլեր մաքուր ոսկին,
Ոսկի ն ճշմարտության...
Մինչ այդ պղտոր ջրում՝ միտք գրգռող,
Մարդու սի ըտ քրքրող
Ավա՛զ էր սոսկ ու ին՛ ճ...
Ինչպէս նատյուրմորտում՝
Սեղանին էին քո սիրուն դրված
Գինի, մրգեր և հաց.
Նույն կերպ էր ամեն ինչ...
Սակայն... դա դեռ ոչի՛ նչ...
Թո՛ղ որ հյո՛ւր էր եկել, ասենք, քո տուն...
Թո՛ղ որ գո՛րծ ունէր նա քեզ հետ մի քիչ...
Բայց դո՛ւ, դու, այ անխիղճ,
Ինչպէ՛ս կարողացար
Մեր նույն, բացած այդ նո՛ւյն սեղանիդ հետ
Նրա առջև բացել՝
Դարձած անկամ, անճար,
Սուփրի՛ նման բացել սիրո խոսքերը նույն,
Խոստումնե՛րը սիրո,
Որ քո
Սեղանի նույն գինու,
Գինո՛ւ նման արդեն ջրիկացել
Եվ ինձ համար, գինո՛ւ նման այդ նույն,
Իրենց համն ու հոտը կորցրել անհետ,
Դարձել են թույն...

Չէ՛, ես չար չեմ, չար չեմ
Եվ ոչ էլ հիշաչար...
Բայց որքան էլ կառչեմ
Փրփուրներից հույսի,
Հավատի փեշերից,

Ձեռքի՛ց լույսի,
Էլի մի հարց է ինձ
Տանջում լուռ, չարաչար,
Թե դու ինչպե՞ս, ինչպե՞ս կարողացար...
Էլի մի հարց է իմ հոգին մորթում,
Թե մենք, մենք երեքս,
Լուսապսակ կրող սրբերի պես,
Չասելով ոչ մի բառ,
Ինչպե՞ս, ինչպե՞ս էինք ժպտում իրար,
Իրար բարի՛ն մաղթում խաղաղ ու հեզ
Եվ... կենացնե՛ր շորթում...
Ինչպե՛ս նատյուրմորտում՝
Սեղանին էին քո սիրուն դրված
Գինի, մրգեր և հաց...

ԴՈ՛Ւ ԷԼ, ԱՅՈ՛Ղ, ԴՈ՛Ւ ԷԼ
Դո՛ւ էլ, այո՛, դո՛ւ էլ
Նման ես բոլորին,
Նման, ինչպես դու՝ քեզ,
Ինչպես օրը՝ օրին.
Քո մեջ էլ է անտես
Նստած նույն դևը հին...

Դո՛ւ էլ, այո՛, դո՛ւ էլ
Նման ես բոլորին...
Եվ իզուր եմ ես քեզ
Պատկերացրել սուրբ գիրք.
Դու էլ բոլորի պես
Մարմին ես լոկ ու կիրք...

Դո՛ւ էլ, այո՛, դո՛ւ էլ
Նման ես բոլորին...
Բայց հոգիս խաղաղ է.
Չի հավատում, ասես,
Որ սերը նենգ խաղ է,
Որ բոլորն են քեզ պես...
Դո՛ւ էլ, ավա՛դ, դո՛ւ էլ

Նման ես բոլորին...

ՀԱՎԱՏԱ՝ ԴՈՒ ԻՆՁ

Հավատա՛ դա ինձ.

Գուրգուրանքներդ, որ հիմա, կարծես,

Ավելի ջերմ են, է՛լ չեն ջերմացնում...

Համբույրիդ դողը, որ լափում էր մեզ,

Անուժ է հիմա, է՛լ ինձ չի անցնում...

Մերդ, որ հիմա խոլ-հրաթն է,

Անգոր է սիրտս շարժելու տեղից.

Այդպես լինում է, երբ այն երբևէ

Հավատի պես է կիսվում մեջտեղից...

Հավատա՛ դու ինձ...

Ո՞Վ ՇԱՏ ՏՈՒԺԵՑ

Ի՞նչ եղավ նորից՝ այսպես հանկարծ,

Որ պայծառ օրս մեկեն մթնեց,

Հրաբուխ ժայթքեց հոգիս հանգած,

Անդորրիս ամպը հօդս ցնդեց...

Թպրտաց սիրտս՝ խոցված թռչուն,

Պատեպատ խփվեց արնակտուց.

Ականջներիս մեջ խոսքն էր ճչում

Եվ արյուն-արցունք թափում կուց-կուց...

Հրաժեշտիդ խոսքն այնքա՛ն դառն էր,

Ասես, օշինդրի թուրմ էր քամված,

Մտքերիս ընթացքն այնպե՛ս խառն էր,

Թաղիք էր, կարծես, բրդից բանված...

Դու քոնն ասացիր ու հեռացար,

Իմ խոսքն այդպես էլ չասված մնաց.

Կարծրասիրտ եղար՝ ինչպես աճառ,

Չտեսար սիրտն իմ, որ վերք էր բաց...

Մեզանից, արդյոք, ո՞վ շատ տուժեց՝

Խորհում եմ հիմա ցավով անմար.
Եթե իմ վերքը կյանքը բուժեց,
Քո սիրտն այդպես էլ մնաց ժեռ քար...

ՄՐՏԻՍ ԱՅՍ ՔԱՐԸ
Սփրթնել է ծուլ տանձը
Քաղվելու ահից,
Ճիմը թողած իր սանձը,
Կպել է բահից:

Է՛լ ուժ չունի չոր խոտը
Մեջքը շտկելու,
Հոտոտում է պաղ օդը,
Սպասում հլու...

Տերևներ է արցունքում
Վշտահար ծառը...
Ի՞նձ ինչ մնաց արդյունքում.
Սրտիս այս քա՛րը...

Այս ժեռ քա՛րը, որն իր տակ
Թաղեց սերն իմ կույս,
Խոսքի պես պարզ ու շիտակ՝
Ծանրացավ հոգու...

Քա՛րն այս, որ թարմ վերք է դեռ,
Իսկ վերքն այդ տկար
Սիրուս վրա վաղամեռ
Դարձավ շիրմաքար...

ԽԱՌՆԱՇՓՈԹ
Ես քեզ կարծեցի քնքուշ գեփյուռ
Եվ տրվեցի քո զովհով շնչին,
Քշվեցի որպես ճերմակ փետուր,
Բախտիս խաչն անգամ թվաց չնչին...

Բայց դու, հանց սամում ու փոթորիկ,
Խուժեցիր կյանքս, սիրտս անփորձ,
Խառնեցիր թե՛ հարդ, թե՛ աղորիք...
Հիմա մոլոր եմ ու դառնակոճ...

Հիմա ես ինչպե՞ս գլուխ հանեմ
Խառնաշփոթից քո ստեղծած.
Սիրուս ցորենը ինչպե՞ս ցանեմ.
Ո՛չ սերմացու է և ո՛չ ծեծած...

Թե ի՛նչ ես արել՝ դու լա՛վ գիտես.
Հողմի տարածը է՛լ հետ չի՛ գա...
Ինձ չգթացիր՝ գթա՛ գեթ քեզ
Եվ հիշի՛ր՝ Աստվա՛ծ վերևում կա...

Ինքդ վարել ես՝ ինքդ ցանի՛ր,
Դո՛ւ՛ սերմնացանդ բազմաբեղուն,
Ինքդ էլ հիմա գլուխ հանի՛ր
Որն է սերմացու, որը՝ աղուն...

ԱՄԱ՛

Որտեղի՞ց ընկար գլխիս.
Քեզ հիմա ի՞նչ եմ անելու...
Դո՛ւ էլ ես արյուն ու միս.
Ե՞ս եմ քեզ խաչին գամելու...
Եվ ինչո՞ւ եկար, ասա՛,
Ինձ հե՞տ եմ ես քեզ տանելու...
Ի՞նչ դրախտ... դժո՛խ իք հասա.
Ինչպե՛ս ենք գլուխ հանելու...

ԱՄԵՆԱԼԱՎԸ

Դու՛ իմ ավերակ ու թափուր բունը,
Իմ երազախեղդ, անհանգիստ քունը,
Դու՛ ծարավեցնող իմ անջուր թասը,
Ամենադժվար, չսերտած դասը:
Դու՛ անմատչելի իմ բարձրիկ սարը,

Իմ ճամփին ընկած սիզիֆյան քարը,
Դու՝ իմ հեղեղվող, փլուզվող հանքը,
Իմ չկանաչող, չծլող ցանքը:
Դու՝ իմ սևազգեստ ու մռայլ հուշը,
Սրտիս ոտքերը ծակոտող փուշը,
Դու՝ իմ չբուժվող, բորբոքուն վերքը,
Իմ լացակումած, մորմոքուն երգը:
Դու՝ իմ դահիճը, դու՝ իմ տանջանքը,
Դու՝ իմ խոնջանքը, անպտուղ ջանքը,
Դու՝ իմ սև դավը, կրակն ու ցավը...
Բայց էլի, էլի՝ ամենալավը...

ԼՈՐԵՆՈՒ ՆԵՐՔՈ
Լուսնյակ գիշեր է,
Աստղահյուս երկինք.
Աշխարհը սեր է,
Թրթիռ է ու կիրք...

Արցախի այգուղ
Լորենին ծաղկած
Հնայք է և գութ,
Զրույց սրտաբաց...

Լորենու ներքո
Նստարանն է հին.
Ես գրկում եմ քո՝
Ջերմ ու կաթոզին...

Միրո շունջնե՛ր
Եվ արյան խե՛նթ եռք,
Այրո դ՛մբունջներ...
Ամեն ի՛նչն է երգ...

Համբույրները հուր
Մեր են ու վայելք,
Ամեն մի սարսուռ՝
Թռիչք ու վերելք...

Փարված քո կրծքին,
Սիրուց նվաղած՝
Ինձ զգում եմ կին,
Ծաղկասերմ և հաց...

Հոգիս թևում է
Աստծո տիրույթում,
Եվ ինձ թվում է՝
Լո՛ւյս եմ պարույրում...

Արմատ եմ ձգում
Հողում Արցախի,
Ինձ ծառ եմ զգում՝
Աչքերով ծավիլի...

Կյանքն այս է, սեր իմ,
Մեկ դա՛ր, թե՛ մեկ օր,
Հոսում է այս հին
Լորենու ներքո...

ԱՓԴ

Մո՛տ եկ՝ մոտեցնեմ ավոյ շուրթերիս,
Շնչեմ նրա տաք, հողեղեն բույրը,
Օրհնանքի նման դի՛ր այն դու գլխիս.
Թող դառնա բախտիս սրբազան խույրը:

Ափո՛ղ, որ հողի հաշտ մտերիմն է՝
Հողոտ, հողաբույր, հողի նման թուխ,
Ափո՛ղ, որ այգունն ու նաև իմն է,
Նրբին մի երգ է՝ պարզ ու սրտաբուխ...

Նրբին մի երգ է՝ ձոնված աշխարհին,
Եվ այնպե՛ս քնքուշ, երբ շոյում է ինձ...
Ափո՛ղ՝ կյանք տեսած, մեր հողի չափ հին,
Ափո՛ղ՝ ծնված մեր հանդիպման պահից...

Ազնիվ տքնանքի լեզուն է ափդ՝
Արդար ու շիտակ, առնական ու կոշտ,
Ափդ, որ իր մեջ կրում է թափդ,
Առեղծված է մի ու չասված մի խոսք...

Մոտեցրո՛ւ ափդ՝ գիրը վերծանեմ.
Ես հասկանում եմ նրա լեզուն բարդ...
Իմ ձեռքերո՛ւմ է ափիդ բախտն անքեն,
Քո ափի՛ մեջ է իմ բախտը հպարտ...

ՄԵՐ ՄԵՐԸ՝ ՊԵԳԱՍ...

Հրեղեն Պեգաս է մեր սերը մաքրամաքուր,
Մեզ իր մեջքին առած՝ թևում է բա՛րձր-բա՛րձր,
Տանում երկինքն ի վեր, ուր Աստծո գահն է թափուր,
Մեզ մի-մի Աստված օծում, մեզ տալիս Աստծո բարձր...

Յոթերորդ երկնքում մենք, բազմած Աստծո գահին,
Երջանկությամբ արբած՝ մեզ բախտի տեր ենք զգում.
Մարդկանց բախտ ենք բաշխում, բաժանում լույսն ու բարին.
Մինչդեռ այդ նույն մարդիկ մեզ երկնից վար են ձգում...

Ասում են.- Ցա՛ծ իջեք, ի՞նչ երկինք՝ փուչ է, մշո՛ւշ...
Մեզ պես կպե՛ք հողին, ինչո՞վ ենք Աստծուց պակաս...
Տո՛, Պեգասս ո՞րն է... մեզ պետք է լոկ ձիառ մժ.
Թո՛ղ մեր սայլին լծվի, որ ասենք՝ կեցցե՛ս, Պեգա՛ս...

- Լռե՛ք, անգո՛ւթ մարդիկ, բա՛ց թողեք դուք մեր փեշը.
Իրա՛վ, սեր-Պեգասի ճախրանքը ձեզ չի հուզել...
Դե՛, Պեգասը ձեզ՝ ի՞նչ... դուք գիտեք ու՛ ձեր էշը...
Թույլ չե՛նք տա Պեգասի լայն թևերը խուզել...

ՄԻՐՈՒՆ ՄԱՀ ՉԿԱ...

Մեր միջև, ավա՛ղ, սահման են գծում,
Պատնեշ են դնում մարդիկ անվարան,
Մեր բախտի գլխին ժեռ քար են զցում,
Սև քա՛ր են քաշում մեր սիրո վրա...

Ա՛խ, խաբուսիկ էր գուցե Բախտը մեր,
Գուցե նրա հունդն ընկել էր քարին...
Բայց չէ՞ որ սերը մեր երջանկաբեր
Կենաց ծառից է, ինչպես ն՛ բարին...

Սև քա՛ր են քաշում... Բայց, դե՛, քարն ի՞նչ է...
Մեր սիրուն երբեք մահ-վախճան չկա.
Կճեղքի՛ քարը, քարի տակից էլ
Նա ծաղկի՛ տեսքով լույս աշխա՛րհ կգա...

ՎԻՐԱՎՈՐԱՆՔ

Արցունքները իմ ցավահամ
Գլորվեցին հուլո՛ւնք-հուլո՛ւնք...
Ես քեզ ինչպե՛ս չհավատամ.
Դու՛ սիրո լո՛ւյս, հավատի խո՛ւնկ...

Ինչպե՛ս սիրուց գատել լույսը,
Հավատն ինչպե՛ս լինի անսուրբ...
Իրավունքի տերն է ուժը.
Սուտը ճիշտ է և ճիշտը՝ սուտ...

Եվ զարթնում է ցավն իմ ննջող,
Կանգնում պոչին՝ ինչպես օձը...
Արցունքներիս մանյակը ճոխ
Սեղմո՛ւմ է իմ պարանոցը...

ԱՖՐՈԴԻՏԵ

Այսքան չարության ու թույնի մեջ,
Այսքան նենգության ճահճում զագիր,
Սխրա՛նք է հոգով մնալը՝ մեծ,
Ունենալն՝ անփուշ ու սիրող սիրտ:

Եվ մեր այս խառնակ, անդեմ դարում,
Այս գորշության մեջ սին ու համառ՝
Ի՛նչ լավ է, որ դու կաս աշխարհում,

Ի՛նչ լավ է, որ դու կաս ինձ համար...

Քեզնով են ցրվում մլար ու մաղձ
Եվ չարը լուծվում բարու սրտում...
Ես քոնն եմ ցմահ միշտ սիրաբաղձ,
Միայն դո՛ւ ես, որ ինձ չես ստում...

ՄԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ

Շրջափակել են իմ ծաղիկ սերը՝
Մերն իմ ձյունաթույր,
Խեղդե՛լ են ուզում... չար են սրտերը,
Պաղ ու անհամբույր...

Բայց ի՞նչ կարող են անել, ախր, ի՞նչ...
Մերս գորե ղ է...
Թեև ապրում է խիստ անկարեկից,
Ու տեղը նեղ է...

Հավատն է սնում, ուժ տալիս նրան,
Մեկ էլ՝ քո սերը...
Եվ լուռ տոկում է սերն իմ հուրհրան,
Տանում իր բեռը...

Գիտի՛ գիշերվան այգն է հաջորդում
Արևածիծաղ,
Հաղթության գինի և խինդ է ողբում
Լոկ սիրտը խիզախ...

Չյունն ու սառույցն էլ շուրջկալում են խիստ,
Գործադրում ուժ,
Բայց ձյունը ճեղքում և դուրս է գալիս
Չնձաղի՛ կն անուշ...

ՄԵՐ ԷԼ ԿԱ, ՄԵՐ ԷԼ...

Մեր էլ կա, սեր էլ... Թե այն թաքուն է,
Մեղքի կնիքն է խարանված վրան,

Այդ սիրո ճամփան խիստ սայթաքուն է,
Տունն ավազեհիմք, անայուն, անզերան...

Փորձությունների շղթա է դա ձիգ,
Ամեն օղակը վտանգ է ու ահ,
Ապակյա տուն է՝ փխրուն, թափանցիկ,
Լուռ կշտամբանքի թիրախ է ցմահ...

Մեր էլ կա, սեր էլ... Բայց սերն այդ հաճախ
Դառնում է բազին և ինքնազոհում...
Ջուրն ու կրակն է նետվում նա անվախ,
Անցնում է մազե կամուրջներ բազում...

Խաչ է բարձրանում հպա՛րտ, անտրտո՛ւնջ
Ու վերի՛ց նայում սերերին կիսատ...
Փշե պսակը նրա գլխի շուրջ
Մեկեն դառնում է սուրբ լուսապսակ...

Մեր էլ կա, սեր էլ... Օ՛, կյանք կույր ու սին,
Ինչպե՛ն ես ջոկում արդար-անարդար...
Թե սիրո հունդը մնար քո հույսին,
Ո՛չ լույս կլիներ, ո՛չ էլ՝ կենաց ծառ...

ԱՆՀԱՆԳԻՍ ՄԵԿՆՈՒՄ

Այսօր պետք է մեկնես հեռո՛ւ, կապույտ ափեր,
Քեզ է սպասում հեզ արծաթե թռչունդ.
Նա քեզ վեր կտանի, ուր կան փետրե ամպեր՝
Փմփո լի-փմփո՛ւ իս բարձեր... Բայց կորել է քունդ...

Ա՛խ, կորել է քունդ և ժպիտդ անգամ,
Անհանգիստ խորհում ես, քայլում առաջ ու հետ.
Քեզ թվում է, թե դու կորցրել ես մեծ մի բան,
Շատ կարևոր մի բան, որ չես վերցրել քեզ հետ...

Ամեն ինչ տեղում է՝ ձերմակեղեն, շորեր,
Գրքեր, թղթեր, թղթեր... և քո սիրած սուրճը...
Սոռացվել է ի՛նչը, ախր, ի՛նչ է կորել.

Քունքիդ զարկերակն է անդող խփում մուրճը...

Օգնե՛մ ես քեզ, ջա՛նս... հապա մի լա՛վ հիշիր.
Սոռացել ես ինձ մոտ սերը քո աստղակուռ,
Կպահպանի այն ինձ խեթ սիրուց ուրիշի
Եվ ինձ, վերադարձիդ, քեզ կհանձնի մաքուր...

ԿԱՐՈՏ

Կարոտիս հավքի հրեղեն թնից
Մի փետուր ընկավ.
Ի՞նչ փետուր... սրտիս վրա վերնից
Շանթ ու հուր ընկավ...

Կարոտիս ձիու աչքերից ամպե
Մի կաթիլ ընկավ.
Ի՞նչ կաթիլ... հենց որ ուզեցի թամբել՝
Չյան փաթիլ ընկավ...
Եվ սիրտս, ահա՛, տանջվում է այսպես
Տաք ու պաղի մեջ՝
Իր կամքով մտած կարոտիս անտես,
Խելառ խաղի մեջ...

ԱՅՍ ՍԱՐԵՄՈՒՏԻՆ

Այս տարեմուտին սիրտս լցված էր,
Հոգուս մեջ համակ կսկիծ ու լաց էր...

Ժամը տասներկուսն, ահա՛, երբ զարկեց,
Ճոխ սեղանի շուրջ խրախճանք սարքեց...

Կենացնե՛ր, երզնե՛ր, մաղթանքնե՛ր շոայլ...
Իսկ դու հեռվում ես՝ մենակ ու մոայլ...

Եվ իմ աչքերում արցունքը շողաց,
Ցավիս ծանրությամբ պոկվեց, ընկավ ցած...

Ջրը՛նգ... հատակին փշրվեց անտես՝

Բյուրեղապակյա լի գավաթի պես...

ԱՅՍՊԵՍ ԷԼ ՊԱՏԻԺ

Եվ մնացել են իմ թևերը գիրգ՝
Առանց գգվանքի,
Ու թալկանում է պարանոցն իմ ձիգ՝
Առանց գրգանքի:

Միրո հայելի չդարձան բնավ
Աչքերն իմ աստղոտ,
Զիմացա անգամ՝ ոգի՞ եմ, թե՞ կավ,
Հա՞ սկ եմ, թե՞ գիժ խոտ...

Լռիկ շուրթերս կարո՞ւտ են, կարո՞ւտ
Համբույրի բոցին,
Անփորձ սրտիկս մնաց անծանոթ
Էրոսի ծոցին...

Այսպես էլ պատի՞ ժ... ինձ ո՞նց է գրկում
Բախտը մշտապես.
Ես ամեն գիշեր իմ բա՛րձն եմ գրկում,
Ոչ թե, ոչ թե քեզ...

ԿԱՆՉ

Այստեղ գարուն է, զարթոնք է համակ,
Երագ ու սեր է ամեն ինչ բուրում...
Միրտն իմ՝ շատերի սերերի դեմ փակ,
Մեր հին հուշերն է սիրով գուրգուրում...

Այդտեղ՝ քո հեռվում, դեռ ձյուն է, ձմեռ.
Ա՛ իս, քո սի՞րտն էլ է ցրտից սառցացել...
Մի՞ թե անգոր են ջերմ հուշերը մեր
Սրտիդ ձյուններում ձնծաղիկ բացել...

Թող սառն ու անկյանք հեռուները քո
Ու ե՛կ արևշող ափերն իմ կանաչ.

Գարունքված սրտիս արևի ներքո
Սրտիդ սառույցը կհալվի կամաց...

Գարո՛ւն կբացվի սրտումդ հավետ,
Եվ նրա կանչով անհայտից լուսե
Բախտիդ ծիծառներն անդարձ կգան հետ,
Սրտումդ սիրո բներ կհյուսեն...

ՓՈՒԹԱ՛, ՍԻՐԵԼԻ՛Ս...

Թվացել է հոգիս երկնի պես սևաչ.
Քո լույսն է փնտրում, բայց դու դեռ չկաս...
Շանթն է սրածում ն՛ ահյակ, ն՛ աջ.
Ճամփադ է բացում, ասա՛՛ ե՞րբ կգաս...

Երկնի արցունքն է ոռոգում հողը,
Զվարթ ժպտում են արդեն ծառ ու թուփ...
Ո՞նց գապեմ կախված արցունքիս դողը.
Սիրտս արցունքի ծո՛վ է ալեծուփ...

Փութա՛, սիրելի՛ս, հեռվից ինձ հասիր.
Մենության գայլը հոշոտում է ինձ...
Ես արցունքիս պես ջինջ եմ, անբասիր,
Մի՛ թող, որ իմ մեջ աճեն փուշ ու գինձ...

Փութա՛ ... ուր որ է՝ արտասուքն իմ թեժ
Կցայտի անգուսպ: Փութա՛, որ անսուտ
Մեր հանդիպմանը այն հորդի որպես
Երջանկության ու բախտի արտասուք...

Ա՛խ, Ո՞ՒՐ ԷՐ...

Դու գիտե՞ս, որ իմ կյանքում
Առաջին իմ սերն էս եղել.
Փնտրել եմ ես քեզ անքուն,
Դու՛ քնած, իմ տերն էս եղել...
Անցել եմ ծովեր սիրո,
Դու սրտիս թանկ բեռն էս եղել,

Ա՛խ, ո՞ւր է եզերքը քո.

Դու սիրուս մեծ լեռն ես եղել...

Ո՞ր՞ ԵՍ ԴՈՒ

Ցուրտ է: Մըսում եմ:

Սառցե մենության իմ չորս պատի մեջ՝

Ասես, դըսում եմ...

- Ո՞ւր է ձեռքերիդ խարույկը անշեջ...

Անլույս դողում եմ:

Իմ անկողնու մեջ պաղ ու ձյունափայլ՝

Ասես, հողում եմ...

- Ո՞ւր է շուրթերիդ հրդեհն՝ անկուշտ գայլ...

Ես ինչպե՞ս չլամ.

Ցավն է իմ հոգին խժռում որդի պես,

Ասես, ես չկամ...

- Ո՞ւր է քո սրտի արևը հրկեզ...

Ի՞նչ կյանք՝ առանց քեզ,

Բախտիս ոսկեկուռ դարպասներն են փակ,

Ասես, ե՛ս չեմ ես...

- Ո՞ւր ես դու, ո՞ւր ես, սե՛ր իմ դու միակ...

ԵՍ ՀԻՄԱ Ի՞ՆՉ ԱՍԵՄ

Ի՞նչ ասեմ... ես հիմա՝ այստեղ,

Դու հիմա, ա՛խ, այնտեղ ես նորից.

Մեր աստղը դարձավ մի ասեղ

Ու հիմա փայլկտում է ձորից...

Մեր ջուրը փոխեց իր հունը

Եվ հիմա չոր հանդով է հոսում...

Մեր հավքը թողեց իր բունը

Ու հիմա ի՞նչ հանգով է խոսում...

Մեր ճամփան դեմ առավ սարին,

Երկճյուղվեց, ա՛խ, օձի լեզվի պես...
Մեր կյանքի խոփն առավ դարին,
Եվ հիմա մեր սիրտն է երկու կես...

Մեր սիրտ լո՛ւյսն է կանչում ինձ,
Բայց ինչպե՞ս այդ լույսին ես հասնեմ...
Դու հիմա, ա՛խ, այնտեղ ես նորից,
Ես հիմա այստեղ եմ... Ի՞նչ ասեմ...

ԻՆՉՈ՞Ւ...

Եթե քո հեռվում կարոտում ես ինձ՝
Ինչո՞ւ հավքերը մի լուր չեն բերում,
Եթե վառվում է սիրտ ջահն անբիծ՝
Ինչո՞ւ հովերը մի հուր չեն բերում...

Եթե մտովի միշտ ինձ հետ ես դու՝
Ինչո՞ւ մեր աստղերն իրար չեն գալիս,
Եթե լսում ես հառաչն իմ հոգու՝
Ինչո՞ւ սար ու ձոր ճամփա չեն տալիս...

Սրտիդ հուրն ինչո՞ւ արև չի դառնում,
Ինչո՞ւ չես թևում ինձ մոտ քո հեռվից...
Երկինք ու երկիր ինչո՞ւ չես խառնում...
Եթե... տակավին սիրում ես դու ինձ...

ՎԱՂՆ ԷԼ ԿԼՌԻ

Բաժանումն այս ի՛նչ տառապանք է.
Մեկ ամիսն ինձ դար թվաց...
Անմատույց բերդ ու կուսավանք է.
Շատն անցավ, քիչը մնաց...

Եվս չարչրկված մի ձիգ գիշեր՝
Եվ կգա պահն անձկալի.
Հանդիպման հրճվա՛նք, համբույր ու սե՛ր...
Իսկ սիրտս այնքա՛ն է լի...

Բայց լեզուս երկչոտ մի թռչուն է,
Սակված՝ ինքն իր բնում,
Վաղն էլ կլոխի, ինձ կրծում է
Իմ Եսը, որ չի քնում...

Վաղն էլ կլոխի լեզուս, գիտեմ,
Չի երգի իմ սրտի պես,
Չի փռի հոգուս բերքը քո դեմ,
Իմ սերը չի պատմի քեզ...

Չի ասի. «Ախր, գիտե՞ս, իմ լա՛վ,
Հոգիս քեզ չի մոռանում.
Իմ սերն արբեցնող գինի դարձավ
Փակ սրտիս մութ մառանում...»:

ՄՈԼՈՐՎԵԼ ԵՄ

Ես քեզ շատ եմ մերժել կյանքում
Ու վարվել եմ քեզ հետ դաժան...
Դու շրջել ես սիրուց անքուն,
Ինձնից քշված, ինձնից բաժան...

Ճամփաներ ես մաշել բազում՝
Թափառական ասպետի պես,
Ինձ տեսել ես միշտ երազում
Եվ խնկարկել՝ Աստծուն ի տես...

Հազար սեր է քեզ հանդիպել,
Հազար ծաղիկ, հազար սիրուն...
Բայց ոչ մեկին դու չես դիպել՝
Հավատարիմ քո մեծ սիրուն...

Դու՝ ասպետդ անգուգական,
Այսօր ինձ ես եկել նորից...
Բայց ես ինչպե՞ս նշանս տամ.
Մոլորվել եմ, հավատա՛ ինձ...

Ա՛խ, դու նույնն ես, ես եմ նորը,

Ի՞նչ կարող եմ ես քեզ ասել.
Չկա ձեռքիս ալ խնձորը.
Ուրիշին է բաժին հասել...

ՕՐԵՆՔԸ ՄԱ Է
Պատովել է սպիտակ թիկնոցը սարի.
Բացվել է ուսը...
Կանաչ ասեղն է թելել եղևնին բարի.
Չի կտրում հույսը...

Տարված պարթև հսկայով՝ չի տեսնում խեղճը,
Որ սարը պաղ է.
Սարի համար միևնույն են սկիզբն ու վերջը.
Ամեն ինչ խաղ է...

Գնամ ընկնեմ ոտքերը այդ սար-հսկայի,
Ասեմ՝ ո՛ր տուր ինձ...
Ա՛խ, ես էլ քար լինեի՝ ոչինչ չզգայի՝
Ո՛չ սեր, ո՛չ կսկիծ...

Թե չէ սիրտը՝ մի ծաղիկ, իսկ բիրտը սար է.
Նա ինչ էլ անի՝
Սարի կրծքին կծաղկի. օրենքը սա՛ է
Այս քար աշխարհի...

ՄԻՆՉԴԵՌ ԱՅԼ Է ԻՄԸ
Դողդողում է գարունն ու սրթսրթում մանրիկ՝
Զգեստի մեջ ձերմակ, շղարշաձյուն,
Ինչպես խակ աղջնակ՝ սառած ձեռք ու մատիկ
Տաքացնում իր շնչով՝ աչքն Աստրծուն...

Հարսնացել է գարունն առաջին իսկ սիրուց՝
Խաբված՝ արեգակի մի համբույրից...
Հիմա հակինթ-հակինթ արցունքում է կուց-կուց,
Հովն է գժվել նրա բույր ու թույրից...

- Գարո՛ւն, խաբվա՛ծ աղջիկ, գարուն, խաբվա՛ծ իմ քույր,
Տոկա՛ սիրո ցավին՝ վերքդ փակիր,
Սերդ անշեջ պահիր, սերդ պահիր մաքուր.
Կջերմանա և սիրտն արեգակի...

Մինչդեռ այլ է իմը. ես էլ գտա սերն իմ,
Ես էլ թիրթռի պես հանգա սիրուց...
Չի ջերմանում, սակայն, չի հալվում տակավին,
Ավա դ, նրա սիրտը կարծրաստույց...

ՄԵԿ ՈՒՐԻՇԸ

Թռչնա՛կ իմ, սիրո երգիդ
Միանում է մեկ ուրիշը,
Փառք տալիս սիրող սրտիդ,
Հիանում է մեկ ուրիշը...
Ո՛ւր է քո ընկերն անհոգ.
Լիանում է մեկ ուրիշը,
Քո վհատ մերժմանն անօգ
Դիմանում է մեկ ուրիշը...

ՑԱՎՈՏ Է

Խնայի՛ր սիրտս սիրող.
Ցավո տ է խանդի կծածը,
Եվ ինքդ սրտիդ մի՛ թող
Վերցրնի գետնին գցածը...
Սափորը ջինի մի՛ բաց.
Թո՛ղ փակված մնա խցածը,
Դու քո սահմանում միշտ կաց,
Մի՛ անցիր Աստծո գծածը...

Ո՞ՐԻ ԵՆ

Ո՛ւր են նախկին այն հուզումը,
Սրտիս անլուր փլուզումը,
Հանկարծահաս այն տագնապը,
Այն ցուրտ դողն ու խեղդող տապը...

Ո՞ւր են նախկին մոլորվելը,
Երազներում օրորվելը,
Դեմքս այրող այն շիկնանքը,
Ոտքից գլուխ կախարդանքը...

Ո՞ւր են նախկին սիրո բոցը,
Խանդի օձը, սրտիս խոցը...
Ո՞ւր են, հապա, ո՞ւր են կորել.
Հիմա հոգուս ցավն է նորել...

Հիմա դրանք, ավա՛ղ, չկան...
Հիմա, ինչպես աչքը ձկան՝
Դու ես անթարթ մեխված իմ դեմ,
Դու ես ինձ հետ՝ այնպե՛ս անդեմ...

Ա՛խ, այնպես պաղ ու անկրակ,
Այնպե՛ս ու դատարկ ու այնպե՛ս փակ...
Որ ուզում եմ ցավից անձուկ
Ճչալ ուժգին՝ մա՛րդ ես, թե՛ ձուկ...

ՁԵՌՔՍ ՉԻ ԳՆՈՒՄ
Ձեռքս չի գնում, գիտե՞ս,
Որպեսզի զանգ տամ քեզ հեռվից,
Որպեսզի «Բարև՝...» ասեմ քեզ,
Փրկվեմ հոգեմաշ այս բեռից...
Ձեռքս չի գնում... բայց, չե՛,
Կախված եմ, ասես, մի կեռից,
Որ է՛լ չեմ կարող փախչել
Հիմա ո՛չ Աստծուց, ո՛չ նեռից...

ՄԻ ՄԱԶԻՅ...

Ի՞նչ խղճով պիտի ինձ գաս,
Երբ խիղճդ հեռվում թաղել ես...
Ի՞նչ ունես, որ ինձ ի՛նչ տաս.
Պատիվդ անգամ ծախել ես...

Դադել ես սիրող սիրտս,
Ինձնից՝ ի՞նչ... Աստծո՛ւց պաղել ես...
Քեզ ինչպե՞ս առնեմ գիրկս.
Հոգիդ մի մազից կախել ես...

ՑԱՎԻՍ ՃԻՉԸ ՍՈՒՐ

Տխրության ամպն է իմ սրտին իջել
Եվ ջուր է խմում սիրո ակունքից.
Սպասման հուրն իր պաղ շնչով շիջել,
Լուռ կծկվել է ցավի երկունքից:

Եվ կուտակվում են թախծի թուխպերը
Ու խտանում են, խռնվում անվերջ...
Ես ինչպե՞ս տանեմ ցավիս այս բեռը,
Ես ինչպե՞ս խեղդեմ ցավիս ճիչն իմ մեջ...

Թվում է, եթե սիրտս պատռի այն՝
Ցավիս ճիչը սուր, դուրս թռչի, իրավ,
Ճիչն այդ կբռնի աշխարհն իսկ համայն,
Բայց դու՝ իմ կողքին, չես լսի բնավ...

ՁԵՁ ԵՄ ԵԿԵԼ

Ես նորից ձեզ եմ եկել,
Իմ սիրո զարնա՛ն վայրեր,
Միրո դասն այստեղ հեգել,
Այրվել եմ, նան՝ այրել...
Իմ անփորձ տեղով անգամ
Պեղել եմ սիրո այրեր...
Երանի՛ ինձ դեռ կտան
Միրո մեջ փորձված գայլեր...

ՆՈՐ ՑԱՎ

Այս երկնքի տակ եմ նորից,
Այս լեռների հովանու տակ.
Քանի՛ դար է այն թանկ օրից

Հոսել հուշի ձորը անտակ:

Գրկում եմ ես այս հովերի,
Այս ծաղկունքի բույրերի մեջ.
Արցունքներիս բիլ ծովերի
Շառա՛ չն է իմ հոգում անվերջ...

Այս աստղերն են աչքով անում,
Ժպտում նորից ծանոթի պես.
Կարոտներս աչքը բանում
Եվ դառնում են խայթող բզեզ...

Այս նույն հողն է, այս նույն ջուրը,
Նույն հավքերն են, նույն երգերը.
Չէ՛, չի մաքել սրտիս հուրը,
Արնում են դեռ հին վերքերը...

Այս ամենը նույնն է, իրոք,
Եվ ամեն ինչ այնպես լավն է.
Նորը միայն՝ իմ հին սիրո
Հին կորստի այս նոր ցավն է...

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱՆԿԱՐ

Երազային քող է իջել
Ճերմակ գառներ բլուրներին.
Աքաղաղն իր երգն ընդմիջել,
Ունկ է դրել բլուրներին...

Վանքի զանգերն են դողանջում՝
Աղոթքի պես երգեհոնի,
Սիրուց գժված՝ մոտ է կանչում
Ծաղկազգեստ մի ցովի հոնի...

Իմ սիրտն էլ է ծաղկել սիրուց,
Գարունքվել է երկրիս նման,
Սերս լույս է ժայթքում խուրձ-խուրձ՝
Դառնալով իմ բախտի վկան...

Խառնվել են գույնե՛ր, բույրե՛ր.
Հեքիաթային գորգ են, կարծես,
Ամպերն՝ ինչպես կարապ քույրեր,
Թոցնում են գորգն այդ անտես...

Երկնքի փեշն են բարձրացնում,
Ծերուկ Աստծուն հանում քնից.
- Ի՞նչ էս ամեն ինչ բարդացնում.
Մի դո՛ւրս նայիր, ելի՛ր տնից...

Ներքևո՛ւմ է դրախտը քո.
Այս լեռների մեջ՝ ծվարած,
Գոյն այստեղ է, վերում՝ անգո...
Դուռդ փակի՛ր և իջի՛ր ցած...

ՋՐՎԵԺԸ

Ջրվեժը ցատկեց ժայռից.
Վար ընկավ, խփվեց քարերին,
Վնասեց ծունկը, բայց ի՞նչ...
Քրքջաց խելառ՝ բարքով հին...

Թափ տվեց փեշերն իր լայն,
Մեթներթ պարեց ու խայտաց...
Ես գիտեմ՝ ի՛մն է միայն
Նրա խենթ պարը՝ մերկ ու բաց...

Աղջիկ է փրփրաշղարշ,
Պարում է անգուսպ ինձ համար,
Ճախրում է՝ ցավին իր վարժ,
Ապրում է պարով իր համար...

Նա սիրո պռոթկում է վես.
Ինչքա՛ն նման է իմ սրտին...
Իմ սիրտն է սիրո ջրվեժ,
Թներ է տվել ինձ կրկին...

Նա կյանքի դաս է հավերժ,
Նա կյանքի սեր է, բախտի հուն...
Եղածը՝ փոքրիկ ջրվեժ,
Խորհուրդը՝ ն՝ մեծ, ն՝ անհուն...

ԲԱՐԵՎՆ ԱՍՏՕՈՒՆՆ Է

«Բարևն Ասածունն է», - ասում էր պապս,
Խաչակնքվում էր և լուռ աղոթում,
«Բարևն Ասածունն է, - ժպտում էր հայրս,-
Դա համակ սեր է, որ լույս է հորդում...»:

- Բարևն Ասածունն է,- կրկնում եմ և ես՝
Խայթված մեր դարից՝ պաղ ու անժպիտ,-
Բարևը մարդն է՝ Աստծո նման վես,
Սեր ու հավատ է, հոգի է ու սիրտ...

Բարևի պակաս՝ ինչքա՛ն ասես՝ կա,
Բայց, այ, ավելցուկ չի լինում երբեք.
Բարևը կյանքի հիմն է աներկբա,
Բարության լույսն է, ժպիտ է ու երգ...

Ջերմ բարևից է ծնվել իմ սերը,
Այն սիրո հուր է տվել իմ սրտին,
Բարևն է վառել հոգուս լույսերը.
Երբ բարևը կա, տեղ չկա ստին...

ԹԵ ՀԱՆԿԱՐԾ ՉԳԱՍ...

Քո սիրտը չի՞ թպրտում.
Ահա՛, ես նորից այստեղ եմ,
Քեզ ինձ մոտ չի՞ շպրտում.
Քո բախտի կանչող աստղն եմ...
Չկայի այսքա՛ն տարի,
Ասես, մի կորած ասեղ եմ...
Թե հանկարծ չգաս, իմ բարի՛,
Կրակի տրված տաշեղ եմ...

ԼՈՒՅՍՈՎ ԱՐԻ

Դա լույսով արի, իմ լավ,
Բեր ինձ ծաղիկներն աշխարհի...
Չեմ սիրում մուրը բնավ.
Գիշերը չար է, ահալի...
Շոտ ատարի, որ շուտ գնաս,
Որ մուրը չընկնի, իմ բարի...
Իսկ եթե ինձ մոտ մնաս,
Գիշերը թող հար երկարի...

ՄԻ ՔԱՆԻ ԿԱԹԻԼ

Մի քանի կաթիլ անձրև...
Եվ անապատն էլ կծաղկի.
Իմ սիրտը քառս անձև,
Որին ոչ մի բան չի հաղթի...
Կարող ես, սե՛ր իմ, լույս դու
Լույսե՛րը վառել իմ բախտի.
Մի քանի կաթիլ սեր տուր
Եվ տե՛ս իմ սիրտն էլ կծաղկի...

ԺԵՌ ՔԱՐ

Դաջված է ոտնահետքս
Այս ճամփին, քարին ու սարին,
Ձուլված է ջահել հեքս
Այս ծաղկանց բույրին ու պարին...
Խենթ սիրո կարոտն է թեժ.
Սիրոս զարկում է ժեռ քարին,
Ժեռ քար է իմ սիրտն էլ գեժ.
Հրի՛ է մատնել հազարին...

ՄՐՏԻՍ ՍԱՀԱՆՔՆԵՐՈՒՄ

Սրտիս սահանքներում սիրո քանի՛ մակույկ,
Քանի՛ նավ ու նավակ խորտակվեցին անդարձ,

Կործանվեցին անլուր քանի՛ նավագ առույգ,
Հանգան քանի՛-քանի՛ խոլ հրդեհներ անսանձ...

Փշրվեցին, անցան... կուլ գնացին ընդմիջտ,
Իջան իմ խենթ սրտի խորխորատներն անգոց...
Եվ իմ սիրտը հիմա դարձել է ճիշտ և ճիշտ
Սիրո մակույկների անհայտ գերեզմանոց...

Ու թե սրտիս խորքից պոռթկում են դեռ մեկ-մեկ
Ցավ ու հառաչանքի փոթորիկներ ծավի,
Գլխի՛ էլ չեմ ընկնում՝ նավագնե՛րն են այն հեգ,
Թե՞ իմ սիրտն է, որ արդ մորմոքում է ցավից...

ԱՆԱՐԴԱՐ ԵՍ, ԿՅԱ՛ՆՔ...

Վիշտ ու ցավերս
Հոգուս տանն իրենց ոտքը պնդել են.
Հե՛յ-վա՛ իս, լավերս
Շողի պես թռել, կյանքս խնկել են...

Նրանցից հետո
Իմ կյանքում նրանց տեղը դատարկ է.
Լուսեղեն հետքով
Կարոտն իմ սրտում պայթունակ արկ է...

Հուշերիս ցանցը
Միշտ լի է նրանց անգո գոյությունբ.
Իմ հոգու կանչը
Հրեղեն ձի է՝ անսանձ ու անթամբ...

Նրա թևերին՝
Մուրամ լուսավոր երկինքներն ի վեր,
Խորհուրդով վերին
Գտնեմ ես նրանց, տամ գգվանք ու սեր...

Բայց ո՞ւր են նրանք՝
Հոգուս մտերմիկ, անզին լավերս...
Անարդար ես, կյա՛նք.

Ինձ հռչակում են վիշտ ու ցավերս...

ՕԳՆԻՐ ԻՆՁ, ԼԵԹԱ՛

Օգնի՛ր ինձ, Լեթա՛, մոռացման իմ քույր,
Քո հորդ ջրերից մի կաթի՛ լ ինձ տուր...

Տո՛ւր... մաքրեմ տիղմը տտիպ հուշերիս,
Որ ծանրացել է սրտիս, ուսերիս...

Որ կարծրացել է մտքիս պատերին,
Իր մեջ խեղդել՝ ինձ սիրող շատերին...

Հուշերն իմ այրող, հուշերն իմ խառը
Սիրտս խարանում, ժպտում են սառը...

Ջրիմուռի պես փաթաթվում ոտքիս՝
Իրենց են քաշում թևածող հոգիս...

Օգնի՛ր ինձ, Լեթա՛, եղի՛ր կարեկլից,
Քանի դեռ ուշ չէ, փրկի՛ր, փրկի՛ր ինձ...

Քանի չեմ խեղդվել, մաքառում եմ լուռ,
Անսա ... մի արցունք՝ մի կաթի՛ լ ինձ տուր...

Չէ՛, կաթիլն ի՛նչ է... կաթիլն ի՛նչ անի...
Այսքան կուտակվածն ինչպե՞ս կտանի...

Ջրերիդ հունն էլ թե՛ իմ կողմ թեքես,
Ավգյան հուշերն իմ չե՛ս անի դու կես...

Չե՛ս քշի տանի... չե՛ս մաքրի երբեք.
Թեկուզ փրփրես, հառաչես բեկբեկ...

Անզոր ես, Լեթա՛, մոռացման իմ քույր,
Ես էլ, ա՛խ, որքա՛ն անմիտ եմ ու կույր...

Կյանքիս մակույկը նավում է քանի՛

Հուշերիս բեռներն իր հետ կտանի...

ՈՍԿԵ ՕՂԱԿ

Ջահե՛լ տղա, սիրո՛ւն տղա,
Սիրահարվա՛ծ դու պատանի,
Թո՛ղ ինձ, ճամփադ գնա խաղադ.
Մերն այդ, ախր, ո՞ւր կտանի...

Դու՛ դալար ուռ, ես՛ պիրկ կաղնի,
Դու՛ դեռ ծաղիկ, ես՛ հասուն նուռ...
Ախր, բախտդ քարին կառնի,
Եվ չես գտնի փրկության դուռ...

Դու քո սիրո ճամփան պահիր.
Կգա շուտով աղջիկն այն լույս,
Որ քեզ կտա սիրող սիրտն իր՝
Որպես արև ու արշալույս...

Իսկ ի՞նչ կտա սերն իմ, գիտե՞ս...
Ի՞նչ մատանի... դեռ շատ ես խակ.
Այն շատ շուտով կթվա քեզ
Սի՛րտդ սեղմող ոսկե օղակ...

ՍԻՐՈ ԱՌԱՍՊԵԼ

Քամին մի պահ երկմտեց,
Հետո վախով կամթեց
Մասրենու թուշը:
Կարմրեց խեղճն ամոթից
Ու վռնդեց իր մոտից...
Պահեց լոկ հուշը:
Սրտում վառվեց տանջող հուր,
Ցավից ելան փշեր սուր
Մասրենու վրա,
Մերժված քամին երբ գնաց,
Փարվեց բարդուն ու մնաց
Ջերմ գրկում նրա...

ՄԻՐԱՎԵՊ

Դու՝ գարնան ժիր առվակ մի իւենթ,
Ծնվեցիր ծեր, ձյունոտ սարում
Եվ ցած իջար խաղով վետվետ՝
Չիմանալով՝ ի՛նչ կա վարում...

Անցար հազար ձոր ու կիրճով,
Քո դեմ ելան սար ու քարեր,
Դու ծաղրեցիր սուր քրքիջով.
Չցանկացար սառցե գահեր...

Հանդիպեցիր կյանքի հովտում
Գույն-գույն ծաղկանց՝ թովիչ, կանչող...
Եվ, մոռացած հանգիստ ու քուն,
Ընկար նրանց գիրկը տանջող...

Ու տրվեցիր դու մինչև վերջ՝
Ջրեցիր քո սիրով նրանց...
Չհագեցրի՛ն բույրերով խեղճ
Նրանք հոգուդ ծարավն անանց...

Եվ դառնացած դու հեռացար.
Արցունքներից դարձար մեծ գետ...
Խուլ հառաչով առաջ անցար՝
Չնայելով երբեք է՛լ հետ...

Չգիտեիր՝ ճամփիդ վերջում
Միրակարոտ ու նորաբաց
Մի ծաղիկ է քեզ անրջում,
Սրտիկն՝ անուշ, աչքերը՝ թաց...

Բայց դու արդեն՝ վարա՛ր մի գետ,
Նա՛ մի ծաղիկ փոքրի՛կ, քնքո՛ւշ...
Կործանվեցիք դուք իրար հետ՝
Միրուց ձեր մեծ, սիրուց այդ ուշ...

ՄԵՐԵՐՆ ԻՄ ՄԱՔՈՒՐ

Անդարձ չվում է երամն օրերի՝
Տանելով իր հետ հուշերիս բեռը.
Իմ այդ հուշերին դարձել եմ գերի,
Գերի են նաև իմ կյանքն ու սերը...

Քայլում եմ ես էլ օրերի հետքով,
Միրտս է տրոփում հանգով հուշերի.
Ձեռքով են անում սերերս հերթով,
Որ վերածվել են վերին ուժերի...

Որ աստղացել են կյանքիս երկնքում
Եվ աստղերի պես իջխում են հոգուս...
Ես իմ հին ու նոր սերերն եմ խնկում,
Սերերն իմ մաքուր, ա իս, սերերն իմ կույս...

Նրանք բոլորն էլ ապրում են իմ մեջ,
Եվ ամենքի մեջ ես հենց ինքս կամ.
Այդ է՞ս եմ նրանց ապրեցնում անվերջ,
Թե՞ հենց նրանք՝ ինձ... ես ինդա՞մ, թե՞ լամ...

ՈՉԻՆՉ...

Միրելի՛ս, հոնքդ դու բաց,
Միասին ե՛կ խմենք գինի,
Սեղանին՝ պանիր և հաց...
Հո՛գ չէ, որ չկա ճոխ սինի...
Կապրենք, չենք մեռնի, ոչի՛նչ...
Վհատվա՛ծն Աստծուն թո՛ղ դիմի.
Հավատա՛ հոգո՛վ դու ինձ՝
Ամեն ինչ շա՛տ լավ կլինի...

ՉԵՄ ՏՐՎՈՒՄ

Ձյան քուրքը քրքրվել է.
Բացվել է տեղ-տեղ ձնծաղիկ,
Թերթերին լուռ փռվել են

Շողշողուն բյուր շող ու շաղիկ...
Հին խոտը լեռան լանջին
Կապել է քեչա ու թաղիք...
Չեմ տրվում ցավի կանչին.
Սրտիկս սեր է ու տաղիկ...

ՍԵՐ-ԳԱՐՆԱՆ ՇՆՉՈՎ
Մի ամբողջ ձմեռ անցավ.
Ես, տանը փակված, թթվեցի,
Չորս պատս՝ անձուկ անձավ.
Պատեպա՛տ անվերջ խփվեցի...
Չովե՛ց կյանքն ինձ ոչինչ.
Լոկ երագանքո՞վ բտվեցի,
Իմ սրտի լուսեղ ու ջինջ
Արցունքաջրո՞ւմ եփվեցի...
Մինչև որ ոտքս եկավ
Գարո՞ւնը... նրան հավեցի,
Փակ հոգիս՝ գինու լի գավ,
Բացեցի... հետը շփվեցի...
Սեր-գարնան շնչով այնքա՛ն
Ես ներսուղրսից գտվեցի,
Թվաց՝ ես ես չեմ. անգամ
Ինքս իմ աչքում ստվեցի...

ՄՐՏԻ ԿԱՆՉ
Մշուշը գալար-գալար
Փովել է լեռան լանջերին.
Կարոտս պալար-պալար
Փարվում է սրտիս կանչերին...
Թռչել է ուզում հոգիս
Եվ հասնել այն թուխ աչերին,
Որոնցով դարձել է գիժ,
Ձեռնոց է նետել քաջերին...

ԼՈՒՅՍԸ ԿԲԱՅՎԻ

Գիշերը երկարում է.
Դիմացի՛ր, լույսը կբացվի,
Հոգիս լուռ մերկանում է.
Միացի՛ր, լույսը կբացվի...
Ամեն ինչ ունի սահման.
Մի՛ անցիր, լույսը կբացվի,
Եթե քեզ ես ինքս գամ,
Իմացի՛ր՝ լույսը կբացվի...

ԵՐԱԶ

Իմ սիրո շքեղ մանյակից պոկված
Ու վաղուց կորած գոհարը գտա.
Բացեց իմ հոգին թևերն իր հոգնած,
Եվ ես ոսկեդուռ դրախտը մտա...

Ի՛նչ երջանկություն, բախտի ի՛նչ վայելք,
Հոգու ճաճանչում, խրախճանք լույսի...
Սրբագույն սիրո խնկահոտ վերելք,
Հավատի ժայթքում, ծիածան հույսի...

Այնպե՛ս թեթև էր հոգիս սավառնում
Սահմանագծում կյանքի ու մահվան.
Աստծո հետ նստած՝ տալիս էր, առնում.
Չկար արգելանք ու չկար սահման...

Կորած-գտնված գոհարն իմ սիրո
Շողում էր, կանչում հեռվից երկնասույզ,
Հոգիս դյուրեւում էր իր աստղածիրով.
Կար լոկ երազանք, քնքշանք, սեր ու հույզ...

Այնքա՛ն չքնաղ էր պահն այդ դյութական.
Երազ կյա՛նք էր, թե՛ արթմնի երազ...
Գոհարն իմ սիրո՛ իմ գոյի վկան,
Իր լույսով ինքն ինձ գտավ հազիվհազ...

Ես աղջիկ էի դեռ խակ՝
Բալենու քնքուշ մի ծաղիկ,
Դու՝ տղամարդ՝ շուրթդ փակ,
Քարակիպ մամուռ՝ գորշ թաղիք...
Քո վարից ինձ չհասար.
Ես՝ վերում, շուրթիս՝ բյուր տաղիկ...
Քեզ հասա, երբ ընկա վար՝
Արդեն չորացա ծ մի ծաղիկ...

ՅՈԹ ՄԱՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Յոթ սարից այն կողն, յոթ ծովից այն կողմ,
Հեռվից հեռու էլ զգում եմ ես քեզ.
Միտքս՝ մոլեգնած, ամեհի մի հողմ,
Կարոտիս ճամփան անցնում է անտես...

Հասնում է քեզ ու փարվում սիրատենչ,
Համբուրում զգվող աչքերդ տամուկ,
Թողած սրտիս հետ ամեն մի հին վեճ՝
Ճոճվում է հուշի թևերին դալուկ...

Եվ մինչ սարսում ես դու իմ անթափանց
Լռության հսկա սառցապատնեշից,
Միրտս, իր սրտի լավան դուրս թափած,
Հրաբխում է՝ վառվելով ներսից:

Ու զրնգում են նյարդերս բոլոր՝
Որպես քնարի լարեր թրթռուն,
Մաշված խոսքերի դաշնակները նոր
Թնում են հոգուս լուսագոծ հետոն...

Ես անկարող եմ զսպել իմ հոսքը՝
Վճիտ խոսքերի ներհոսը իմ մեջ.
Ո՞ւր է գորավոր այն միակ խոսքը,
Որ լույս հավատի գավազանն է մեծ...

Ո՞ւր է և հավատն այն անվերապահ,
Որ գա, դեմն առնի անզուսպ ներհոսիս...

Կլինի՞, արդյոք, կլինի՞ մի պահ,
Որ ես ինձ չզգամ լքված օազիս...

Որ ինչպես ես եմ զգում քեզ անձայն՝
Անգո խոսքերի հեռվից անողորմ,
Դու էլ ինձ զգաս իմ մեծ լռության
Յոթ սարից այն կողմ, յոթ ծովից այն կողմ...

ԻՆՁ ԿՈՉՈՒՄ ԵՆ ԿԻՆ

Իմ մեջ ապրում եե հրաշքը գարնան,
Զարթոնքը կյանքի
Եվ ճիչն այն մանկան,
Որ սպասում է գալստյան զանգին...

Իմ մեջ ապրում են սաղմը մարդկության
Եվ կենաց հունդը...
Ո՞վ չի համաձայն՝
Ինձնով է կանգուն այս երկրագունդը...

Իմ մեջ ապրում են բարին ու լույսը,
Վեհն ու չքնադը,
Հավատն ու հույսը,
Արևի շողը, երկնքի շաղը...

Իմ մեջ ապրում են մարդը և Աստված,
Երկիր ու երկին...
Ես ջուր եմ և հաց.
Միշտ և ամենուր ինձ կոչում են... կին:

ՏԽՈՒՐ ԵՐԳ

Ես մեռած լինեմ, դու ինձ մոտենաս,
Մոտենաս՝ վշտի փուշը քո սրտում,
Իմ սնարի մոտ գլխահակ մնաս,
Լինես դալկահար ու լինես տրտում:

Ներքուստ մեղավոր զգաս ինձ մոտ քեզ,

Ձղջման արցունքներ աչքերում քո ջինջ՝
Լուռ հակվես վրաս, համբույրով հրկեզ
Այրես պաղ շուրթս և... չզգաս ոչինչ:

Ու երբ նվաղես՝ սրտումդ մրմուռ,
Ես այդ նույն պահին աչքերս բանամ,
Ա՛խ, երջանկացած համբուրեմ քեզ լուռ
Եվ քո գրկում գոհ... նորից մահանամ...

ՀԵՆՑ ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Հենց առաջին օրը՝ ձյունը եկավ,
Հենց առաջին օրը՝ նստեց փափուկ,
Ձմեռը ոլորեց բեղերն իր թավ
Ու համբուրեց օրվա թուշը տաքուկ:

Աստղեր ցիրուցանեց աչքերիս մեջ,
Ճերմակ երազանքներ՝ սրտում իմ կույս,
Փաթիլների նման ցավս փափկեց,
Արցունք դարձած՝ կաթեց գիշերն ի լույս...

Ի՛նչ վարպետ է խաղում ինձ մոտ կյանքը,
Բախտն ինձ համար եղավ դատարկ մի գավ...
Իսկ գարունքիս իմ լավ ծիծեռնակը
Հենց առաջին օրը ինչո՞ւ չեկավ...

Ի՞ՆՉ ՄԵՂԱՎՈՐ ԵՄ

Փաթիլվող	ձյունն	իմ	վարսերը	սև-սաթ
Առել է	իր	պերճ	ծամկալների	մեջ.
Սաղափե	բոցով	վառվում	են	հատ-հատ
Գոհար-փաթիլներն աստղոտ, սիրատենչ...				

Ցուրտը կծում է այտերն իմ շիկնած,
Ձյան բյուրեղիկներն արդեն ծակող են.
Ներս են թափանցում օձիքից իմ բաց...
Որքա՛ն հանդուգն ու սառցակող են:

Իսկ ես քայլում եմ, քայլում անշտապ,
Թիկունքիս մարդկանց զարմանքի բեռը.
- Հարբած չեմ կամ խենթ... սթափ եմ, սթափ.
Պարզապես, մե՛ծ է կարոտիս լեռը...

Պարզապես, շուտ եմ եկել հանդիպման.
Սիրուց չեմ զգում ո՛չ ձյուն, ո՛չ սառույց...
Ի՞նչ մեղավոր եմ, որ ես այս անգամ
Իմ սի՛րտն եմ ընտրել որպես ժամացույց...

ՇՈՒՐԹԵՐԻՍ ԲՈՅՇ

Շուշա՛ն փաթիլներ,
Փաթիլներ ք լուսե, իզուր եք փորձում
Պաղ մատներով ձեր
Մարել շուրթերիս բոցը ոլործուն:

Ախր, մի տեսե՛ք՝
Ո՛նց եք արտասվում անգործությունից.
Ինչքան էլ քսեք
Ձեր շուրթը շրթիս, չե՛ք օգնի դուք ինձ...

Դատարկ փողոցը
Գաղտնիք կպահի՛ լեզո՛ւն է սառել.
Շուրթերիս բոցը
Իմ սիրելիի համբո՛ւյրն է վառել...

ԴՈՒ ԻՆՁ ՄԻ՛ ԺՊՏԱ

Դու ինձ մի՛ ժպտա.
Մոզական ուժ կա
Քո սֆինքսային, լուռ ժպիտի մեջ.
Այն տաքուպաղ է,
Գույնների խաղ է,
Որ վետվետում է դեմքիդ անընդմեջ:

Ժպիտդ գերող՝
Ոսկեթել մի քող,

Պարուրում է քո դեմքը և հոգին...
Ես ձանձրանում եմ.
Ա՛խ, թանձրանում է
Տարակուսանքիս հեղձուցիկ շոգին...

Դու ինձ մի՛ ժպտա,
Ավելորդ է դա,
Վա՛ր առ ժպիտիդ քողը քո դեմքից.
Պետք չէ քողարկող
Ո՛չ դիմակ, ո՛չ քող,
Թող որ ներս մտնեմ քո հոգու շեմքից...

ՊՅՈՒՌՈՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿ

... Ու ես ոչ մի կերպ, ոչ մի ժամանակ
Այդպես էլ բնավ, չէ՛, չընտելացա
Կասկածի թույնին՝
Անվստահության ժահրով թաթախուն,
Որ կաթեցվում է մերթ որպես հանաք,
Մե՛րթ որպես լուրջ խոսք, մե՛րթ՝ ակնարկ ծախու,
Մեր ականջի՛ մեջ, հոգո՛ւ մեջ, սրտի՛ ...
Եվ ջնջում բոլոր սահմանները թանկ՝
Լույսի ու մութի արանքում եղած,
Ճշմարտության ու անպատիվ ստի...
Սև թուք է խառնում անաղարտության
Սպիտակ գույնին...
Այդպես էլ բնավ ես չընկերացա
Աննրբանկատ խոսքերին դեղած,
Ինձ չմատնեցի տխուր պարտության՝
Առնելով վրաս պիտակն ամոթի,
Կրելով տտիպ թույնը կասկածի...
Ախր, հասկացի՛ր՝
Ձեռք չբերեցի սև կասկածի դեմ
Անընկալության և ոչ մի փշուր,
Ո՛չ մի հակաթույն...
Եվ, որպեսզի ես զանազանել տամ
Ճերմակը սևից,
Լուծել տամ վեճը լույսի ու մութի,

Կասկածի դևից
Խլեմ հավատի պարտեզը եղեմ,
Ցույց տամ եզերքը սուրբ ճշմարտության,
Որ լույս է կաթում,
Եվ, որպեսզի իմ անաղարտության
Ճերմակ պսակի ու նշխար հացի
Ճակատին երբեք չքսվի մի մուր,
Ես չդիմեցի անխիղճ բառերին՝
Անգոր ու վհատ, դատարկ ու փծուն,
Որ ամեն քայլին իմ սիրտն են կծում,
Որ իրենց անմիտ, իրենց փուչ տեղով
Իրենք իրենց իսկ իրենց սեփական
Աչքից են գցում...
Զէ՛, չդիմեցի անվարկ բառերին,
Որ չկորցնեմ ես էլ իմ վարկը
Քո աչքում և իմ...
Ոչ էլ ուզեցի անցնել ճամփով հին,
Անցնել մաշված ու ծեծված այն տեղով,
Որով շատերն են գնացել... և ո՞վ,
Ո՞վ է, որ անգամ
Վստահության մեծ, հզոր թևերով
Երբևէ հասած լինի հավատի
Կուռ դարպասներին...
Ես շատ լավ գիտեմ
Հավատի ոսկու իսկական հարզը...
Եվ դրա համար
Ես չդիմեցի խղճուկ բառերին,
Այլ գործո՛վ միայն, գործով համարձակ՝
Խելագարության սահմանն իսկ հատող,
Ապացուցեցի անմեղությունն իմ,
Անխոս ու անբառ
Ի ցույց դրեցի ճշմարտության վառ
Կանթեղը՝ հույսի ճրագով հատնող...

Օ՛, դարակշիռ վայրկյա՛ն բախտորոշ,
Ճակատագրի փորձության դու քար...
Դա ինչ էր, ինչ էր, ինչ էր, արդյոք, դա՞
Խենթության ալի՞ք, խելացնոր քա՞յլ,

Հերոսությունն էր, ընդվզումս պատվի,
Ճակատագիր էր... Բայց ինչո՞ւ արձակ
Աշխարհում այս մեծ պիտի հանկարծ գար
Ու հենց անպայման ինձ բաժին ընկներ...
Ճակատագրի տիրակալն այն ծեր
Ծերուկը ցնդած,
Ա՛խ, ինչո՞ւ եղավ այսչափ անարդար...

Ես չդիմեցի մաշված բառերին,
Բառերին այն գորշ,
Որ ագռավների երամի նման
Թռչում են ընկած,
Մեռնող հավատի սիրտը լափելու...
Այլ ի՛նձ պարզեցի կամքով անվարան՝
Որպես սրբության ու լույսի դրոշ...
Բայց բզկտվեցի ու խոցված ընկա
Ճշմարտության վես բարիկադներում...
Անձնատուր չեղա թունոտ կասկածին...
Եվ ո՞ր դարն է ինձ մի օր ծափելու...
Գիտեմ, որ բախտս ինձ պիտի ատի,
Ոչ էլ կյանքից եմ սպասում ներում...
Թե փրկությունն կա,
Ախր, ո՞ւր է նա.
Ես կույ եմ գնում ծովացած լացին...
Զե՛՛, թո՞ղ սիրտս ինձ երբեք չխաբի,
Թե ես հաղթեցի, հաղթանա կ տարա...

Դե՛, լա՛վ, դե՛, շա՛տ լավ.
Թո՞ղ կյանքն իր խղճի նժարով չափի,
Թե ես ի՛նչ գնով ձեռք բերեցի դա,
Ի՛նչ կորցրեցի և ի՛նչ շահեցի,
Հաղթության դրոշն ինչպե՛ս պահեցի...
Գոնե՛ դու հիշի՛ր, հիշի՛ր դու մի լավ.
Նման հաղթանակ Պյուռոսն սն էլ տարավ...

ԵՎ ՄԻԹԵ ԴՈՒ
Եվ մի թե՛ դու երբևիցե սիրել ես ինձ,

Թե՞ պատրանք է ողջը եղել, եղել միրաժ,
Չե՞ որ կյանքում չհուսացի քեզնից ոչինչ.
Դու ինձ համար կայիր միայն որպես երագ:

Քո խոսքերի վարժ նավակին, նավակին խենթ
Դարձրեցիր ինձ սպիտակ, պերճ առագաստ
Եվ ինձ տարար կապույտ հեռուն, տարար քեզ հետ,
Դուրս բերեցիր սիրո ծովը հավերժապաշտ:

Ու լողացինք մշուշներում ալ, ոսկերիզ,
Լուսապսակ իջավ վրաս՝ որպես ինձ խույր,
Միրտն իմ, ավա՛ղ, վաղուց դարձած անգեն գերիս,
Ուռչե՛ց, ուռչե՛ց սիրո շնչից ամբրոսաբույր...

Դու մղվեցիր, դու սլացար առա՛ջ, առա՛ջ,
Անգոր՝ պրկված առագաստիս գորության դեմ,
Ինձ էլ առած սիրուդ կայսին մեղմահառաչ՝
Անցար հազար թե՛ տարտարոս և թե՛ եդեմ...

Բայց փտա՛ծ էր պերճ խոսքերիդ նավակը հին՝
Միրո ծովի փորձությանը չդիմացա՛վ...
Դու իմ սրտում խորտակվեցիր հենց այդ պահին,
Եվ է՛լ ոչ ոք ինձնից բացի այդ չիմացավ...

ՏԱՔ ՎԵՐՔ

Սառած, հին ձյունը ոտքերիս տակ
Ամեն քայլիս հետ տնքում է խուլ,
Կատվի ձագի պես՝ աչքերը փակ,
Նվում է ցավից, նվում տխուր:

Եվ ինչքան շատ է, շատ է սառում,
Այնքան ուժեղ է ճոռում, լալիս.
- Նրա՞ համար եմ, արդյոք, լռում,
Որ դեռ տաք է խոր վերքը սրտիս...

ՎԱՅՐԻ ԱՂԱՎՆԻՆ

Ձմեռ է: Ծառի ոսկրամատ ճյուղին
Մի գորշ թռչուն է թառել կծկված.
Կաչաղա կ է դա՝ չաչանակ մի կին,
Ագռա՞ վ է սեշալ կամ գուցե... բայց կա՛ ց...

Ահա՛, շարժվեց նա ու փոխեց դիրքը.
Մե՛ դք... ախր, վայրի աղավնի՛ է գորշ...
Բայց ո՞ւր է նախկին երգը, սեր-կիրքը.
Տխուր սրտիկն է մի մութ ակնախորշ...

Ինչո՞ւ է մենակ, ո՞ւր է ընկերը.
Լքե՞լ է նրան, դավե՞լ է, չկա՞ ...
Իրա՞ վ կորցրել է իր ճախրող սերը.
Այնպե՛ս նման է խաբված աղջկա...

Իր ցավի հետ է... բայց չի ողբում, չե՛.
Մեկ-մեկ փետուր է քաշում իր վզից,
Կծկվում կրկին... ու թվում է, թե
Ավելի՛ է նա գորշացել վշտից:

Շուրջը ծտերի ծի՛ վ-ծի՛ վն է անտուն,
Մոտեմոտ անող շուն է ցուրտ քամին...
Վայրի աղավնին չի՛ էլ նկատում՝
Գլխովին տրված իր վայրի՛ ցավին...

Անշարժ նստել է ինքնամփոփ ու լուռ,
Չի ուզում թռչել. թռչի՛ ո՞ւր գնա...
Գնչուհու սեր էր, դունդունող մի հուր...
Է՛լ չկա արդեն, թևաթա՛ փ է նա:

Հիմա ծառի չոր շրջանակի մեջ
Ցավի նեկտարն է քամում անկանոն՝
Իր սեր-սրտիկով կյանքի սրտին մեծ

Վայրի աղավնին դարձած ակնամոմ...

ՄԵԿԻԿ-ՄԵԿԻԿ,
ՓՇՈՒԲ-ՓՇՈՒԲ...

Մնկիկ-մեկիկ,
Փշուր-փշուր
Հավաքեցի
Մեր մաշած բյուր
Ճամփաներից
Ու ափերից,
Ու տափերից
Հետքերը քո
Ու բույրերը,
Երազալից
Իմ աչքերից,
Թուխ մազերից,
Քեզ մտերիմ
Ձեռքերից իմ,
Շուրթերից հուր,
Պարանոցից,
Անգամ ծոցից,
Որ միշտ գոց է՝
Փակի ներքո,
Հավաքեցի
Համբույրները,
Հնքերը քո,
Իմ բորբ սրտից,
Որտեղ խոց է,
Մտքիս շրթից,
Քո՝ ինձ տված
Խոր վերքերից,
Իմ՝ քեզ ձոնած
Բյուր երգերից
Հավաքեցի
Ես ցանուցիր
Հուշերը քո,

Մասունքները
Հիշատակիդ՝
Փշուր-փշուր,
Մեկիկ-մեկիկ...
Կցմցեցի
Այդ բոլորը
Ու փորձեցի
Գեթ մտքումս
Պատրաստել քեզ.
Առանց կեղծել
Շաղել իրար
Հինն ու նորը,
Քեզ ստեղծել,
Որ հետ բերեմ
Կորած քունս,
Գտնեմ դադար...
Բայց արի՛ տե՛ս,
Որ ստացվեց
Է՛լ չկաչող.
Մի փշրված
Բյուրեղյա սիրտ...
Ա՛խ, մի թե ինձ
Իմ չար բախտից
Այս է տրված...
Ո՞նց համբերեմ.
Մե՛ր իմ խաչող,
Անգույթ ու բիրտ,
Ասա՛, ինչպե՛ս
Ես քեզ ներեմ...

ՈՉ ՈՔ ՉԻ ԶԳԱ
Ինչ եղավ՝ եղավ... կանցնի խորշակը...
Շուրթերիս էլի ժպիտ կծաղկի,
Էլի կցուլա ջինջ՝ ինչպես ակը,
Էլի կլժվա շնո բիը բախտի:

Ծաղկած ժպիտս կշողա պայծառ,
Ու ճաճանչները կհասնեն մարդկանց,
Որոնք աչքերիս խոսքերից անչար
Կկարծեն՝ ունեմ երջանկության գանձ:

Արբած ժպիտիս բույրով յոթներանգ,
Շլացած նրա գույներով շռայլ՝
Ոչ ոք չի տեսնի, որ մի պիրկ երակ
Վիշտ է սնուցում իմ սրտին մռայլ...

Ոչ ոք չի զգա, որ տխուր եմ ես,
Անհո ղ է ծաղիկն անփուշ ժպիտիս,
Որ այն ապրում է մահապարտի՝ պես,
Որ արմատները չե՛ն հասնում սրտիս...

ԱՐՁԱԳԱՆՔ

Քեզ մատչելի հեռուներում
Համառորեն լռո՛ւմ ես դու...
Դե՛, ի՞նչ... լռիր՝ ինչքան կուզես...
Բայց իմացիր՝ քո լռության
Տարիներով ամուր հյուսված
Հաստ շղարշի թելի անտես
Վերջնաձայրը ձեռքում է իմ...
Բավական է, որ հասնի քեզ
Միրո կանչն իմ կարոտ հոգու,
Շուրթիդ վրա՝ բառեր չասված,
Իսկույն անձայն
Դու ի՛նձ կգաս...
Այդպես՝ անհաս,
Գոռ լեռնե՛րն են իրար գալիս,
Երբ ցավը հին
Արձագա նք է հանկարծ տալիս...

ԵԹԵ ՄԻԱՅՆ ԳԱՍ

Ու թե գաս, դուռս դու բաց կգտնես,
Սեղանիս պատրաստ դու հաց կգտնես,
Աչքերս խինդից դու թաց կգտնես,
Եթե միայն գաս:

Եվ դու մի՛ կարծիր, թե ես դեռ մոլոր,
Չեմ կարող ներել հայացքդ խոլոր,
Քո հեռացումի խոսքերը բոլոր.
Դու ինձ համար կաս:

Անշո՛ւշտ, բաժանման արցունքի ցանքից,
Թափառումներիդ մենավոր վանքից,
Քեզ ինձնից զրկած՝ քեզ պատժած կյանքից
Առել ես դու դաս:

Քո մի նայվածքով՝ մեղավոր ու հեզ,
Գեթ մի համբույրով, խոսքով սիրակեզ
Իմ տանջանքներին, վշտերին անտես
Մոռացում կտաս...
Եթե միայն գաս...

ՁՅՈՒՆ Է ԵԿԵԼ

Ձյուն է եկել...
Համատարա՛ծ մի քնքշություն,
Համատարա՛ծ ճերմակություն,
Համատարա՛ծ մի մաքրություն,
Համատարա՛ծ մի փափկություն...
Ձյուն է եկել...

Չարմանալի մի հատկություն.

Ճամփան թեքել,
Եկել ինձ մոտ,
Իմ մեջ մտել,
Սիրտս գտել,

Մեր ու կարոտ
Մղել է դուրս
Եվ, աչքս լն՝ ւյս,
Դարձել տանտեր,
Ջերմ հույսերս,
Քնքուշ սերս
Խորթ մոր նման
Թողել անտեր...
Ի՞նչ իմանան
Նրանք, արդյոք,
Որ նա անհոգ
Իր ծիծաղով,
Խոսք ու տաղով,
Ա՛խ, նույնիսկ ինձ
Իմ իսկ հունից
Արդեն բեկել,
Իր կողմ թեքել,
Համոզում է,
Չէ՛, ուզում է,
Որ ես իրեն
Հարգեմ, սիրեմ,
Համարեմ տեր
Օրինական՝
Իմ իսկ սրտի...
(Ա՛խ, տմարդի՛...)
Իր կամքին տամ
Ես գոհացում.
«Օ՛, մոռացո՛ւմ,
Իմ հույս, իմ սեր...
Ես շնջամ
Ու ինձ նետեմ
Իր գիրկը մեղկ...
Բայց ես գիտեմ,
Որ տիրական
Այդ պահանջը
Թե կատարեմ,

Կգործեմ մեղք.
Եվ նույն պահից
Ես «ես» լինել
Կդադարեմ
Ու կատեմ ինձ...
Ա՛խ, այս անմիտ,
Բայց իրական
Մղձավանջը...

.....
Օ՛, բարձրաքի՛թ
Ու տիրական
Իմ մոռացում,
Արի՛ իրար
Մենք մոռանանք...
Անհատուցում
Դու քեզ համար
Ճամփադ գնա,
Իմ սիրտը թող
Ի՛մը մնա,
Եվ թո՛ղ մնանք
Մենք միշտ հաղթող...
... Հիմա էլ, տե՛ս,
Ուզում եմ ես
Երգե՛լ, երգե՛լ...

Ձյուն է եկել...
Համատարա՛ծ պայծառություն,
Համատարա՛ծ անձայրություն,
Համատարա՛ծ երջանկություն,
Թևատարա՛ծ իմ մանկություն...
Ձյուն է եկել...

ՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Մորթվեց օրս տանջված եզան խուլ բառաչով
Ու հոգնություն հեղեց կարմիր,

Դարսդարսվեցին թղթերս խոր մի հառաչով.
Արցունքները կուզե՛ս քամի՛ր...

Տխրությունս պատսպարեց կարոտներիս
Իր կողքին՝ ջինջ երգերիս մեջ,
Սովոր շան պես փաթաթվեց ինձ ու ոտքերիս
Շղթայապուրծ ձանձրույթը մեծ...

Այցելեց ինձ մենակությունն՝ ընկերն իմ հին,
Մանկությունից անդավաճան,
Նորից նույն կերպ մաշված ցուպն իր հենեց պատին,
Ինձ գիրկն առավ, գգվեց անձայն...

Ա՛խ, էլի նա՝ մենակությունն իմ սրտակից,
Ինձ չթողեց այսպես մենակ,
Իր սփռփիչ, ջերմ համբույրով սրտիս հագից
Հանեց պատանքն ամուր, յոթ տակ...

Հետո մեկտեղ մենք նստեցինք՝ փարված իրար,
Սորթված օրվաս հոգեհացին...
Ու ես իմ լավ մենակության գրկում երկար
Հեկեկացի՛, հեկեկացի՛ ...

ՁՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՇ

Ձյունն ամբողջ օրը քնարեց ճերմակ
Երզն իր թավշային.
Նրանում որքա՛ն քնքշանքներ մենակ
Ու տենչեր կային...

Որքա՛ն կարոտներ ցուրտ սպասումից
Ճերմակեցին լուռ...
Մխիթարանքի խոսք էր ասում ինձ
Ճանապարհը խուլ...

Հեռվում, մշուշված արցունքների մեջ

Տաքուկ հուշերի,
Դեռ կայծկլտում են աչքերդ՝ անշեջ
Աստղաբույլով լի...

Դեռ բորբոքում են ցավ ու տառապանք,
Անրջանք ու սեր,
Դեռ բախտիս վրա դնում են կապանք,
Հրդեհում հույսեր...

Դեռ հեռվից հեռու սիրտս խարկում են,
Ինձ խլում ինձնից...
Փաթիլ-նժույզներն անհոգ վարգում են,
Հեռանում քիչ-քիչ...

Ձյունաբաշ եռք են ու երգ երկնային.
Վարգում են փափուկ՝
Պսպղացնելով ճամփին երկնային
Կուրծքն իրենց ճապուկ...

Եվ գրնգում է, գնգում նրանց կույս,
Ճերմակ խրխինջը,
Որի մեջ, սակայն, լսում եմ հոգուս
Սանձակոճ ճիչը...

ՕՐՀՆՅԱ՛Ն, ԵՍ ԴՈՒ, ՁՅՈ՛ՒՆ
Տեսնես՝ սառնությունն այս որտեղի՞ց է.
Տաքուկ է դրսում փաթիլվող ձյունը...
Մըսում է հոգուս. կրակը քիչ է,
Ա՛խ, հիմա շատ է չոր-կարծրությունը...

Սիրտս խոցում է սառցե շեղքի պես,
Սառցե աչքերով զննում իմ հոգին,
Կարծես թե սառցե պատան է անտես,
Մումիա է դարձնում հոգիս՝ որպես դի...

Իսկ դրսում ձյունն է փաթիլվում խաղաղ.
Այնքա՛ն քնքուշ է չոր գետնին պառկում,
Ասեա, մոռացված հինավուրց մի տաղ
Աստծո օրհնանքն է երկիր առաքում...

Եվ ջերմանում է հոգին իմ մրսած,
Քիչ-քիչ բացում է ծալած թևերը.
- Օրհնյա՛լ ես դու, ձյո՛ւն, ամոքի՛ չ Աստված,
Իմ հոգին հիշեց ճախրել-թևելը...

Ի՞ՆՉ ԲԱԽՏ

Սպասումից հոգնել եմ շատ,
Շա՛տ եմ հոգնել երազելուց.
Բայց չի հոգնել բախտը կավատ
Ինձ մոտ թանկել ու նազելուց...

Ի՞նչ բախտ... եթե լիրբ կնոջ պես
Կոտրատվում է փայլով իր հին,
Դժվար գնում տիրոջն ի տես,
Հե՛շտ է տրվում ուրիշներին...

ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐ

Գարուն է կրկին, սիրավառ գարուն,
Ծիծեռնակներն են սավառնում ճիչով,
Ասեա, երկնքում սիրարբած պարում,
Ասեա, թռչում են իմ սրտի միջով:

Ծիծեռնակնե՛ր իմ, լո՛ւյս ծիծեռնակներ,
Ձեզ հետ մով երկինք տարեք նաև ինձ,
Եթե չեք կարող, հո՛ւյս ծիծեռնակներ,
Դուք ինձ սեր բերեք կապույտ երկնքից:

Ջահել է սիրտս, հուր սիրո կարոտ.
Սիրուց սրտերն են բողբոջում և ծեր,

Բայց թե չի գալիս երագ-սերն ինձ մոտ,
Այս սեր-գարնան մեջ ես եմ լռկ անսեր:

Թե սեր չի բերում, գարունն ինձ համար
Ձմռան պես ցուրտ է, անկյանք ու անլույս...
Ծիծեռնակներն էլ բեկորներն են քար՝
Սրտիս, որ անսեր փշրվեց անհույս...

Անսեր թե մնամ, կմնամ անսիրտ,
Հմայքն ու հուրը կկորցնեմ ես իմ...
Ժեռ քար կդառնամ խստադեմ ու բիրտ,
Չոր ծառ կլինեմ այս գարնան կեսին...

Ինչո՞ւ չի գալիս, ո՞ւր է իմ սերը,
Գարուն է եկել, թո՛ղ իմ սերն էլ գա,
Թող նա՛ հար լինի իմ սրտի տերը,
Որ սիրով նայեմ աշխարհին այս քար...

Ծիծեռնակներ՝ իմ, լո՛ւյս ծիծեռնակներ,
Ձեզ հետ մով երկինք տարեք նաև ինձ,
Եթե չեք կարող, հո՛ւյս ծիծեռնակներ,
Դուք ինձ սեր բերեք կապույտ երկնքից:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Այգուս դեղձենին կորել է կարմիր,
Հոգեհան բոցում,
Գարունքված բույրով, ժպիտներով իր
Աշխարհն է օծում...

Օրը շիկնել է, դարձել վարդագույն
Դեղձենու ծաղիկ,
Ինքն էլ իր մեջ է հավաքում թաքուն
Հազար մի տաղիկ...

Արևն է բզգում՝ որպես ոսկեթև,

Ժրաջան մեղու,
Ծաղկած օրվա շուրջ պտտվում թեթև
Ու մեղր է հեղում...

Նեկտար է օրը. դեղձենին սիրուց
Խարո՛ւյկ է ելել,
Անծուխ վառվում է... ծուխն իմ սրտի՛ց է
Բարձրանում թել-թել...

ԱՆՁՐԵՎ Է ԳԱԼՈՒԻ
Ի՛նչ ցածր են թռչում ծիծեռնակները՝
Աչքերը բարու,
Մեկեն խառնել են վարը և վերը.
Անձրև է գալու...

Արևն է շուքով սարքել գինարբուք
Ու քար է հալում,
Գույների հևք է, բույրերի խարույկ.
Անձրև է գալու...

Կանաչ արյունն է եռում ծառերի.
Բերք ունեն տալու...
Հոգիս է ձգում ճամփան սարերի.
Անձրև է գալու...

Կարոտից սիրտս ճմլվեց նորից.
Ցավ ունի լալու.
Այս անուշ հուշը ինչպե՞ս գտավ ինձ.
Անձրև է գալու...

Ախր, ո՞նց ապրեմ ես առանց մարդկանց,
Ի՛նձ հավատալու,
Սիրտս չի խաբում՝ աչք է մշտաբաց.
Անձրև է գալու...

ԿԱՐՈՏԻ ՎԱՐԴԵՐ

Ու բողբոջեց սպասումս,
Ու բացվեցին կարտտի ալ, հրե վարդեր,
Արցունքվեցի սիրտ-թասումս.
Սիրուս հոգուն բախտն ինչո՞ւ վիշտ պիտի բարդեր...

Ինչո՞ւ պիտի երկինքն օտար
Քեզ գուրգուրեր աչքերի պես բիլ, սառցաբոց,
Այստեղածին ցավդ հոգար
Օտար հողը՝ ափը միշտ բաց, իսկ սիրտը՝ գոց...

Ինչո՞ւ պիտի ճամփան սիրուս
Ես անցնեի այսպես մենակ, դառնաթախիծ,
Չէ՞ որ դու էլ փնտրում ես լույս
Հեռուներում՝ առանց սիրո ու առանց ինձ...

Հիմա, կապած սգո երիզ,
Սրտերը մեր տառապում են ցավով անխար,
Եվ մեզ՝ սիրո հիվանդներին,
Սիրտ է տալիս լուսինն՝ ինչպես կիսված մի հար...

ԵՐԲԵ՛Ք, ԵՐԲԵ՛Ք

Ամառս անցավ անդարձ.
Աշունս ի՞նչ է բերելու.
Ամեն ինչ եղավ հանկարծ,
Ժամանակ չեղավ սիրելու...
Ի՞նչ մնաց՝ արցունք և վիշտ,
Է՛լ ոչ մի սիրտ չեմ գերելու...
Ինձ կյանքը պատմեց շատ խիստ,
Երբեք ք, երբեք ք չի ներելու...

ՀՈԳՈՒՄ ԱՅՍ ՄՈՒԺԸ

Օրերը ցուրտ են շնչում,

Իջնում է սարից մշուշը...
Մի տխուր երգ է հնչում,
Արթնացնում ննջած հին հուշը...
Անկատար սերն իմ ցավ էր.
Ինձ տվեց ոգու իր ուժը...
Ո՛ւր էր, թե սի՛րտս ցավեր՝
Չլինե՛ր հոգուս այս մուժը...

ԲԱԽՏ ԷՐ...

Բախտ էր... եկավ ու գնաց,
Եղավ այնքա՛ն մոտ և հեռու...
Սիրտս վիզը ծուռ մնաց.
Խորքում հին սերն էր դեռ եռում...
Ինձ համար խելքով իր սին
Ուղեղս այլ բախտ էր կռում.
Գլխի էլ չընկավ, որ իմ
Իրական մեծ բախտն էր կեռում...

ՏԵՆՉ

Հենեկ է ամպն իր գլուխը ուսիս
Եվ հեծկլտում է որբ մանկիկի պես...
Հոգնած հայացքս հառել եմ հյուսիս՝
Տենչալով Ձյունե դիցուհուն անտես...

Վառվում է սիրտս հրդեհներից հին.
Թո՛ղ գա, ճակատիս դնի պաղ ձեռքը,
Սանձի մոլեգնող հրդեհն ամեհի
Ու խաղաղեցնի հրաբուխ-եռքը...

Բայց ո՞ւր է... չկա՛ դիցուհին Ձյունե,
Չի՛ գալու, թե՛ դեռ հապաղում է նա.
Պաղ գեղեցկուհին մի՞ թե կարծում է՝
Սրտիս հրդեհին, չե՛, չի դիմանա...

Ես որքա՞ն ապրեմ պատրանքներով սին.
Հոգիս դարձել է մորենի անկեզ...
Սիրտս հենվել է կարոտիս ուսին
Եվ հեծկլտում է որբ մանկիկի պես...

ԳԻՇԵՐՄ ԱՐԹՈՒՆ ԱՆՑԱՎ
Գիշերս արթուն անցավ.
Քուն չեկավ աչքիս մինչև լույս,
Լուսինն ինձ որպես ընծա
Տվեց իր թիկնոցն աստղահյուս...
Սրտիկս արբեց խինդից
Եվ աչքով արեց հոգուս կույս.
Թե ի՞նչ էր ուզում ինձնից՝
Ցանկացա պարզել ինքնասույզ...
Պեղեցի լուսնի լույսով
Խենթ սիրտս՝ տեղով երգ ու հույզ.
Ծփում էր լույսի մի ծով՝
Խորքերում՝ հավատ, սեր ու հույս...

ԶԱՉՄԱՆԱԼԻ Է
Զարմանալի է, այնպես չէ՞, ասա՛ .
Ես, որ մի կարգին երգել չգիտեմ,
Մի օր երգեցի,
Դու հավանեցիր...
Ես, որ մի կարգին հերքել չգիտեմ,
Մի օր հերքեցի,
Դու հաստատեցիր...
Ես, որ չգիտեմ՝ իրոք, տերն ի՞նչ է,
Մի օր տիրեցի,
Դող ընկավ սիրտդ...
Ես, որ չգիտեմ՝ իրոք, սերն ի՞նչ է,
Մի օր սիրեցի,
Շող ընկավ սիրտդ...
Զարմանալի է, այնպես չէ՞, ասա՛ ...

ՄՊԱՄՄԱՆ ՊԱՀՆ ԱՅՍ

Սպասման պահն այս որքա՛ն դժվար է,
Շունչ կտրելու չափ՝ ծանրածանր,
Սիրտն իմ ոսկերչի փոքրիկ նժար է՝
Վայրկյանն իսկ կշռող մանր-մանր...

Իսկ դու ժամերն ես դեռ տալիս քամուն
Վայրկյանների պես հեշտ ու հանգիստ.
Դու ժամանակն իր տեղում ես գամում
Այնպե՛ս անտարբեր, ինչպես որ միշտ...

Ու չարչարվում է ժամանակն անլուր՝
Մեր ձեռքին դարձած ռետինե լար...
Ո՛ւր էր, թե իջներ դամոկլյան մի սուր՝
Հատված մի ծայրն ինձ, մյուսը՝ քեզ գար...

ՔՆԵ՞Ն ԵՍ ԱՐԴԵՆ ԴՈՒ

Քնե՞լ ես արդեն դու... իսկ ես՝ չէ... չեմ կարող...
Իսկ ես դեռ գիշերվա սև թներն եմ փնտրում,
Ճաշակում լուսայգի կաթնահունցը դեռ հում
Եվ սերտում անձրևի հին երգը տող առ տող...

Իսկ անձրևն այնպես է դոփդոփում մանրակաթ,
Խշրտուն փեշերն իր խնամքով բռնած վեր,
Որ, ասես, ջանում է, անցնելով մութ մայթեր,
Զթրջվի՛ր սրտիս հորդ արցունքից սառնագաթ...

Շուրթերով սրսփուն շրշում է ականջիս
Հեռավոր օրերի արձագանքն անտերունչ,
Կարոտիս խարույկին թշշում է անտրտունջ
Ու թել-թել շուլալվում թափառուն, խենթ կանչիս...

Արդյոք, նա՛ այս խանդոտ անձրև՞ն է մեղավոր,

Որ սիրո իմ կանչը չի հասնում հեռվից քեզ,
Որ հիմա մոտ է քեզ երազը լուսագես,
Մինչդեռ ես քեզ այնպե՛ս օտար եմ, հեռավոր...

ԲԱՅՑ Ի՞ՆՉ ԱՍԵՄ

Հաճախ է ինձ գիրկն առնում
Իմ վաղեմի անուրջը.
Միշտ շե՛ն մնար աշխարհում
Խաղաղության կամուրջը...

Բայց ի՞նչ ասեմ, սի՛րտ իմ, քեզ,
Դու պետություն փոքրակազմ,
Որ մղում ես մշտապես
Ինքդ քո դեմ պատերազմ...

ԿԱՐՄԻՐ ԵՐԳ

Դու ինձ տեսար երեկ կարմիր շղարշներում՝
Կարմիր բոցերի պես ինձ վերից վար լափող,
Կարմիր մշուշի մեջ քո արյունն էր եռում՝
Սրտիդ գավում կարմիր գինու նման ծափող:

Մեր աչքերին թեթև քող էր իջել կարմիր,
Ամեն ինչ կարմիր էր, կարմի՛ր-կարմի՛ր էրազ.
Կար մի կարմիր հասակ, կարմիր խռովք կար մի,
Ու կար կարմի՛ր-կարմի՛ր էրջանկություն մի խաս...

Անգո էին բոլոր խոսքերը մեզ համար.
Մեր սրտերն իրարու տեսնում էին և մերկ...
Կարմիր փոթորիկ էր... Բախտ կար, սիրտ կար, սեր կար
Եվ... այդ սիրուց ծնվող կարմի՛ր-կարմի՛ր ր մի երգ...

ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ

Արևի պես բոբբ ես, արևի պես հրկեզ,

Արևի պես սուրբ ես, անբիծ,
Ես լուսնի պես դալուկ՝ աչքս հառած միշտ քեզ,
Գունատվում եմ անգամ ամպից:
Արևի պես մեծ ես, արևի պես շռայլ,
Արևի պես ինձ քեզ քաշող,
Ես՝ լուսնի պես թախծոտ, գիշերվա պես մռայլ,
Ֆոսֆորային սառը մի շող:
Ա՛խ, լուսնի պես ես միշտ միայն փնտրում եմ քեզ՝
Ապավինած բախտի գուրթին,
Երբ հակվում ես արդեն, ավա՛ղ, արևի պես
Դու քո կյանքի մայրամուտին...

ԵՐԳՈՎ

Երգով կյանքդ խուժեմ,
Երգով սիրտդ հուզեմ,
Երգով սերդ ուզեմ,
Սե՛ր իմ:
Երգով վերքդ բուժեմ,
Երգով վիշտդ ուսեմ,
Թեկուզ ինքս տուժեմ,
Տե՛ր իմ:
Երգով քո գիրկը գամ,
Երգով սիրտն իմ քեզ տամ,
Թո՛ղ դ՛այն պատվի անգամ
Վերքով:
Երգով իմ վիշտը լամ,
Մահվան վրա խնդամ,
Քանզի ապրում եմ, կամ
Երգով:

ՀԱԶԱՐ ԱՆԳԱՄ

Հազար անգամ ծանրություն անեմ բառը
Եվ նոր ասեմ,
Հազար անգամ ծանրություն անեմ քարը

Եվ նոր տաշեմ,
Հազար անգամ ծանրութեթն անեմ քայլը,
Նոր կատարեմ,
Հազար անգամ ծանրութեթն անեմ փայլը
Եվ նոր փարեմ...
Ծանրութեթն անեմ խոսքը հազար անգամ,
Նոր հավատամ,
Ծանրութեթն անեմ, ավա՛նդ, և սերն անգամ,
Նոր՝ սիրտս տամ...
Տեր իմ Աստվա՛ծ, ի՛նչ թեթն են մարդն ու սարը,
Եվ ի՛նչ ծանր է մեր այս ապրած անլուրջ դարը...

ՇՈՒՐԹԵՐՍ ԱՍՈՒՄ ԵՆ

Շուրթերս ասում են. «Գնա՛,
Չեմ ուզում, չեմ ուզում ես քեզ...»,
Իսկ սիրտս ասում է. «Մնա՛,
Չեմ ուզում, որ դու ինձ լքես...»:

Շուրթերս ասում են. «Էլ վե՛րջ,
Չեմ հիշի անունդ բնավ...»,
Իսկ սիրտս ասում է. «Իմ մեջ
Ապրում ես ու կապրես, իմ լա՛վ...»:

Շուրթերս ասում են. «Ոչի՛նչ,
Երջանիկ կլինեմ կրկին...»,
Իսկ սիրտս ասում է. «Ի՞նչ, ի՞նչ...
Է՛լ կյանքում չեմ սիրի մեկին...»:

Համբուրի՛ր, համբուրի՛ր դու ինձ...

ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳ

*«Ձեռք քաշեի անմարմին, ցնորածուփ
դրախտից,
Հավատայի, որ սիրտդ լոկ ինձ*

համար է գարկում»:

ՀՈՎՀԱՆՆԵՄ ՇԻՐԱԶ

Այնպե՛ս ամուր ես ինձ կրծքիդ սեղմում,
Գրկումնդ պահում այնպե՛ս կարոտով,
Մրմունջն իմ շնչատ է՛լ քեզ չի մեղմում.
Արբե՛լ ես սիրուս նուրբ ծաղկահոտով:

Մարմինն իմ գալար ճիչ է թռչնակի՝
Վանդակված քո պիրկ բազուկների մեջ,
Թո՛ղ որ սրտիկս ահաբեկ թակի.
Համբույրիդ բազեն իմ շուրջն է անվերջ...

Այրո՛ւմ է շունչդ, հևքդ խոտվում
Արյունն իմ անփորձ ու անմեղ հոգիս...
- Թեկուզ խեղդվեմ գգվանքիդ ծովում,
Բայց դու չե՛ս կապի, չե՛ս կապի գոտիս...

ԿԱՐՈՂ ԵՄ ԵՍ

Երեկ, հոգի՛ս, լեզվով իմ չար
Ցավ տվեցի ես քեզ,
Թեև չկար մի լուրջ պատճառ,
Եվ դու մեղմ էիր, հեզ...

Ցավ է դարձել այսօր սրտիս
Քեզ պատճառած ցավը.
Քո անունն է բազմել շուրթիս՝
Պարպած սիրուս գավը...

Թեքվել է, տե՛ս, արևն արդեն,
Իսկ դու չկաս... ո՞ւր ես...
Միշտ եղել ես հաշտ ու անքեն...
Այս ի՞նչ դավ է. լուռ ես...

Հաստատ գիտեմ՝ խոսքերս չար
Դու կներես շուտով,

Միրուց դարձած խեղճ ու անճար՝
Ինձ մոտ կգաս փութով...

Չէ՛, չեմ ուզում ես այս անգամ
Քեզնից մի նոր ներում.
Տղամարդը թույլ ու անկա՞մ...
Հոգիս դա չի գերում:

Թե չես կարող սիրել դու ինձ
Հպա՛րտ, ինչպես տերը,
Պետք չէ ինձ քո սիրուց ոչինչ.
Մի՛ տար այդ վատ դերը...

Թե չե՛ս կարող... կարող եմ ես
Ասել նույնիսկ մի՛ գա...
Թեկուզ սիրոս սիրուդ անտես
Մոխրի՛ վրա սգա...

ԱՐԺԵ՛Ր-ԱՐԺԵ՛Ր

Իր մոր գրկից
Փոքրի՛կ-փոքրի՛կ
Մի թուխ մանկիկ
Ժպտում է ինձ...

Անմե՛ղ-անմե՛ղ ու միամիտ
Աչիկների համար այս ջինջ,
Այս ժպիտի համար վճիտ
Ու խելացի
Այս հայացքի՛
Ականակիտ
Լուսնյակալի՛ ճ...

Հիմա՛ եմ լոկ, ավա՛ղ, զգում՝
Արժե՛ր, արժե՛ր
(Թեկուզ հետո կյանքը պատժեր
Ու ինձ մերժեր)
Այն ժամանակ ես քո գրկում

Ձոռեի ինձ...

Կգտնեի այսօր ես քեզ՝

Սիրով անշեջ,

Մաքուր ու վեա,

Իմ մանկան մեջ

Անմե՛ղ-անմե՛ղ...

ՓՐԿՕՂԱԿ

Սպասումներիս նավը խորտակվեց

Քո երկարատև լռության թափից,

Իմ վերջին հույսի դուռն ամուր փակկեց,

Մնացի ծովում ու հեռու՝ ափից...

Ավա՛ղ, չի կարող ինձ փրկել ոչինչ,

Մինչև իսկ՝ բախտի քամին հաջողակ.

- Իմացիր, որ քո սիրո կանչը ջինջ,

Ա՛խ, կլինի ինձ նետված փրկողակ...

ԻՄ ԻՍԿ ՁԵՌՔՈՎ

Գնամ եմ լույսի հետքով.

Երևի գտնեմ կորածս,

Շարժվում եմ հույսի հետքով.

Գտնեմ ու հանեմ հորածս...

Գնացի... բայց, շա՛տ ափսոս,

Հին սերն էր այսօր նորածս.

Գտա սոսկ մի շիրմափոս...

Իմ իսկ ձեռքով էր փորածս...

ՀԱՆՑ ԿԱՐԻՃ

Չիմացա՛ իմ սերն ինչո՞ւ

Այս հողում արմատ չձգեց.

Թափառեց՝ ինչպե՛ս գնչու,

Հազարի բախտին քար գցեց...

Եվ ինչո՞ւ սերն իմ անխոց
Իր բախտի ճամփան իսկ խցեց...
Հանց կարիճ՝ ինչպես այլոց,
Այնպես էլ ինքն իրե՛ն կծեց...

ՄՐՏՆԵՂՈՒԹՅՈՒՆ

Արևն իր ոսկիե հալել,
Սենյակս ոսկով լցրել է.
Սեր-հավքն իր թևքը ծալել,
Սրտիս է իջել, կտցել է...
Կարծել է՝ միրգ է հասուն.
Բույն հյուսել, նրան կցվել է...
Թողած տաք սրտերն բազում՝
Իմ նեղսիրտ սրտում խցվել է...

ՀԻՇՈ՞ՒՄ ԵՄ ԴՈՒ ԻՆՁ

Արդեն վաղուց է, որ չեմ տեսել քեզ
Եվ ոչ մի փոքրիկ լուր չունեմ քեզնից,
Անհոգ վազում է ժամանակն անտես.
Արդյոք, դեռևս հիշո՞ւմ ես դու ինձ:

Գուցե բախտդ քեզ իր գիրկն է առել,
Ու կտրվել ես քո հին հուշերից,
Բախտիս ժպիտն է շուրթերին սառել.
Արդյոք, երբեմն հիշո՞ւմ ես դու ինձ:

Քո պայծառ դեմքը, աչքերը ժպտուն
Հառնում են իմ դեմ օրերի մուժից,
Արթուն է միտքս, հոգիս է անտուն.
Իսկ դու երբևէ, ա՛խ, հիշո՞ւմ ես ինձ:

Գիտեմ՝ կհասնես տենչերիդ գահին
Ու չես նշմարի ինձ քո բարձունքից,
Բայց երջանկության կամ վշտի պահին

Գոնե մեկ անգամ կհիշե՞ս դու ինձ:

Ի՞նչ ԱՆԵՄ

Առաջվա թռչունը չեմ.
Դարձել եմ ես հավք տնակյաց,
Այն ճարպիկ մրջյունը չեմ.
Ապրում եմ՝ բախտի դուռն ընկած...
Ի՞նչ անեմ՝ նորից բերք տա,
Տեր, կենաց ծառն իմ՝ քո տնկած.
Թե հանկարծ իմ սե՛րն էլ գա
Սրտիս սուփրին կա... ցամաք հաց...

ՀՈԳԻՍ ՓՆՏԸԻ

Փնտրում եմ հետքն իմ սիրո՛ւ
Հարազատ, անուշ վայրերում.
Հուշերս՝ ինձնից խռով,
Հսկում են ինձ իմ քայլերում...
Շա՛տ ափսոս, որ չեմ գտնի
Հին սերս այս նոր փայլերում.
Մնում է՝ հոգիս փնտրի
Նրան՝ սրտիս խուլ այրերում...

ՀԻՄԱ ՄԵԿ-ՄԵԿ

Այս հողում արդեն վաղուց
Իմ ոտնահետքը չի եղել.
Սրտիկս՝ աղոթքի խուց,
Կարոտն այսքան խիստ չի նեղել...
Դու երբեք չես իմանա՛
Որքա՛ն եմ արցունք ես հեղել,
Ի՞նչ պիտի անես հիմա.
Չես կարող հոգին իմ պեղել...
Սիրուս հուրն ու ցավն անբեկ
Այնքա՛ն խորն եմ ես անթեղել,

Որ, ավա՛ղ, ինձ հիմա մեկ-մեկ
Թվում է, թե ոչի՛նչ չի եղել...

ԿՇՏԱՑՐԵԼ Է ԻՆՁ

Իմ հոգին երբեք չի լինի
Ցմրուր պարպված գավաթի պես,
Եվ սերս՝ որպես թունդ գինի,
Կլինի հաստատ՝ հավատիս պես...
Շիտակ եմ անցել իմ ճամփան.
Դարն ինձ ծաղրում է կավատի պես,
Կոկորդիս կանգնած կյանքն անհամ
Կշտացրել է ինձ խավարտի պես...

ԱՆՏԱ՛Ռ ԻՄ

Անտառ	իմ	մտերիմ,
Գանգրագիսա՛կ	իմ	քույր,
Ես	քո	փերին՝
եմ	լույս	
Անթագակիր, մաքուր...		

Մաքուր՝ զով շնչիդ պես,
Հոգուդ նման՝ շռայլ,
Քեզ պես՝ շքեղ ու վես,
Մե՛կ խնդուն, մե՛կ՝ մռայլ...

Քողն իմ կաթնամշուշ
Ծածանվում է վրադ,
Արցունքածին մի հուշ
Կայծկլտում է վհատ...

Տեղ տուր, անտա՛ռ, դու ինձ
Կանաչ քո հեքիաթում,
Ուր քո ծառ ու թփից
Բարություն է կաթում...

Ուր իմ ցաված սիրտը
Կամոքես քո սիրով...
Տեղ տուր, գամ քո գիրկը
Կարոտներիս ծիրով...

Ես՝ քո փերին լուսաչ,
Պարեմ թեթև, անքուն,
Լողամ ուռկան հյուսած
Կանաչ քո հորձանքում...

Ճառագեցի ես սեր
Չորս ծագերն աշխարհի,
Ճամփաս քար էր ու լեռ,
Բախտն էր ձեռքում չարի...

Չեկավ ասպետն իմ քաջ.
Երագներս են մթնում...
Անտառ, ես քո կանաչ
Կուսանոցն եմ մտնում...

ԷՔԱՊՐՈՆՆՏ

Մի չնչին բանից վնասվեց ձեռքդ,
Վարդի պես իսկույն հուրհրաց վերքդ,
Դու ծիծաղեցիր անփույթ ու պայծառ,
Ասացիր. «Ոչի նչ, բան չպատահեց...»:
Ա՛խ, ի՛նձ պատահեց, բայց դու չիմացար.
Մի կաթ արյունը իմ սրտի՛ն կաթեց...

ԱՅՈ՛, ԽՈՀԵՄ, ԽԵԼՈՔ...

... Սերը նաև խոհեմ, խելոք պիտի լինի,
Որքան էլ այն եռա որպես քա դգր մաճառ,
Որ այն խմվի կոււմ-կոււմ՝ ոնց յոթ տարվա գինի.
Որ վայելվի ցմահ, յոթներանգվի պայծառ...

Այո՛, խոհեմ, խելոք... ի սեր սիրո կենաց,
Հանուն կոկոն սիրո վաղվա փթթող վարդի...
Բայց քո սերն ինձ համար (սրտիդ այքը լա՛վ բաց...)
Ցորեն հաց է... ավա՛դ, բայց ո՛չ առանց հարդի...

Այո՛, խոհեմ, խելոք... Բայց ո՛չ անհամարձակ,
Բայց ոչ այնքան երկչոտ ու վախվորած այնքան,
Որ սովյալիս սիրո՝ կարոտ աչքը անհագ,
Քո տված սեր-հա՛ցն իսկ թվա անհա՛մ մի բան...

ՍԵՐ ՊԵՂԵՐ

Այս սիրուն գարնան օրն ինձ
Գարնան պես անուշ սեր բերեր,
Թևածեր սիրտս նորից,
Իրեն փշրողին լուռ ներեր...
Գեղզեղար իմ կրծքի տակ,
Սեր երգեր մարդկանց ու գերեր...
Բաց աներ սրտերը փակ,
Ցավի մեջ անգամ սեր պեղեր...

ԱՉՔԵՐԴ ԿԱՊՈՒՅՑ

Կապույտ աչերիդ բոցերում կապույտ
Ցանկացար սիրտս հրկիզել սիրով,
Ցանկացար տիրել հրով ու սրով՝
Կապույտ աչքերիդ ժպիտով անփույթ...

Գոլ սարսուռ անցավ, սիրտս պապանձվեց,
Ահով ծվարեց կրծքում իմ տաքուկ
Որպես պախրայի սրդողած ձագուկ...
Գոլ սարսուռ անցավ, և հոգիս խանձվեց...

Չտեսա՛ն, սակայն, աչքերդ կապույտ՝
Իրենց պաղ բոցերն ինչպես սահեցին,
Եվ հոգուս թներն ինչպես սառեցին...

Չտեսան, սակայն, արցունքս պո՛ւտ-պո՛ւտ...

ԳՈՒՑԵ ՄԻ ՕՐ

Հովի հետ սեթևեթում,
Նագում է դեռատի բարդին,
Հրայրքոտ հայացք նետում,
Խփվում է սիրո սուր կարթին...
Է՛հ, գուցե ես էլ մի օր
Մոռանամ բյուր ցավերն իմ հին,
Փարատեմ վշտերն իմ խոր,
Անտեսեմ և աշխարհն այս սին
Ու, տրված բախտիս քամուն,
Վերստին ես զգամ ինձ կին
Եվ գնամ, հույսով անհուն
Փարվեմ իմ սիրո հուր վարդին՝
Ինչպես խենթ սիրուց անքուն՝
Հովի դեմ նագող այս բարդին...

ԳԻՇԵՐ

Լուսինն է աչքով անում,
Խոր ձորում գետը վշշում է...
Հուշերս հոգիս հանում,
Գլխումս անդուլ խշշում են...
Արյունս գինու պես թունդ
Սրտիս մեջ եռում, թշշում է.
Հին սերս թաղված խորունկ,
Օձի պես ելել, ֆշշում է...

ՈՍԿԵ ՉԿՆԻԿ

Շուրթերով	իր	թաց	հիմա	քեզ	ծովն	է
Համբուրում	հեռվում,					
Եվ	ծովից	թռած	վավաշոտ	հովն		է
Կրթերից	եռում:					

Իսկ դու, քեզ հասնանած ծովի գգվանքին,
Լողում ես խաղաղ,
Չես էլ նկատում՝ քո կապույտ ճամփին
Խայտանք է ու խաղ...

Խինդ ու հրճվանքով ավետափ լիքն է
Քո սիրտը շողուն.
Ապշում ես. հրա՛ջք... ոսկե ձկնիկն է
Քո կողքին լողում...

Ձեռքդ պարզում ես, բռնել ես ուզում՝
Նա խույս է տալիս,
Շողշողում հեռվից, հոգիդ է հուզում
Եվ մոտ է գալիս...

Նորից ես փորձում բռնել հրաշքն այդ՝
Նորից փախչում է...
Չքնաղ երազ է, թե՛ երգ է անհայտ,
Ասես, հայչում է...

Չես ուզում բախտդ դու ոչ մի գնով
Բաց թողնել ձեռքից.
Ոսկե ձկնիկն է խայտում հոգեթով,
Քեզ կանչում հեռվից...

Թե բռնես նրան, դու առանց խոսքի
Իմացի՛ր, իմ լա՛վ,
Ոսկե ձկնիկն այդ իմ բա՛խտն էր ոսկի,
Որ ջուրը ընկավ...

ԿԱՐՈՏԻՍ ՀԱՎՔԸ

Կարոտիս հավքը չի՛ հասել քեզ.
Մեկնումիդ օրն իսկ ճամփա ելավ...
Աչքերիս քսեց թներն իր թավ

Ու թնեց փութով՝ իմ սրտի պես...

Թե դեռ չի հասել, թե դեռ չկա՝
Դու մի՛ մոռնոքիր ամպակուտակ,
Վառ պահիր սրտիդ արփին սուտակ.
Մե՛կ է, ուր որ է՝ նա քե՛զ կգա...

Գիտեմ՝ չի շեղվի ճամփին իր ձիգ,
Չի իջնի ոչ մի սիրո ռստի,
Չի խաբվի երբեք կուտին ոսկի,
Շողոմ խոսքերին՝ սուտ ու հրձիգ...

Կարոտիս հավքը ճերմա՛կ-ճերմա՛կ
Շիտակ կթևի միմիայն քեզ.
Ե՛լ քո պատյանից պաղ ու անտես,
Մի՛ թող դու հոգուդ դուռն այդպես փակ...

Շուտով կհասնի լույս հավքն իմ հեզ.
Դու սրտիդ ա՛վը պարզիր նրան,
Որ նա կարոտով իջնի վրան
Եվ ծալի թևերն իր հոգնաբեկ...

ՔԱՄԻՆ ԹԵՎԱՎՈՐ

Հեռվից է եկել քամին թևավոր.
Իր հետ կարոտիդ լեռներն է բերել,
Տնքում է հոգնած ու հառաչում խոր.
Միրո շունջիդ բեռներն է բերել:

Ճամփի փոշուց իր փեշն է թափ տալիս.
Այրող հուշերիդ վառ խունկն է բերել,
Ամպե աչքերով անձրև է լալիս.
Տառապած սրտիդ արցունքն է բերել...

Մթնշաղի թևը քնքուշ
Շոյեր հոգիս թեթև-թեթև,
Սիրտն իմ մի պահ քներ մո՛ւշ-մո՛ւշ՝
Որպես մանկիկ հոգնած ու խն...

Չտառապեր, չզգար ոչինչ՝
Ո՛չ սիրո ցավ և ոչ մրմուռ...
Արցունքի պես անմեղ ու ջինջ
Մնար ընդմիջտ անտես ու լուռ...

Անհաս մնար կարոտներին,
Խոլ տենչերին մնար անհաս,
Չգուրգուրեր հուշերն իմ հին,
Սիրո հրից մնար անմաս...

Խաղա՛ղ լիներ ու միամիտ,
Մի քիչ լիներ բոլորի պես.
Չծիծաղե՛ր արցունքաշիթ,
Չհառաչե՛ր արևակեզ...

Որ թե մարդիկ գոնե դույզն-ինչ
Հասկանային նրան կյանքում,
Որ հաշտվեր նա ինձ հետ քիչ-քիչ,
Որ չխոկար այսպես անքուն...

Մթնշաղի թևը քնքուշ
Շոյեր հոգիս թեթև-թեթև,
Սիրտն իմ մի պահ քներ մո՛ւշ-մո՛ւշ՝
Որպես մանկիկ հոգնած ու խն...

ԲԱԺԱՆՈՒՄ

Մենք բաժանվեցինք այնքա՛ն արագ,
Մենք բաժանվեցինք այնքա՛ն հանկարծ,
Օր չհասցրեց սերդ առվակ
Միանալ սիրո ծովի՛ն իմ բաց...

Չուզեցիր հոգուս դուռը բախել
Ու ճանաչել գեթ տանտիրոջը...
Եվ երբ շուրթդ էր շուրթս դադել,
Որոտաց հոգուս ընդոստ ո՛չ չը...

Ձո՛ւր փորձեցիր դու մի գրոհով
Գրավել սրտիս բերդը կանգուն.
Միտքս է նրան իր կուռ զրահով
Որպես բերդակալ հսկում անքուն...

Լեզու չգտա՛ր դու սրտիս հետ,
Չուզեցի՛ր սիրել հոգիս հպարտ...
Անկարող արդեն դառնալու հետ՝
Մնացիր սիրուս պատերի տակ...

Եվ ո՛վ է տեսել, որ բերդն ինքը
Պաշարի իրեն գրոհողին...
Բայց ես չուզեցի իմ երկինքը
Մոտեցնել, խառնել քո սև հողին...

Մենք բաժանվեցինք այնքա՛ն արագ,
Այնքա՛ն պարտադիր, այնքա՛ն հանկարծ...
... Հիմա իմ բերդի պատերի տակ
Մի հին դրոշ կա՝ անշունչ ընկած...

ԱՅՍ ՓՈՂՈՑՈՒՄ

Այս փողոցում ենք մենք բաժանվել,
Այս մայթի վրա, այս ծառի տակ...
Հուշերիս գորգից կարմիր մի թել
Այստեղ է ձգվում՝ որպես երակ:

Եվ ինձ է ձգում փողոցն այս հին,
Ինձ է գրավում մայթն այս անշուք,
Մեր անխոս վկան՝ տարեց կաղնին,

Ինձ է միշտ կանչում գաղտնաշշուկ:

Եվ իմ քայլերը, ինձնից անկախ,
Առաջնորդում են ինձ միշտ այստեղ.
Անցնում եմ տխուր, գլուխս կախ,
Փողոցն է դառնում ինձ համար նեղ

Միրտս սեղմվում, լալիս է լուռ,
Փարվում ամեն մի շենք ու քարի...
Արցունքիս ճամփին՝ աչքս գոց դուռ,
Իսկ սիրտս՝ նման մեծ ամբարի...

Ու թվում է ինձ ցավիս բոցում,
Թե մի բան եմ ես կորցրել շատ թանկ,
Որ պիտի գտնեմ այս փողոցում,
Այս մայթի վրա, այս ծառի տակ...

ԻՆՉՊԵ՞Ս ԻՄԱՆԱՄ

Մեր բաժանումից շատ ամիսներ անց
Հանդիպեցինք մենք մի օր պատահմամբ.
Դու ինձ ժպտացիր լուռ ու անթափանց՝
Պատել էր դեմքդ մի մռայլ, մութ ամպ...

Ձեռքդ անվստահ մեկնեցիր դու ինձ,
(Որպես հաշտություն՝ և՛ կամ՝ դաշի՞ նք մի նոր...),
Աչքերիդ բոցում՝ անթաքույց թախիծ,
Այնպե՛ս տիրական, քեզ այնպե՛ս սովոր...

Նորահայտ մի դող փարվել էր ձեռքիդ,
(Վա՞ ինձ էր, թե ձեռքդ կմնա օդում...),
Թվաց, թե ափս լուռ դիպավ վերքիդ.
Ցավից ինչ-որ բան փլվեց իմ հոգում...

Ա՛խ, այնպես ջերմ էր ձեռքդ ինձ մեկնած՝
Անարատ, անկեղծ արցունքի նման...

Իսկ սիրտդ, սիրտդ՝ հողմերից բեկված,
Ջե րմ է, թե՛ սառը... Ինչպե՛ս իմանամ...

ՀԻՄԱ

Կծաղկի սիրուս վայրը,
Եթե հեռվից գամ ես հիմա,
Կողբան քարն ու ժայռը,
Եթե ցավից լամ ես հիմա...
Նոր սերս թանձրացել է,
Բայց չեմ զգում համ ես հիմա.
Հին սերս քաղցրացել է...
Գլխիս ի՞նչ քար տամ ես հիմա...

ԻՄ ՋԱՀԵԼ ՀԱՍԱԿ

Հե՛յ-վա՛ իս, իմ ջահե՛լ հասակ,
Ո՞ր է քո ծաղկուն գարունը...
Հեռվում են թագ ու պսակ.
Գինի էր ալ իմ արյունը...
Ձու չածեց հավքը սիրուս,
Է՛լ ի՞նչ ճուտ... հույսս մարում է...
Կհասնեմ մինչև Սիրիուս.
Կգտնե՞մ սիրուս ավյունը...

ՈՍԿԵ ԱՇՈՒՆ Է

Հայաստանիս բարկ ամառն էլ անցավ,
Ժամանեց շուքով ոսկե աշունը.
Տոթակեզ շոգը քաշվեց զով անձավ...
Սիրուս սրտերից ընտրեց հասունը...

Ոսկե աշուն է և սիրող մի սիրտ...
Եվ ոսկե՛ մի սիրտ՝ ոսկելար տավիդ,
Սիրո հրեշտակն՝ աչքերով հակինթ,
Երգով տանում է ինձ մի լույս շավիդ...

Միրո աշուն է՝ ոսկե աշուն է,
Ոսկի է հալում թույրերով ոսկի...
Եվ ոսկու տենդը սիրտս քաշում է,
Ինձ նվաճում է՝ առանց մի խոսքի...

Շուրջս փովել է ոսկե ծիրանին
Եվ ոտքերիս տակ դարձել պատվո գորգ...
Սրտիս տիրել է Աստծո կիրակին,
Աշնան այուքի հետ դարձել է աղոթք...

Ոսկե աշուն է և ոսկե մի սիրտ,
Ոսկե աղոթք է, ոսկե երազանք...
Ոսկե երգեր են, ոսկեգիր մի գիրք,
Ոսկե ճանապարհ և ոսկե մի կյանք...

ԾԻ՛Վ-ԾԻ՛Վ...
Ծի՛ վ-ծի՛ վով բացվեց լույսը.
Ինձ կյանքն իր ողջույնն է տալիս,
Լույսի հետ ծաղկեց հույսը.
Հավատն է դանդաղ հետ գալիս...
Կրակվեց հոգիս ցաված.
Չեմ փարվում է՛լ ես տաք շալիս,
Միրո դեմ իմ սիրտն է բաց.
«Ծի՛ վ-ծի՛ վ» է երգում, չի՛ լալիս...

ԳԱՐՈՒՆՆ ԱՇՆԱՆ ՄՐՏՈՒՄ
Գծանկար է անտառն աշնան՝
Համարձակ գծերով չոր ու հատու.
Ամենուր՝ խշրտուն ոսկի խաշամ,
Որ թախծի խյուսով է հողը պատում...

Ծառերի մատներից՝ պաղ ու ոսկրոտ,
Մշուշե մի քող է կախվել ծվատ.

Խաշա՞մն է հրկիզվել ծառերի մոտ,
Այդ նրա բիլ ծո լիսն է նվում վիատ...

Կաթում են տերևներն, ահա՛, մեկ-մեկ,
Տանձերի պես վայրաճ՝ արդեն հասուն...
... Իմ առջև հառնում է ջահել ու մերկ
Գարունիկ աղջիկը, ո՛նց է նագում...

Շողում է, դալարում, ճկվում ոնց ուռ՝
Տրված երգ-գեփյուռի շոգ գգվանքին,
Աչքերից աստղեր են թափվում բուռ-բուռ,
Պատրաստ է հարսնանալ ու դառնալ կին...

Եվ ես էլ գարուն եմ գարնան գրկում,
Սարյակի խենթ ճիչ եմ, նոր շյուղ դողդոջ...
Իմ սիրտը, որ երգ է, հույսեր քրքում,
Ծով խինդից պայթում է որպես բողբոջ...

Իսկ հիմա աշունն է խոր ու տամուկ
Զուր փորձում իմ սրտին նշան բռնել...
Երբ այնտեղ գարուն է, սիրո խարույկ,
Երբ այնտեղ հասնում են հույսի նոներ...

Մինչդեռ մի կաչաղակ քինով անձայն
Նստել է իր բնում՝ կծող ցրտին
Զալ պոչը դուրս հանած՝ հանց հրացան,
Նշան է բռնել, տե՛ս, աշնան սրտին...

Ի՞նչ ԿԲԵՐԻ

Կաթնահունց երկինք, պաղ օդ.
Տեսնես՝ ի՞նչ օրը կբերի,
Հարսնացող ծառեր, խաս խոտ.
Ի՞նչ նոր երգ լորը կբերի...
Ծաղկավառ շոր ու ծիծաղ.
Ի՞նչ նոր սեր շորը կբերի,

Նոր երազանքներ, նոր տաղ.
Ի՞նչ լավ բան նորը կբերի...

ՃԱՍՓԻՆ ԵՍ

ճամվիին ես, դեռ չես հասել.
Իմ աչքն էլ գալուդ ճամփին է...
Սիրտս ինձ պատուհասել,
Հիմա կարոտիս թամբին է...
Երբ դեպի վեր է սուրում՝
Աստծունն ու արև-ամպինն է,
Երբ վարում երգ է սուլում՝
Իր պէս կրակված շամբինն է...

ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆ

Չարչարանաց գիշերս մութ
Մոտենում է լուսաբացին.
Պսպղում է սառն ու անգութ
Լուսինն՝ ինչպես սրած կացին...

Գունատվում է խավարն ահից
Եվ ընկրկում պաղ լույսի դեմ,
Ձայն է գալիս երկնի գահից.
Ո՞վ է ծերուկն այն դժնադեմ...

Վառ աստղերը՝ գամեր փայլուն,
Խաչել են ինձ իմ կարոտին.
Օրս երկինք է համբառնում՝
Կապած հույսի շքեղ գոտին...

Կասկածն ինչո՞ւ մտնի դարան,
Անլույս սիրտն է դատարկ խեցի.
Ինձ Գողգոթա ինքս տարա
Եվ կամովին ես խաչվեցի...

Եվ փրկեցի հավատն իմ լույս
Ու սերը մեր անպարագիծ...
Քեզ մոտ թռավ հոգին իմ կույս.
Պատանքը դու հանիր հագից...

ԾԱՂԻԿՆԵՐ

Ծաղիկնե՛ր, ընծա՛ կապույտ,
Ինձ ջերմ ժպտում եք, սեր բուրում...
Բանուգործ թողած անփույթ՝
Ձեզ հետ խոսում եմ, համբուրում...
Դուք՝ սիրո առհավատյա,
Սիրոս աչքում եք ձեր բույրում.
Դուք՝ կապույտ, նա՛ հրաշյա...
Ձեզնով նրա՛ն եմ գուրգուրում...

ՎԵՐԱԴԱՐՁ

Նորից բացվեց դուռը,
Նորից ինձ մոտ եկար.
Ոստնեց սրտիս հուրը
Ու մորմոքեց երկար...

Նորից ժպտացիր ինձ,
Պարզեցիր քո ձեռքը.
Ա՛խ, խլրտաց նորից
Արյանս տաք եռքը...

Նորից աչքերիս մեջ
Նայեցիր դու երկար...
Բայց քո աստղը անշեջ,
Ավա դ, արդեն չկար...

ԿՐԱԿ ԵՎ ՄՈՒԽԻՐ

Նստել ենք մենք իրար դիմաց՝

Մեջտեղ դրած հուշերը հին.
Բավական է միայն մի կայծ,
Որ բռնկվի հուրն այն նախկին...

Որ մոլեգնի հրդեհն այն խոլ,
Որ մոխրացնի մեզ իր բոցում...
Նայում եմ քեզ հայացքով գոլ,
Նայում, աչքերս եմ լուռ զոցում...

Չեմ ուզում, որ սիրտս տեսնես
Աչքերիս մութ լուսամուտից...
Սոխիբնե՛ր կան այնտեղ հրկեզ՝
Մեր մեծ սիրուց մնացած ինձ...

Պետք չէ դրանք խառնել կրկին,
Զգո՛ւյ՛ջ... հանկարծ մի կայծ չգա՛ ...
Թե ինձ մեկ էլ տաս կրակին,
Սիրտս արդեն կմոխրանա...

ՈՒՇԱՑԱԾ ԶՂՋՈՒՄ

Դու հեռվում էիր, ինձնից շատ հեռու,
Մեր միջև պատն էր ձիգ տարիների.
Իմ երազներում կարոտն էր եռում,
Հույսերիս փխրուն ակոսն էր բերրի...

Եվ մոտ էր սիրտս, մոտ էր քեզ, շատ մոտ,
Ինչպես ծիծառը՝ կապույտ երկնքին,
Սպասումներիս վառ ամառն էր տոթ,
Սիրո՛ւ ոչ մի կանչ ինձ մոտ չուներ զին...

Իսկ այսօր, ահա՛, եկել ես հանկարծ,
Ինձ մոտ ես եկել սրտով սիրաբարկ...
Բայց ու՛շ է արդեն, չկա ոչ մի կայծ
Մեր հանգած սիրո՛ւ մոխիբների տակ...

Եկել ես ինձ մոտ, ինձ մոտ ես հիմա.
Արցունքահառաչ հայցում ես ներում...
Սրտին ներում է լոկ սի՛րտը, բայց նա՛
Իմ սիրտը, քեզնից հեռո՛ւ է, հեռո՛ւ...

ԿԱՊՈՒՅՏ ԹԻԹԵՌՆԻԿ

Իմ մանկության կապո՛ւյտ-կապո՛ւյտ, ժի՛ր թիթեռնիկ,
Դու՛ տերեփուկ կապույտ՝ հովից թրթռացող,
Դու՛ ծաղկաթերթ պոկված, մի պուտ մաքուր երկինք,
Երազանքիս շուրթին իջած փիրուզ մի ցող...

Իմ մանկության կապո՛ւյտ-կապո՛ւյտ, ժի՛ր թիթեռնիկ,
Ես՝ աղջընակ մի խենթ՝ տարված քո հեքիաթով,
Ես էլ՝ մի թիթեռնիկ՝ քեզ պես ոսկեթևիկ,
Կյանքիս առէջներում խաղում էի խինդով...

Խաղում էի զվարթ, ի՞նչ հոգս, ի՞նչ ցավ, ի՞նչ վիշտ...
Կարծում էի՝ կյանքն էլ մի հեքիաթ է ոսկե.
Երազներում լուսե պարուրելով ընդմիշտ՝
Շշնջալու էր ինձ սիրո դյութիչ խոսքեր...

Ի՞նչ իմանար, սակայն, սիրտն իմ ջահել, անփորձ,
Որ քնած չեն բախտիս շանթերն ապերասան,
Հոդմացրիվ կանեն սիրուս դոյակն անխոց,
Հոգուս նեկտարն անուշ՝ կանեն բաժա՛ն-բաժա՛ն...

Իմ մանկության կապո՛ւյտ-կապո՛ւյտ, ժի՛ր թիթեռնիկ,
Երազանքիս ցողը, ավա՛ դ, անհետ ցնդեց...
Իսկ դու նույնն ես կրկին՝ նուրբ ու ոսկեթևիկ.
Կորած մանկությունս ես գտնում եմ քո մեջ...

ԵՍ ԿԳԱՄ

Ես կգամ,
Երբ դու ինձ մոռացած լինես,

Երբ դու լուռ կորացած լինես
Քո թղթերի վրա,
Երբ լարված տքնելիս լինես,
Ապարդյուն ճգնելիս լինես՝
Տենչալով վերջը դրա...
Ես կգամ լուռ ու թեթև,
Կկանգնեմ մեջքիդ հետև
Ու կտամ մտքերիդ թև.
Որպես մուսա կգամ:

Ես կգամ,
Երբ դու խոհերիդ հետ լինես,
Մտքով գոհերիդ հետ լինես՝
Քո իսկ լեզվի, խոսքի,
Երբ երկրից վերացած լինես,
Հոգսի տակ կեռացած լինես՝
Ճակատիդ դալուկ ոսկի...
Ես կգամ մունջ, համրաքայլ,
Եվ աչքերն իմ տխրափայլ
Կզննեն հոգիդ մռայլ.
Որպես խորհուրդ կգամ:

Ես կգամ,
Երբ ինձնից հեռացած լինես,
Երբ հոգով ծերացած լինես՝
Կյանքի մտրակի տակ,
Երբ դու ինձ չսպասելիս լինես,
Ձանձրույթդ սպանելիս լինես
Հուշերիդ գրտնակի տակ...
Ես կգամ վշտաշշուկ,
Ցավերին քո սրտմաշուկ
Կցողեմ տաք արտասուք.
Որպես հին սեր կգամ:

Էլի ես մարդ գտնվեցի մարդկանց հանդեպ,
Բայց մարդ չեղա՝ իմ նկատմամբ...
Կյանքում ես ինձ միշտ գրկեցի,
Ինձ նեղեցի, ինձ մոռացա,
Ուրիշների հոգսերի տակ լուռ կորացա...
Պատի ճեղքին դարձա ես ծեփ,
Որ տաք լինի մարդկանց տունը,
Ծեփ դարձա և բերաններին վայրահաչող,
Որ երգ լինի նրանց քունը,
Երագներին չիջնի սև ամպ...
Դարձա գարնան տեղատարափ,
Դարձա վառ շող,
Կյա նք տվեցի քնած հունդին...
Ժահրոտ, թունոտ տատասկները կիպ գրկեցի,
Ինձնով մարդկանց լույս հավատի
Մերկ ոտքերը ես փրկեցի...
Բայց ոտնատա՛կ ինձ տվեցին մարդիկ ճամփին,
Տրորեցին սիրտս ուժգին,
Առաջ անցան թեթև, անհոգ...
Իսկ ես խոցված, իսկ ես անօգ
(Երբ իմ արած ամեն լավը կախվեց վատի)
Մարդկանց ճահիճ-անդորրության անկուշտ բազմին
Աբրահամի նման անկոր ու մոլեռանդ
Վերջին ճիգում զոհ բերեցի
Զավակի պես ինձ կյանք դարձած
Միակ սե՛ քս, սե՛ րն իմ, ավա դ...
Եվ ժպտացին մարդիկ ինձ պաղ,
Ընդունեցին զոհն իմ արած այնքա՛ն հանգիստ,
Այնքա՛ն խաղաղ...
Ու խժռեցին զոհությամբ ժանտ...
Եվ երբ կյանքն ինձ պատժեց շատ խիստ՝
Դնելով մատն իմ վերքին բաց,
Ես էլ արդեն ինձ ոչ մի կերպ չներեցի...
Է՛հ, ի՞նչ արած,
Որ ես հիմա թոչուն եմ խենթ ու թևաթափ,
Սլացքիս մեջ՝ ջարդված մի նետ,

Չծնված երգ, չորացած շամբ...

Էլի ես մարդ գտնվեցի մարդկանց հանդեպ,
Բայց մարդ չեղա՝ իմ նկատմամբ...

ՀՈՒՇԸ

Զնգաց հուշն անցյալի
Ու մերկ կանգնեց իմ դեմ՝
Ժպիտներով ծավի,
Թովչանքներով եղեմ:

Եվ ծածանվեց, ծփաց
Շղարշային սյուքով,
Մխաց աչքերով թաց,
Քրքիջով ու սուգով:

Իր գիրկն առավ նա ինձ՝
Արևային ու տաք,
Սիրտս փլվեց մեկից,
Արտասվեցի անհագ:

Կարոտներիս ուժով
Ես փարվեցի նրան.
Լցվեց թախծի մուժով
Հոգիս անհանգրվան:

Թվաց՝ գրվեցի վառ
Տարիներիս բույրը.
Զգացի իմ խելառ
Զահելության բույրը:

Չուներ ոչ հոգս, ո՛չ բեռ
Աղջկական ուսին,
Վրան մնում էր դեռ
Երջանկության փոշին:

Իրավ, չքնա՛ղ էր նա
Ինձնից իր տարածով...
Եվ շողում է հիմա
Հպարտ՝ իր արածով...

Առաջվա պես, սակայն,
Չի տարբերվում կույրից.
Ջուրկ է մինչև անգամ
Խոհեմության թույրից...

Թե չէ չէր գա ինձ մոտ,
Չէր հայտնվի հանկարծ,
Չէր բորբոքի կարոտ՝
Հրե շապիկ հագած...

Թե չէ աստղերն իր պերճ՝
Աչքերն իր հոգեհան,
Չէր սեպի սրտիս մեջ
Սուրսայր շեղբի նման...

Ա՛խ, ՄԱՐԴԻԿ
Բալենին ճերմակաքող
Լողում է ծաղկանց լույսի մեջ...
Սրտումս՝ սերն ամոքող,
Ապրում եմ քաղցր հուշի մեջ...
Ա՛խ, մարդի՛կ, բախտն իրական
Փնտրում եք փողի, ուժի մեջ...
Սերն Աստծո՛ հար տիրական,
Կորցնում եք կյանքի մուժի մեջ...

ԲԱԽՏԻՍ ՁԵՌՔԻՆ
Իմ կյանքից ի՞նչ հասկացա.
Ո՛չ թիթեռ եղա, ո՛չ ՝ ծաղիկ...
Ուշ եկա, շուտ անց կացա,

Սրտումս՝ լոկ սեր ու տաղիկ...
Իմ ճամփին չեղան գորգեր.
Չոր քար էր կամ էլ՝ կոշտ թաղիք,
Չորս կողմս՝ օձ ու գորտեր...
Ես՝ բախտիս ձեռքին խաղալիք...

ՈՒՌԵՆԻՆ

Առվի ափին է ծնվել ուռենին,
Վարսերը՝ կանաչ, ճոխ ջրիմուռներ.
Ափի չոր քարը, ընկած կոճղը հին
Սրտապնդել են, որ ջահել է դեռ...

Առվի ափին է սնվել ուռենին,
Իրեն ճանաչել առվի ջրերում,
Սեթնեթել է՝ ինչպես սիրուն կին,
Հերարձակ պարել սիրո հրերում...

Առվի ափին է ծնկել ուռենին,
Երբ մի օր աշնան պաղ հողմն է փլել,
Լացել, որ իրեն է՛լ չեն տալիս գին,
Հեռացող հովի ոտքն է պաշպչել...

Առվի ափին է ընկել ուռենին,
Երբ էլ սեր չկար, և չկար է՛լ սիրտ...
Ափի չոր քարը, ընկած կոճղը հին
Քրքջացե՛լ են անտարբեր ու բիրտ...

ՓՈՐՉՈՒԹՅՈՒՆ

Նվում է հոգիս ցավից,
Իսկ միտքս անդող գործում է.
Փոթորի՛կ մի նոր... այն ինձ
Վերստին, ասես, փորձում է...
Տեսնում է, որ ես անթեք
Կանգնած եմ իր դեմ... կոծում է,

Թունածոր խոսքն է սուր տեգ.
Իմ խաչված սիրտը խոցում է...
Եվ հիմա ոտքից գլուխ
Խեղճ հոգիս հուր ու բոցում է...
Իսկ Աստված ցնծում է. «Ո՛ւիս,
Սրբացա՛վ մեկն էլ...», օծում է...

ՀՈԳՈՒՄ ԿՐԱԿԸ

Այյուրի նման ձյունը մաղվում է
Գիշեր ու ցերեկ,
Հոգիս սոճու պես փշաքաղվում է՝
Կանգնած մորեմերկ...

Առատությունն այս չի հագեցնում ինձ,
Այլ վախեցնում է,
Սրտիս խութերը հարթում է քիչ-քիչ
Ու պաղեցնում է...

Ձյան արձակ բաշը պեծին է տալիս,
Ճերմակ նժույգ է...
Հոգիս խնդում է ու հետն էլ լալիս.
Լուսնոտ գժուկ է...

Որտե՞ղ է նրա հանգրվանը լույս.
Այստե՞ղ, թե՞ այնտեղ...
Ձյունե շղարջն է ճերմակ խրախույս
Կրակին անթեղ...

Հոգուս կրակը կոստնի մի օր
Ու թներ կառնի...
Տիեզերքի մեջ երբ մխրճվի խոր՝
Աստվա ծ կհառնի...

ՆՈՐԻՑ ԵԿԵԼ ԵՍ

«Ղու նորից եկել էս, ի՞նչ անեմ...»:

ՂԵՎ

Տարիներն անցած, ասես, հրաշքով
Հառնել են մութից ու գտել են ինձ.
Նրանց համը ես զգում եմ մաշկով,
Նրանց բույրը սոսկ ցավ է ու կսկիծ...

Որտեղի՞ց, արդյոք, հետ եկան նրանք,
Հավերժի նիրհից ինչպե՞ս արթնացան...
Հրաշք օրերն ու վայրկյանները թանկ
Հրավառվեցին՝ որպես ծիածան...

Ես գիտե՛մ, գիտե՛մ՝ ինչպե՛ս դա եղավ.
Նորից այդ դո՛ւ ես եկել քո հեռվից,
Նորից խառնել ես խնդությունն ու ցավ,
Բախտս կախել ես սիրո հին կեռից...

Նորից եկել էս, նորից ինձ գտել,
Նորից գերել ես ուզում իմ հոգին...
Բայց անկարող է իմ սիրտը ստել.
Սիրո խոսքերիդ է՛լ չի տալիս գին...

Նորից եկել էս... հիմա ի՞նչ անեմ...
Ես ինչպե՞ս լեզու գտնեմ սրտիս հետ.
Սիրտս քո սիրուն քվեարկում է դեմ
Եվ իր թիկ-թակով դնում վերջակետ...

ՉԵՄ ԿԱՐՈՂ

Շա՛տ թանկ է իմ այս հողը.
Նրան իմ սերն եմ պահ տվել,
Զգացել սիրո դողը,
Առաջին համբույրից թնել...

Ինչե՛ր եմ ապրել այստեղ՝
Չեմ կարող հիմա ես թվել...

Իմ հողն է ինձ տունուտեղ.
Իմ տնից չե՛մ կարող չվել...

ԱՇՈՒՆՍ

Աշունս ինձ վաղ գտավ...
Ա իս, ո՛ր ւր էր՝ հետ գար գարունս,
Սիրտս խենթացներ մի լավ,
Եռացներ նորից արյունս...
Փոթորկեր կյանքս նորից,
Հետ շրջեր, փոխեր լայն հունս,
Սեր ու խինդ պարզներ ինձ,
Փոխարենն առներ և քունս...
Բայց, ավա՛ղ, ասում է «ոչ»՝
Գլխիս տեր դարձած աշունս...
Իր կյանքի աշունն անկոչ
Չտեսնե՛ր մինչև իսկ շունս...

Ո՞ՒՐ ՓԱԽՉԵՄ

Սիրտս նեղված է կրկին.
Դարիս պես խառնակ, անքուն է,
Երգս տխուր է, խրթին,
Իսկ միտքս մոլոր, անտուն է...
Աստվա՛ծ, մի ճամփա ցույց տուր.
Ո՞ւր փախչեմ... իմ ցավն անհուն է,
Սերն ինձ թողեց լոկ մրմուռ.
Իմ անսեր հոգում աշո՛ւն է...

ԵՐԿՆԱՅԻՆ ՍԵՐ

Արթուն եմ այս տարաժամին...
Մորփեռոսն ինձ չի համբուրում.
Այս գիշերն էլ՝ անհամ ու սին,
Հին հուշեր ու սեր է բուրում...

Երազանքիս թներով նուրբ

Սավառնում եմ երկինքն ի վեր.
«Տեր, ահա՛ քեզ կնդրուկ ու խունկ.
Շնորհի՛ր ինձ երկնային սեր...»...

Ես չիմացա՝ աղերսն իմ ջերմ
Բարձրյալին հասա՞վ, արդյոք,
Բայց ականջիս հնչեց շատ մեղմ.
«Սեր կունենաս, եղի՛ր անհոգ...

Միայն թե դու զգոն եղի՛ր.
Անփույթ չանցնե՛ս սիրուդ կողքով,
Հազարի մեջ նրան պեղի՛ր,
Ում կսիրես ամբողջ հոգով...

Մի՛րի՛ր սերդ՝ ինչպես որ ինձ,
Աստվածացրու, որ հավերժի...
Այնժամ կօրհնեմ ձեզ երկնքից.
Անուշ քունն էլ քեզ չի մերժի...»...

ՑՆԾՈՒՄ Է ՀՈԳԻՍ
Գարունն իր իրավունքն է
Ամպրոպ-կոկորդով հաստատում,
Իր թուխպն աչքն ու ունքն է
Խաղացնում, հազար նազ թափում...
Զարթնել է սիրտն իմ կրկին,
Ցնծում է հոգիս, խաս կապում,
Սերն իմ դարձնում է ինձ կին
Եվ անմահություն վաստակում...

ՄԻՐՏՍ
Ցաված սիրտս վիշտ է թնդած.
Արցունքում է մաղի՛կ-մաղի՛կ,
Հույսն այցելեց, սիրտս խնդաց.
Արևում է շաղի՛կ-շաղի՛կ:
Սիրտս դարձավ սեր-հավքի բույն.

Գարունքվել է ծաղի՛կ-ծաղի՛կ,
Միրտս կյանքն է հազարագույն,
Երգ երգոց է տաղի՛կ-տաղի՛կ...

ԿԱՅԾԱԿ ԷՐ

Կայծակի շեղբը շողաց
Ու պատռեց կուրծքը մայր հողի.
Ժայռի թաց շուրթը դողաց,
Խուլ տնքաց վերքից իր կողի...
Կայծակ էր. ճայթեց և վերջ.
Ժայռի ցավն արդեն կթողնի...
Իմ սիրտն էլ սե՛րը շանթեց,
Եվ ցավը փոխվեց երգ-շողի...

ՄԵՐ ՆՍՏԱՐԱՆԸ

Գարունքված այգին ձեռքով արեց ինձ.
«Է՛լ բավ է մենակ փակվես քո տանը,
Դո՛ւրս եկ և արի՛ իմ գիրկը թովիչ.
Թափուր է կանաչ իմ նստարանը...»:

Գարունքված սրտով ես այգի մտա,
Զգացի կյանքի զարթոնքի համը,
Ծաղկած ծառուղում սերն իմ ես գտա,
Եվ երջանկացա վ հին նստարանը...

Ջերմ գրուցեցինք խնձորենու տակ.
Այն դարձավ սիրո մեր զառ վրանը...
Միմյանց բացեցինք սրտերը մեր փակ.
Հրճվանքից դողա ց մեր նստարանը...

Աստճո՞ւց էր սերը մեր նորաբողբոջ,
Որ մեզ հասցրեց բախտի դռանը,
Մեր սերը կնքվեց համբույրով դողդոջ.
Մեզ հետ կրակվե՛ց ծեր նստարանը...

Տարիներ անցան՝ սիրով երջանիկ...
Բայց մեզ բաժանեց կյանքի դարանը.
Չյուն նստեց գլխիս՝ հանց ճերմակ պարիկ...
Հիմա մրտ ու է մեր նստարանը...

ՔԱՄԻ Է ԱՆՈՒՄ

Ճոճվում են այգու ծառերը.
Հարբած չեն. քամի է անում...
Թափվում են անվերջ բառերը.
Լարված եմ. քամի է անում...
Անհաստատ սերդ իմ սրտին
Հարված է. քամի է անում...
Պետք չէ, տեղ չկա է՛լ ստին.
Վառված եմ. քամի է անում...

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՐԳԵՑ

Որտեղ կա ծաղիկ, այնտեղ էլ՝ մեղու.
Միմյանց համար են երկուսն էլ ծնվել...
Որտեղ հայ երգն էր, այնտեղ էիր դու.
Հայոց երգով էր քո հոգին սնվել...

Երբ երգն էր հնչում, վերանում էիր
Աշխարհի բոլոր վիշտ ու ցավերից,
Երգի թևերով հեռանում էիր
Հոգսերից օրվա, կյանքի դավերից...

Անուշ երգերից հրճվում էիր շատ,
Սավառնում Աստծո տիրույթում լուսե...
Այսօր իմ սիրտն է խփվում պատեպատ.
Ուղղել է ուզում բախտի ճամփան շեղ...

Իմ սիրող սիրտը, որ գիտի երգել,
Ինչո՞ւ գեթ մի օր չերգեց քեզ մոտ,

Ի՞նչ է՝ զլացա՞վ երգով քեզ տալ սեր.
Իր ներսում իսեղդեց երգ, սեր ու կարոտ...

Ինչո՞ւ չերգեց սիրտն իմ քեզ համար,
Ուզեց՝ քո սի՞րտն էլ իր պես տառապի...
Երբ երգեց, ավա՛ղ, երգն էր անբարբառ.
Այն հնչեց՝ ինչպես երգը կարապի...

ՄԻՐԵԼԻՍ

Շունչդ ինչո՞ւ է այդքան
Ճնշող ու ծանր, սիրելի՛ս,
Ինչ-որ սխալներ թե կան՝
Անմեղ են, մանր, սիրելի՛ս,
Թե կան խճճված հարցեր՝
Ե՛կ լինենք սանր, սիրելի՛ս,
Սրտով չդառնանք կարծր,
Խորթացած, համր, սիրելի՛ս...

ՀՐԱՇՔ ՍԵՐ

Այս գիշերն անցներ արթուն,
Վառ լուսին լիներ ու աստղեր,
Մեր լիներ՝ թեկուզ և հում,
Իսկ շուրջս՝ արտեր, շեկ հասկեր...
Մինչ ի լոզս համբույրներից
Մեր սերը սրտիս պես հասներ,
Աստծո լույսն իջներ վերից,
Օրն արև դառնար ու խաս սեր...
Մեր հրաշք սիրո մասին
Հյուսվեին երգեր ու ասքեր,
Է՛լ կյանքն այս չլիներ սին.
Ասեի այդժամ. «Դու կաս, Տե՛ր...»:

ԵՐԱԶՈՒՄ

Երագում նորից եկար
Այն հեռու և թանկ օրերից.
Նայեցիր դու ինձ երկար,
Չայնեցիր, ասես, ձորերից...
Հին սերն էր հուրհրատում
Աչքերիդ մթին հորերից.
«Պատմի՛ր ինձ,- խնդրեցիր դու,-
Քո սիրո արտի լորերից...»:

ԱՅՆ, ԻՆՉ ԵՂԱՎ

Այն, ինչ եղավ, տարավ ինձնից.
Հաստա՛տ, շատ էր, ո՛չ երբեք քիչ,
Կյանքս դարձավ սովեր դողդոջ,
Ո՛չ մեռած եմ և ո՛չ էլ ողջ...

Զարկեց, անցավ սրտիս միջով.
Չէ՛, չսթափվեց հոգուս ճիչով,
Կյանքս արեց տակնուվրա.
Այն նմանվեց ցավի նռան...

Ճաքեց, արնեց սրտիս նուռը,
Ինձ հավաքեց կյանքն իր բուռը,
Ասաց. «Ցավդ պահի՛ր քո մեջ.
Մի՛ թող խժռի քեզ մինչև վերջ...

Պեղի՛ր քո մեջ ժպիտդ ջինջ,
Բաշխի՛ր մարդկանց, բաշխի՛ր և ինձ.
Թո՛ղ այն շողա՛ ինչպես արփին,
Եվ քո սիրտն էլ սիրուց արբի...»

Հավատա՛ դու՝ այն, ինչ եղավ,
Դա՛ էլ կանցնի՝ որպես սև դավ,
Թա՛ փ տուր դու քեզ, ժպտա՛ նորից,
Մոխրից հառնի՛ր, թևի՛ր դու ինձ...»:

ՔԵԶ ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵՄ

Դու, ավա՛ղ, չկաս արդեն,
Ամենուր, սակայն, ինձ հետ ես,
Խառնել եմ դժոխք-երես.
Ինձ խոցող վշտի սուր նետ ես:
Ճզմեց ինձ հոգուս ցավը.
Կարոտիս կանչին անգետ ես,
Խորտակվեց բախտիս նավը.
Քեզ ինչպե՞ս գտնեմ՝ անհետ ես...

ԿԻՍՍՏ -ՊՌԱՏ...

Քո կորստի անլուր ցավը
Ինձ չի լքում զօր ու գիշեր.
Ինչո՞ւ լարեց կյանքն այս դավը,
Ինչո՞ւ փշրեց թե՛ բախտ, թե՛ սեր...

Երբ դու կայիր, կայի ես,
Արև էի ես մի ամբողջ...
Հիմա կես կայծ, ճրագ եմ կես,
Թուխպ եմ ես սուտ անձրևակոչ...
Կիսատ-պռատ կյանքն այս հիմար
Քարշ եմ տալիս հնոտու պես,
Պատրաստ եմ ես ասել հիմա
Օտար մեկին. «Կուգե՛ս՝ տամ քեզ...»...

ԱՅՅԵԼԵՑԻՐ

Այս գիշեր ինձ վերստին
Որպես երագ այցելեցիր,
Տեղ չկար քեն ու ստին.
Դու ջինջ ու պարզ այցելեցիր...
Ցնծում էր հոգիս խինդով.
Դրախտի մաս՝ այցելեցիր,
Աստված էր նայում խանդով.

Հանց բախտ անհաս այցելեցիր...

ՍՈՒՏ Է, ՈՐ ՉԿԱՍ

Որքան մոտ ես ինձ, այնքան հեռու ես,
Որքան ինձ հետ ես, այնքան էլ՝ բաժան,
Կարոտիդ լավան իմ մեջ եռում է,
Սիրոս հալեցնում հրով իր դաժան...

Այրվում է սիրոս, նվաղում ցավից,
Հուշերիս պարսը բզզում է անվերջ.
Ամեն մի պահը ապրեցնում է ինձ,
Մի փշուր հուշն իսկ ապրում է իմ մեջ...

Սուտ է, որ չկաս, էլ չես լինելու...
Ես չեմ հավատում անգոյությունդ.
Հապա ինչպե՞ս եմ ես այսքան հլու՝
Ապրում քեզանով, լսում եմ ձայնդ...

Ամե՛ն, ամե՛ն ինչ հիշեցնում է քեզ.
Մի փոքրիկ իրն իսկ քո բույրն է կրում...
Մե՛կ տեսիլք ես, մե՛կ՝ մորենի անկեզ,
Աստղի նման ես իմ մեջ հուրհրում...

Կենաց աղբյուրը թող անկանգ հոսի.
Մեր սերն անապակ այդ աղբյուրն է ջինջ,
Թո՛ղ սրտերի հետ այն հավերժ խոսի,
Մեծ սիրով լցնի հոգիներն աննինջ...

Է՛Ն ՉԻ ԳԱ

Օրերը կարճացել են.
Արևը մեզ շուտ լքում է...
Այս ճամփան, որ լացել է,
Ինձ նման հիմա նկուն է...
Իմ արև սերն է՛լ չի գա՝

Այս ճամփով, որն ինձ ձգում է...
Ինձ համար է՛լ սեր չկա.
Անարև սիրտս սգում է...

ԱՉՔՍ ԴԵՌ ԹԱՅ Է
Մենակ եմ քեզնից հետո.
Իմ տան մեջ տխուր փակված եմ...
Տարիներն անկանգ երթով
Անցնում են... աչքս դեռ թաց է...
Իմ սրտում ապրում ես, կաս,
Հուշերիս դուռը միշտ բաց է...
Երագում երբ էլ դու գաս,
Ինձ համար լույսդ սուրբ հաց է...

ՀԻՄԱ ԻՆՁ ԿԱՍԵ՞Ս
Առաջին օրն իսկ՝
Իմ՝ արյուն լացող սրտի կակիծով
Զգացի շատ խիստ
Անդարձ կորստիդ խոր ցավը կիզող...

Քեզանից հետո
Իմ կյանքը դարձավ անլույս ու անգույն,
Եվ դանդաղ, հերթով
Անցան տարիներ՝ ուղտերի հանգույն...

Իսկ այսօր, սակայն,
Երբ ես ճամփան իմ անցնում եմ մենակ,
Կորստիդ ցավն այն
Դարձել է շուրջն իմ մոլեգնող կրակ...

Կյանքում է՛լ ոչինչ
Ինձ չի հմայում, հուշերն այրում են...
Պատժո՞ւմ է բախտն ինձ,
Թե՞ կյանք շնորհում, սիրտս արնում է...

Օդ ու ջրի պէս
Իմ ամեն պահի, մասնիկի մեջ կաս...
Հիմա ինձ կասե՞ս՝
Ինչի՞ց է, որ դու ինձ դարձար անհաս...

ԵՍ ՔՈ ԿԵՍՆ ԷԻ...
Իմ երազի մեջ մի հավք էր թռչում,
Մի թևը՝ կարմիր, մյուսը՝ կանաչ...
Աստված կանչեցի, դարձա զառ թռչուն,
Շողարձակելով թևեցի առաջ...

Ուզեցի հասնել այդ հրաշք հավքին,
Վերստին գտնել կանաչ-կարմիր սեր...
Հավքն այդ վեր թևեց և ասաց. «Անգի՛ն,
Լավ կանես՝ ինձ հետ չկապես հույսեր...

Ես քո կեսն էի՝ սերն աստվածատուր,
Իմ երկու թևն էլ գմբուխտ էր շքեղ...
Բայց երբ հարվածեց ինձ բախտը հավկուր,
Թես արնոտեց՝ հոգուս պէս անմեղ...

Ես հեռանում եմ, մի՛ փնտրիր դու ինձ
Եվ մի՛ խաբվիր այս կանաչ-կարմիրին.
Մեկ թևով հավքը գուրկ է թռիչքից,
Կես սերն էլ սեր չէ... հավատա՛, սեր իմ...»:

ԻՆՁՆԻՑ ԱՆԿԱԽ
Մե՛ր իմ, անգի՛նս, հիմա ինձ ասա՛՜
Ապրո՞ւմ եմ, արդո՞ք, քեզանից հետո,
Որտե՞ղ էի ես և որտե՞ղ հասա...
Մինչդեռ տարիներն անցնում են հերթով...

Բայց ինչ էլ լինի՝ դու իմ կյանքում կաս,

Դու ավելի՛ կաս, քան՝ ինքս, գուցե...
Մի հուշն իսկ կյանքս դարձնում է երազ,
Առանց քեզ՝ հոգիս մութ բանտախուց է...

Կյանքի քմա՞յք է, թե՞ Բախտի չար խաղ.
Հուսախաբ եղած՝ ես որքա՞ն լացեմ,
Երբ գիշերները, ա՛խ, ինձնից անկախ,
Ձեռքս տանում եմ, որ... մեջքդ ծածկեմ...

ԻՆՁ ՀԵՏ ԵՍ

Երազ էր, անցավ, գնաց,
Արև էր. հանգեց մեր սերը,
Իմ հոգում լույսը մնաց.
Տաք բուն հյուսեցին հուշերը...
Կողքիս չես, բայց ինձ հետ ես.
Անմար են սիրուս լույսերը...
Հավերժում աստղակետ ես.
Անարմատ են իմ հույսերը...

ԲԱԽՏԻ ՇՆՈՐՀ

Մերն, ավա՛դ, գտավ ինձ ուշ,
Ի՛նչ նվեր... ինձ շատ թանկ տրվեց,
Թվում էր՝ վարդ է քնքուշ,
Բայց փուշը որպես ճանկ սրվեց...
Վայելքը սիրո՝ մի պուտ.
Պարտեզը հոգուս չջրվեց,
Ցավերիս բեռը՝ յոթ փութ.
Սրտիս վրա հանց լեռ դրվեց...
Իմ սերը երգ էր ու վերք,
Բախտի շնորհ էր, որ արվեց,
Եվ, որպես լույսի շքերթ,
Իմ սիրո մատյանն այս գրվեց...

ԻՆՉՊԵՍ...

Ինչպե՞ս և ցրեմ այս տաղտուկը,
Այս թախիծը ինչպե՞ս ցրեմ,
Ինչպե՞ս սրբեմ օրվա թուփը
Եվ նախատինքն ինչպե՞ս ջրեմ...

Բաց թողեցի սանձն իմ ձեռքից
Նժույգ դարձած ժամանակի.
Լույս արյուն է կաթում երգից.
Հոգուս վերքը ո՞վ կփակի...

Իր թևով էր թռել ինձ մոտ
Հրաշք բախտի հավքը կապույտ.
Չբռնեցի՛ ... ինձ բյո՛ւր ամոթ...
Եվ նա նորից թնեց անփույթ...

Ինձ մի փետուր միայն թողեց՝
Որպես վառ հուշ թռած բախտի...
Ե՛ս, թե՛ Աստված բախտն իմ հողեց,
Եվ ինձ նոր բախտ ո՞վ կմաղթի...

Ինչպե՞ս և կրեմ հոգուս ցավը,
Վշտիս շապիկն ինչպե՞ս և կրեմ,
Ինչպե՞ս լցնեմ կյանքիս գավը,
Բախտիս շիրմին ես ի՞նչ գրեմ...

ԲԱՆՏԱԽԱՆԴ

Չար բախտն իմ գլխին շատ խաղեր խաղաց.
Ե՛վ կարկուտ տեղաց, ն՛ էրկանք աղաց...
Ինձ միշտ խոստացավ, բայց խոսքը դրժեց,
Իր մի ժպիտն ու սերը ինձ մերժեց...

Բայց բախտս բերեց այդ բախտախաղում.
(Իրավ, հաղթո՞ղն է վերջում ծիծաղում),
Ես քեզ շահեցի, իսկ բախտը՝ ոչինչ,

Հիմա բա՛խտն անգամ նախանձո՛ւմ է ինձ...

ԱՆՀՈԳ ԵՆ

Ապրի՛ր քո օրն ու տարին.
Թող քնքշանք բուրեն բառերը,
Արարի՛ր սերն ու բարին.
Սրտերում հալվեն քարերը...
Հավա՛տդ պարզի՛ր ի բաց
Եվ նետի՛ր բախտի՛դ զառերը...
Ո՛վ եկավ և ո՛վ գնաց՝
Անհո՛գ են անցնող դարերը...